

ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԸ ԽՐԱՏՈՒՄ ԵՆ



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՐԵՎԱՆ 2003

ՆԱԽԱԲԱՆ

«Նա, ով չի նորոգում և բարձրացնում նախնիների առաքինությունը, նա ամոթ ու նախատինք է իր պապերի համար և մի նոր անձոք» (Սիրաք 20:28): Եթե մարմնավոր հայրերի խրատներն այդքան անհրաժեշտ է սերունդներ կրթելու համար, առավել ևս մեր ժողովրդի համար է կենսական եկեղեցու սուրբ հայրերի հոգևոր խրատներն ու հորդորները, առանց որի ազգը տատասկ կբռնի, ինչի պատճառով կռիվներն ու բաժանումները, ամենեղ արյունն ու թշնամությունները անպակաս կլինեն: Եվ ոչ միայն այլև ազգը կվերածվի չար աղանդավորներով վխտացող մի ժողովրդի, որոնք անմտաբար, կամ հանդգնաբար կանարգեն մեր նախնի սրբերի խնկելի հիշատակները, որոնց աղոթքներով ու ջանքերով հայոց ազգը ապրեց բարբարոս ու վայրենաբարո ցեղերի հարևանությամբ, մնալով իր հողում, հավատարիմ իր հավատին ու իր լեզվին, մինչդեռ պատմության փոշոտ խաչմերուկներում մեզանից ավելի զորավոր կարծվածները ընկան ու մոռացվեցին ցայսօր:

Եվ այս գրքի հրատարակության նպատակը մեկն է. հայոց լուսահավատ, ազնվալեզու սուրբ հայրերի բարեխոսությամբ ու օգնությամբ հոգեկործան որոմներից ու փշերից մեր ազգը մաքրելը, նորատունկ հոգիների պարարտացնելը մեր նախնիների կենարար խրատներով, որոնց աղբյուրը զուլալ է ակնվանիի ման, քանզի բխում է սուրբ Գրքի խորախորհուրդ ընդերքներից, ինչպես որ գրված է. **«Աստժնչով գրված ամեն գիրք օգտակար է ուսուցման, հանդի-մանության, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար, որպեսզի Աստժո մարդը լինի կատարյալ ու պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար»** (Բ. Տիմոթեոս 3:16,17):

Մ Ե Յ Ր Ո Ւ Ժ Ա Ն Բ Ա Բ Ա Ջ Ա Ն Յ Ա Ն

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկա ժողովածուն ընդգրկում է հայ եկեղեցու հինգ մեծանուն հայրերի՝ Գրիգոր Ավագ Վկայասերի, Յովհաննես Գառնեցու, Վարդան Այգեկցու, Գևորգ Սկևռացու և Յովհաննես Երզնկացի-Պլուզի խրատները: Լինելով միջնադարում լայնորեն տարածված մատենագրության տեսակներից մեկը՝ խրատն իր մեջ առավել խորությամբ ներկայացնում է հոգևոր պատգամը, աստվածպաշտական դարավոր հրահանգը: Խրատի նպատակն է բարոյացնել անհատին, նրան առաջնորդել հոգևոր կյանքի բավիղներով դեպ Աստված: Խրատում դրսևորվում է ոչ միայն խրատատուի կրոնական հարուստ կենսափորձը, այլև այն ընթերցողին կամ ունկնդրին փոխանցելու ազնիվ մղումն ու պատրաստականությունը: Քրիստոնեական խրատի գլխավոր ակունքը Աստվածաշունչն է, որն իբրև բացարձակ հայտնություն ադամորդուն ուսուցանում է Աստծուն մերձեցնելու, Աստծո հետ հարաբերվելու կերպը, թելադրում հավիտենական արժեքներով ապրելու դեղատոմս: Սակայն աստվածադիր հրահանգները խրատում արտացոլված են ոչ թե հորդորների սոսկման արձանագրումով. այստեղ դրանք զգեստավորված են խրատատու հեղինակի առումին փորձառությամբ, ընդելուզված քրիստոնեական խրատագրության ավանդներով: Ներկայացվող խրատների մի մասն ունի ընդհանուր բարոյաբանական ուղղվածություն, մյուսը՝ մասնավոր (կենցաղի մաքրության, ապաշխարության, խոստովանության, ս. Յաղոթության, պահքի, աղոթքի կարևորությունը և հայիոյանքի մերժելիությունը շեշտող հորդորներ և այլն):

Գրիգոր Ավագ Վկայասերը զավակն է հայ քաղաքական, մշակութային մտքի պատմության մեջ չափազանց կարևոր դեր կատարած Գրիգոր Մագիստրոսի, որի ձեռքի տակ էլ ստանում է պատշաճ կրթու-

թյուն և դաստիարակություն: Իր մեջ զգալով բուռն հակում կրոնավորական կյանքի նկատմամբ՝ հրաժարվում է ամուսնությունից, դառնում վանական և ավագանի Վահրամ անունը փոխելով ընդունում Գրիգորը: Խաչիկ կաթողիկոսի մահից հետո, տեղի տալով հայ իշխանների պահանջին, **1065 թ.** հանձն է առնում կաթողիկոսական պաշտոնը: **1074-1084 թթ.** նա ուխտավորաբար գտնվում է Կ. Պոլսում, Յոննում, Եգիպտոսում, **1099 թ.** այցելում Երուսաղեմ: Կյանքի վերջին տարիներին ճգնում է Սև լեռան վանքերում, Պառլահոյի, Արեգի անապատներում և այլուր: **1105 թ.** տեղափոխվում է Քեսուհի Կարմիր վանքը, ուր և կնքում իր մահկանացուն: Իր Վկայասեր պատվանունը նա ստացել է սրբոց վարքերի և վկայաբանությունների հանդեպ ցուցաբերած մասնավոր սիրո, նրանց տոները աստվածաշնչական ընթերցումներով ճոխացնելու պատճառով: Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը աչքի է ընկել իբրև պատվիրատու և հովանավոր սրբախոսական և մեկնաբանական երկերի հայերեն թարգմանության: Նրա հրահանգով հայացվել են Ս. Յովհան Ոսկեբերանի, Ս. Եփրեմ Ասորու, Ս. Գրիգոր Աստվածաբանի և այլոց վարքերը, ինչպես նաև՝ Ոսկեբերանի Գործք առաքելոցի և Յովհաննու Ավետարանի մեկնությունները: Նրա նախածնունդամբ է խմբագրվել Տոնամակ-Յայսմավուրքը, ճաշոց ծխամատյանի մի զգալի մասը: Գրիգոր Վկայասերի փոքրաթիվ ինքնուրույն երկերի մեջ մասնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում խրատները (Ա-Դ), որոնք նվիրված են հոգևոր արթնությանն ու աղոթասիրությանը (Ա), պարկեշտությանն (Բ) ու աղքատասիրությանը (Գ), վայելուչ կենցաղավարությանն ու տերունական օրվան՝ կիրակիին տրվելիք մեծարանքին (Դ) և այլն: Վկայասերի խրատների աշխարհաբար թարգմանությունն իրականացված է համաձայն Մաշտոցի անվ. Մատենադարանի հետևյալ ձեռագրերի Ա՝ թիվ 8029, թ. 40բ-46բ (նորին Գրիգորիսի եւ

Վկայասիրի եղբար Ներսիսի հայոց), Բ՝ թիվ 8029, թ. 47ա-49բ (**Նորին Գրիգորիսի ասացեալ բան խրատու հոգւոյ**), Գ՝ թիվ 8030, թ. 390ա-399ա (Թուղթ վասն մխիթարութեան աղքատաց ի Գրիգորիսէ)՝, Դ՝ թիվ 8030, թ. 410ա - 422ա (*խրատք վարուց եւ կենաց եւ պատուէրք եւ քարոզ վասն յիշոցաց եւ վասն կիրակէի բանին առնելոյ ասացեալ Գրիգորիսի յայտնեալ նմայ յԱստուծոյ եւ յամենայն սրբոց*):

Յովհաննես Գառնեցի XII-XIII դդ. հեղինակ է: Տակավին վաղ տարիքից նա դառնում է Այրիվանքի (այժմ Գեղարդավանք) միաբան, աչքի ընկնում անապատական ճգնակեցությանը, մաքրամաքուր կենցաղավարությամբ, աղոթասիրությամբ, հրաշագործ բժշկություններ կատարելու բացառիկ շնորհքով: Յովհաննես վարդապետը **1222-1223 թթ.** ուխտավորաբար գտնվում է Երուսաղեմում, այցելում սուրբ վայրերը, Յորդանան գետում հրաշքով մկրտում երեք այլազգիների: Շուտով նրա սրբության և հրաշագործությունների համբավը տարածվում է ամենուրեք: Յոննկլայուն (Կիլիկիա) եղած ժամանակ Կոստանդին կաթողիկոսի (**1221-1267**) հրավերով բնակություն է հաստատում այնտեղ և իր մահկանացուն կնքում այդ ամրոցում: Գառնեցու թողած մատենագրական վաստակի մեջ դրսևորվում է ճգնակյաց հոգևորականը: Այդ է պատճառը, որ նրա ժառանգության մեջ գերակշիռ տեղ են զբաղեցնում աղոթքները, տեսիլքները, խրատները, որոնք շարադրված են կրոնական անկեղծ հուզումով, իր (ադամորդու) մեղավորության հըստակ գիտակցությամբ, անդենական կյանքին ուղղված մտասևեռումով. բաներ, որոնք Յովհաննես վարդապետին դարձնում են ս. Եփրեմի ճգնական մատենագրության հավատարիմ ժառանգորդը: Ժողովածուի մեջ ընդգրկված է Յովհաննես Գառնեցու երկու խրատների աշխարհաբար թարգմանությունը, որոնցից մեկը՝ Ե՝ **Երանելոյն Գառնեցոյն Յովհաննեսի բան շահաւէտ եւ օգտակար ամենայն մարդկան** կատարված է Մաշ-

տոցի անվ. Մատենադարանի թիվ 941 (թ. 37ա-39ա) ձեռագրի հիման վրա, իսկ մյուսը՝ **Զ՝ Սիրոյ իօրն Յովհաննիսի Գառնեցոյ ասացեալ խրատ կրօնաւորաց**, համաձայն Ն. Եպս. Ծովականի (Պողոտյան) իրականացրած հրատարակության. «Սիփն», 1953, նոյեմբ.-դեկտ., էջ 318-321:

Վարդան Այգեկցին, որ հայ ընթերցողին առավելապես հայտնի է իր առակներով, հայ մատենագրության կիլիկյան դպրոցի խոշորագույն դեմքերից մեկն է: Ծնվել է Մարաթայում, որը գտնվում էր Ասորիքի Դուք գավառում: Ուսանել է Արքակաղինում, **1210 թ.** հաստատվել է Սև լեռների վրա գտնվող Այգեկ վանքում, ուր և շարադրել է երկերի մի զգալի մասը: Այլևայլ աշխատություններից գատ Այգեկցին հեղինակ է նաև խրատների: Պաղտին իշխանի պատվերով գրած նրա խրատական ճառերի աշխարհաբար թարգմանությունը, որ կատարել է Տ. Շահե քին. Հայրապետյանը (Երևան, 1999), լայն ընդունելության արժանացավ հայ ընթերցողների կողմից: Սա ինքնին ցույց է տալիս, որ այդ խրատներն այսօր ևս իրենց կարևոր մասնակցությունն են բերում հասարակության հոգևոր շինությանը, քրիստոնեական նկարագրի վերակերտումին: Այս հանգամանքը առաջնորդեց տողերիս հեղինակին ձեռնարկել Վարդան Այգեկցու մյուս խրատների թարգմանությանը: Ժողովածուիս մեջ զետեղված Վարդանյան խրատները (Է-Թ) վերաբերում են հավատքին, քրիստոնեական գանազան առաքինություններին (խոնարհություն, համբերություն, սակավապետություն, չափավորություն, հավատարմություն և այլն), և, ցավոք մերօրյա քարոզխոսության մեջ գրեթե անտեսված, դժոխքին: Ահազանգի նման է հնչում Այգեկցու. «Արդ, բարի և շահավետ է մեզ դժոխքի սպառնալիքը քան արքայության խոստումը» արտահայտությունը (Թ): Խրատներից առաջին երկուսի աշխարհաբար թարգմանությունը կատարված է հատվածաբար: Այգեկցու խրատների աշխարհաբար թարգմանությունն իրականացված է ըստ Վիեննայի Մխիթարյան մատենադարանի թիվ 313

(թ. 32ա-40ա) ձեռագրի՝ է (խրատ **Վարդանայ վարդապետի**) վասն ուղղափառ հաւատոյ), և Մաշտոցի անվ. մատենադարանի թիվ 1720 (թ. 140ա-150ա)՝ Ը (**Վարդանայ վարդապետի ասացեալ խրատ ոգեշահ յևստուածաշունչ գրոց**) և թիվ 3940 (թ. 254ա-263ա)՝ Թ (**Պատմութիւն եւ խոսք վասն դժոխցն, թէ ստոյգ կա դժոխք՝ Աստուծոյ վկայութեամբն եւ ամենայն սրբոցն, եւ ոչ է լոկ սուտ սպառնալիք, որպէս կարծեն տգէտք եւ մեղսաներք եւ աստեղաբաշխք եւ այլք, որ են կարապետք Նեռինն, զոր մեղաւորս Վարդան գրեմ ի Սուրբ գրոց եւ յայտնեմ ձեզ**) ձեռագրերի:


Մյուս խրատագիր հեղինակը Գևորգ Սկևռացին ծնվել է Կիլիկիայի Լամբրոն ամրոցում: Իր նախնական կրթությունը ստացել է քեռու՝ Գրիգոր Սկևռացու բարերար շունչի ներքո: Շուրջ 18 տարեկան հասակում ձեռնադրվել է սարկավագ: **1264 թ.** իր դաստիարակի՝ Հովհաննես քահանայի հետ գնում է Խոր Վիրապ՝ աշակերտելու Վարդան Արևելցուն: Հավանաբար **1283 թ.** վերադառնալով Սկևռա իրեն հանձնում է Ճգնական խստակեցության, զբաղվում մանկավարժական, մատենագրական գործունեությամբ: Մեկնաբանական, ճառախոսական երկերից գատ Գևորգ վարդապետի գրչին են պատկանում նաև խրատներ, որոնցից երկուսը (Ժ-ԺԱ՝ Գեորգեա վարդապետի բան խրատու [յաղագս խոստովանութեան ի խնդրոյ Առիժու պատանեկի], Գեորգեա վարդապետի ասացեալ վասն հաղորդութեան ի խնդրոյ Յոհան քահանայի) վերաբերում են խոստովանությանն ու ս. Հաղորդությանը: Այս խրատների աշխարհաբար թարգմանությունն իրականացված է Մաշտոցի անվ. Մատենադարանի 40 թիվ (թ. 30ա-37բ), 108 (թ. 264ա-268բ) ձեռագրերի հիման վրա:

Հովհաննես Երզնկացի-Պլուզը (**1220/30-1293**) հայ մատենագրության ճանաչված դեմքերից է: Սերել է իշխանական տոհմից: Նախնական կրթությունը ստացել է կեղոյաց գավառի Լուսավորչի լեռներում գտն-

վող Ա. Մինասի անապատում: Իր գիտելիքները խորացնելու նպատակով աշակերտել է Վարդան Արևելցուն: **1268 թ.** նա արդեն հիշվում է որպես վարդապետ: **1278-79, 1281 թթ.** Հովհաննես վարդապետը շրջագայում է տարբեր վայրերում (Երուսաղեմ, Կիլիկիա, Կարին): Հակառակ իր տկարության, եկեղեցաքաղաքական գործունեությամբ ծանրաբեռնված լինելուն, **1280-84 թթ.** Հովհաննես Երզնկացին շարադրում է աստվածաբանական մի շարք ծանրակշիռ աշխատություններ, այդ թվում նաև՝ Խրատ հասարակացը: Ի տարբերություն նախորդ հեղինակների խրատների, Երզնկացու այս խրատաշարն ունի կանոնական բնույթ. խրատական բովանդակությունն ունի նաև հեղինակի՝ Եկեղյաց գավառի իշխաններից ուղղված նշանավոր նամակը: Այս երկերի հատվածաբար ներկայացվող աշխարհաբար թարգմանությունը կատարվել է համաձայն հետևյալ հրատարակության. Է. Ս. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արծակը, Եր., 1977, էջ 157-172, 209-216:

«Հավելված» բաժնում իբրև ճաշակ հայրախոսական գրականության, աշխարհաբար թարգմանությամբ ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում հատվածներ տիեզերական եկեղեցու բազմաբեղուն մշակներից մեկի՝ Հովհան Ոսկեբերանի (**344/54-407 թթ.**) Եսայու մարգարեության մեկնությունից: Հունարեն բնագրով մեզ հասել է Եսայու մարգարեության միայն առաջին ութ գլուխների մեկնությունը: Մնացյալ 56 գլուխների մեկնությունը աշխարհին այսօր հայտնի է շնորհիվ հայերեն թարգմանության, որն իրականացվել է 5-րդ դարում: Թարգմանությունը կատարվել է հետևյալ հրատարակությունից. «Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց» (հրատ. Հ. Թադևոս վ. Թոռնեան), Վիեննա, 1893, էջ 235-243:

ՀԱԿՈՒ ՔՅՈՍԵՅԱՆ



Ա
ՆԵՐՍԵՍԻ ԵՂԲՈՐ՝ ՆՈՒՅՆ ԳՐԻԳՈՐԻՍ
ՎԿԱՅԱՍԵՐԻ [ԽՐԱՏԸ]

Երբ մեր Տեր Հիսուս Քրիստոս եկավ մեր բնությանը՝ խոնարհությամբ և սիրով մեզ փրկելու ամեն տեսակ մեղքերից և ազատելու թշնամու չարից, մեր բնությունն առավ և մեր կյանքն ընդունեց՝ առանց մեղքի: Տեսավ մեր տկարությունները, իմացավ մեզ ներողին և հալածողին, որ կորստի և ապականության համար կաշկանդում է մեզ ծուլության և անհնազանդության միջոցով, որի հետևանքով ինքն ընկավ իր վերին փառքից: Սատանան ծուլացավ Արարչին սպասավորելու մեջ և անհնազանդ գտնվեց նրա կամքին ու գոռոզացավ իր Տիրոջ հանդեպ: Դրախտում այս երկու թույնները խմեցրեց մեր նախահայր Ադամին՝ ծուլանալ Տիրոջ պատվիրանների [կատարման] մեջ, անհնազանդ լինել Արարչի կամքին, որով զրկեց նրան անմահական փառքից, որից ինքը ընկավ: [Մինչդեռ] Աստծո կամքն այս է՝ տեսապես արթուն մնալ իր կամքի մեջ և աշխույժ ամեն տեսակ բարեգործություններում: Այս պատվիրանը տվեց նախահորը դրախտում գործելու և պահք պահելու համար: Գործելը ցույց է տալիս աղոթքի ժրաջանությունը, պահելը՝ արթնությունը: Հպատակվել Աստծո պատվիրաններին, առավել խոնարհությամբ և սիրով գործանալ

ամեն տեսակ բարու մեջ, որովհետև ուր այս երկուսը մոտ չեն իրար, դյուրութեամբ որսվում են չարից և կորչում: Մինչդեռ Աստված, որ ստեղծեց մեզ՝ տեսնելով, որ նրա կողմից հանձն առնված պատվիրանը չի պահպանում՝ դարձյալ եկավ մարդկային ցեղի մոտ՝ ողորմելով մեր բնութեանը՝ եկավ վերականգնելու գլորվածներինս, գտնելու կորսվածներինս, ոտքի հանելու ընկածներինս, լուսավորելու խավարածներինս: Սովորեցրեց մեզ արիւթեամբ վերադառնալ դեպ առաջին փառքը տանող ճանապարհով, որից հեռացել էինք ծուլութեան և անհնազանդութեան [հետևանքով], և մեզ կրկնեց առաջին պատվիրանը, որ չպահեցինք: Եվ ինքը՝ մեր Տերն իբրև մեզ օրինակ ինքը կատարեց և մեզ սովորեցրեց իր անձով և խոսքով: Եվ ոչ միայն խոնարհ եղավ, այլև մահվան չափ հնազանդվեց խաչի մահվանը (Փիլիպ, Բ 8): Եվ ասում է. «Սովորեցեք ինձանից, որովհետև հեզ եմ և սրտով խոնարհ» (Մատթեոս ԺԱ 29): Հեզ և խոնարհ լինելը բարքի առաքինությունն է: Դարձյալ առաջին պատվիրանը մեզ սովորեցրեց ճշմարտութեամբ և խոսքով, և ավանդեց արթուն լինել և աղոթքի մեջ չծուլանալ (Հմմտ. Մատթ. ԻԶ 41, Մարկոս ԺԴ 38): Նրա Ավետարանում արթնություն և քաջ աղոթքի վերաբերյալ բազում առակներ և օրինակներ կան. ոչ միայն օրինակով ավանդեց, այլև խոսքեր սովորեցրեց մեզ, ինչպես ասում է. «Եվ արդ, դուք այսպես աղոթեցեք. Հայր մեր, որ երկնքում ես, սուրբ Թող լինի քո անունը» (Մատթ. Զ 3, Ղուկ. ԺԱ 2): Եվ կարգադրեց սա ասել ամեն ժամ, և միշտ հայտնում է, թե հարկ չէ դադարել այս ասելուց: Որովհետև ցերեկը տասներկու ժամ է, նույնպես և՛ գիշերը. և ամեն ժամ հարկ է հիշել

Աստծուն և աղոթել նրան: Եվ աղոթքի համար չափ ու սահման չկա, որովհետև ամեն գործ չափ ու սահման ունի, իսկ աղոթքը ոչ չափ, ոչ սահման և ոչ էլ ժամանակ ունի: Ինչպես ինքն մեր Տերն է ասում, թե «Ամեն ժամ աղոթք արեք» և ամեն ժամ վարժեցնում էր աշակերտներին՝ արթուն լինել և աղոթել, ինչպես ինքը լեռը բարձրացավ աղոթելու, և ամբողջ գիշերն անցկացնում էր առ Աստված աղոթքի մեջ: Եվ խաչի ժամին առանձին աղոթում էր: Եվ աշակերտներին ասում էր. «Արթուն մնացեք և աղոթեցեք փորձության մեջ չմտնելու համար» (Հմմտ. Մատթեոս. ԻԶ 41, Մարկ. ԺԴ 38): Եվ առակներով շատ տեղերում ցույց էր տալիս ու հորդորում աղոթել: Ինչպես ասում է «Թող ձեր գոտիները մեջքներիդ պնդված լինեն» (Ղուկ. ԺԲ 35). սա ասում է արթնության համար: «Եվ ճրագներդ վառված». սա ասում է մտքի և աչքերի առաքինության համար: «Եվ դուք պատրաստ եղեք, որպեսզի երբ դա և բախի տան դուռը, փութով բանաք այն» (Հմմտ. Ղուկ. ԺԲ 36-40): Սա ասում է մինչև մահվան օրը հնազանդության և անդադար աղոթելու համար: Եվ դարձյալ ասում է. «Աղոթքի մեջ եղեք, որպեսզի ձեր փախուստը ձեռք չլինի» (Հմմտ. Մատթեոս. ՀԴ 20, Մարկ. ԺԳ 18), որովհետև խիստ ծանր է ձեռք ժամանակ փախչելը, քանզի մարդ տնից դուրս է գալիս լեռներում փախստական լինելու: «Եվ Թող շաբաթ օրը չլինի, որովհետև ծանր է զանց առնել Աստծո օրենքը, շարժվել ու փախչել: Բայց այս երկու դժվարությունը ապագա գալստյան և մահվան օրվա համար է ասում: «Եվ աղոթքի մեջ եղեք», որպեսզի ձեզ այնպիսի դժվարություն չհանդիպի, այլ որպեսզի աղոթքով անցած կյանքը

խաղաղության մեջ մնա և մահով խաղաղությամբ փոխադրվի այս աշխարհից: Եվ առաքյալներին ասում էր առակախոսությամբ. «Եթե տանուտերը իմանար, թե որ ժամին գողը կգա, կհսկեր և չէր թողնի, որ իր տունը ծակեն» (Մատթեոս. 2 20, Ղուկաս. ԺԲ 33): «Բայց ինչ ձեզ եմ ասում, ամենքին եմ ասում. արթուն կացեք» (Մարկոս. ԺԳ 37), որպեսզի չլինի թե արժանի լինեք այն բոլոր նեղություններին, որ լինելու են ամբողջ երկրի վրա. նեղություններ, արհապիրքներ, սովեր և սրածուրծություններ, բարկություններ, հալածանք և այլ բազում չարություններ, ինչպես Ավետարանն է պատմում (Մատթեոս ԻԴ 7, Մարկոս ԺԳ 8), որպեսզի աղոթքով փրկվեք այսպիսի բաներից և հետո արժանի լինեք Աստծո առջև կանգնել սրբությունքով: Եվ այլ բազում առակներով և օրինակներով Քրիստոս չէր դարձրում ուսանել աշակերտներին աղոթել և արթուն մնալ: Ինչպես ասում է. «Մի քաղաքում մի դատավոր կար, և մի այրի կին կար այդ քաղաքում: Եվ այրի կինը գալիս է դատավորի մոտ և անդադար բողոքում, թե՛ իմ դատը տես իմ ոսոխի դեմ, և թեպետ դատավորը ոչ մեկից չէր վախենում, բայց այրու հաճախաբար թախանձանքներին տեղի տալով արեց նրա դատը» (տե՛ս Ղուկ. ԺԸ 2-5): Եվ արդ, մեզ անհրաժեշտ է հաճախակի աղոթքով ձանձրացնել Աստծուն, որպեսզի մեր դատը անի մեր ոսոխից՝ սատանայից և այս դժնի կյանքից, ինչպես ասում է դատավորի առակից հետո. «Իսկ Աստված մի՞թե արդարություն չի անի իր այն ծառաներին, ովքեր աղաղակում են գիշեր ցերեկ, և նրանց հանդեպ համբերատա՞ր կլինի: Այո, ասում եմ ձեզ, նրանց իսկույն արդարություն կանի» (տե՛ս Ղուկ. ԺԸ

7-8): Սրանով սովորեցնում է մեզ, որպեսզի անհույս չլինենք, այլ՝ պարտ է հուսալ և հավատալ, թե Աստված լսում է մեր աղոթքները: Եվ դարձյալ ասում է, թե՛ «Պարտ է աղոթքի մեջ մնալ և չձանձրանալ»: Եվ դարձյալ առակով բարեկամին ասում է. «Կեսգիշերին զնալով նրա մոտ աղաչում է, թե տուր ինձ, ասում է, երեք նկանակ, որովհետև բարեկամս եկել է ինձ մոտ: Եվ նա պատասխանում է, թե՛ չեմ ուզում տալ: Սակայն երկար խնդրանքից հետո նրան տվեց ոչ թե հանուն բարեկամության, այլ տևական թախանձանքի համար» (տե՛ս Ղուկ. ԺԱ 5-8): Եվ այս առակը այլ բան ցույց չի տալիս, քան հարատև աղոթքը և Աստծուն անդադար աղաչելը, որ կյանքի և հոգու փրկության համար է: Եվ Պողոս առաքյալը բազում տեղերում ասում է, ստիպում և հորդորում է աղոթել, ինչպես ասում է. «Հաճախակի աղոթեցեք» (Հռովմ. ԺԲ 12, Կողոս. Դ 2): Եվ Տիմոթեոսին գրելով ասում է. «Աղոթքի մեջ եղիր թե՛ ցերեկը և թե՛ ուշ ժամին», որովհետև աղոթքի համար ժամ չկա, այլ անհրաժեշտ է միշտ աղոթել: Եվ Դավիթը՝ մարգարեների պարծանքը իր Սաղմոսարանի բազում տեղերում ասում է. «Իմ ձայնով ես Տիրոջը դիմեցի» (Սղմ. Գ 5): Եվ դարձյալ. «Երբ ձայն տվի, իմ արդարության համար լսեցիր ինձ, Աստված» (Սղմ. Դ 2): «Ես Աստծուն դիմեցի երեկոյան, առավոտյան և կեսօրին» (Հմմտ. Սաղմ. ԾԳ 18): Եվ «Ամեն ժամ Տիրոջն օրհներգեմ, նրա օրհնությունն ամեն ժամ բերանումս լինի» (Սղմ. ԼԳ 2): Սա ասում է անթիվ աղոթքների համար: Նույնպես Աննան աղոթելով որդեծնություն ստացավ (տե՛ս Ա Թագ. Ա 9-20): Եվ բոլոր մարգարեները, առաքյալներն ու արդարները աղոթքով Աստծո զայրույթը

դադարեցրին: Ինչպես Մովսեսը բաժանեց ծովը և ընկղմեց փա-
րավոնին (տե՛ս Ելից ԺԴ 15-31): Եվ Հովնանը աղոթքով ան-
դունդից, կեսի փորից դուրս եկավ (տե՛ս Հովն. Բ 1-11): Նին-
վեացիները աղոթքով և պահքով փրկվեցին կործանումից (տե՛ս
Հովն. Գ 5-10): Եվ Դանիելը աղոթքով վիշապներին սպանեց և
առյուծներին սանձեց (տե՛ս Դան. Զ 16-18): Երեք մանուկները
հնոցում աղոթքով կրակը մարեցին (տե՛ս Դան. Գ 19-93): Եղի-
ան աղոթքով երկինքը փակեց (տե՛ս Գ Թագ. ԺԷ 1-7): Նավեի
որդին Հեսուն աղոթքով երկնքում կանգնեցրեց արեգակը և
կործանեց Երիբովը (տե՛ս Հեսու Զ 1-21, Ժ 12-14): Դավիթը
աղոթքով պարսաքարեց Գողիաթին ու սպանեց, և աղոթքով
փրկվեց իրեն հետապնդողներից և աղոթքով դեբրին հալածում
էր Սավուղից (տե՛ս Ա-Բ Թագ. Ա Մնաց.): Եզեկիան աղոթքով
հարվածեց Սենեքերիմ թագավորին և փախստական դարձրեց
(տե՛ս Դ Թագ. ԺԹ): Եվ աղոթքը հույժ գորավոր է մարդկանց
կյանքում նրանց օգնելու համար: Եվ եթե մեկն առաջվա թա-
գավորների նման փորձուցյան մեջ ընկնի, [թող չընկրկի],
որովհետև թեպետ նրանք փորձուցյան մեջ էին ընկնում, բայց
աղոթքով դուրս էին գալիս փորձուցյունից, ինչպես Երեմիան
աղոթքով դուրս եկավ գուբից (տե՛ս Երեմիա ԼԷ -ԾԱ): Եվ Հե-
րովդեսի կողմից կրկնակի շղթաներով կապված Պետրոսը Աստ-
ծո շնորհքով և աղոթքով [փրկվեց, որովհետև] հրեշտակները
գիշերը հանեցին նրան: Պողոսը և Շիդան կապված ու փակված
էին բանտում, [սակայն] աղոթքով արձակեցին կապանքները, և
բանտը ցնցվեց, և բանտապահները հավատացին Աստծուն և
մկրտվեցին (տե՛ս Գործք ԺԶ 16-40):

Եվ թող մեկը ծուլուցյան պատճառով չպատճառաբանի և
ասի թե՛ «Անարժան եմ, Աստված ինձ չի լսում, ի՞նչ օգուտ է
աղոթելը»: Այս պատճառաբանությունը սատանայից է, որ ան-
հուսուցյուն և ծուլուցյուն է գցում մարդկանց մտքի մեջ և
թույլ չի տալիս աղոթել և աղաչել Աստծուն: Եվ նրա՝ սատա-
նայի համար աղոթքը մեծ վնաս և կորուստ է: Այդ պատճառով
մեր մեջ ծուլուցյուն է գցում և զրկում աղոթքի շնորհներից և
տեսպես մարտնչում է մեր դեմ: Եվ մեղավորներից շատերը
աղոթեցին և Աստված լսեց, ինչպես նինվեացիները, որ չար ու
պիղծ էին. այդ պատճառով Աստված կամենում էր ոչնչացնել
նրանց, բայց հեռացրեց պատուհասը: Եվ Աստված կամենում է
բոլորի աղոթելը, ինչպես ասում է. «Դարձեք Ինձ և ես կդառ-
նամ դեպ ձեզ» (Մատթ. Գ 7): Նույնպես և քեզ է լսում և չի
արգելում քեզ խոսել Աստծո հետ աղոթելով և նրա առջև
կանգնել մաքուր սրտով: Բայց աղոթելիս մտքիցդ հեռացրու
մարմնական հոգսերը և երկրային իրերը: Եվ եթե կամենում ես
Աստծո լսելիքին խոսել. ինչպես որ մեկը համարձակվում է թա-
գավորին խոսել, միտքը, աչքերը և ձեռքերը ուրիշ որևէ բա-
նով չի զբաղեցնում, բայց միայն թագավորի կամքին [հնա-
գանդեցնելով դրանք], և այնպես ահով կանգնում, խոսում և
ստանում այն, ինչ խնդրում է, ճիշտ այդպես էլ ձեզ պարտ է
Աստծո առջև կանգնել: Մտքիցդ և հոգուցդ հանիր հպարտու-
թյունը, ատելությունը, ոխը, քենը, որովհետև սրանք են, որ
թույլ չեն տալիս տեսնել Աստծո լույսը: Այդպիսի խավարը,
մանավանդ ընչասիրուցյան ախտը, հալածիր քո մտքից սիրով
և խոնարհուցյամբ, որովհետև այն, ինչպես նաև՝ ազահու-

թյունն է մեր ամեն տեսակ վնասների պատճառը: Այս բոլորը հեռացրու քո մտքից և բարքերից, որպեսզի չթաղվես ինչպես մեզի մեջ: Եվ ապա դադարեցրու լեզուդ ոչ միայն չարը խոսելուց, այլև անօգուտ և ավելորդ բաներից, և այն խոսիր, որ օգուտ է քեզ և քո ընկերոջը, որ շինություն է լսողների և օրհնություն Աստծո համար, և հույժ պիտանի բան է դառնում պետքերի համար, մինչդեռ սրա [համեմատ] ավելորդ եղած ամեն ինչ դատապարտություն է և մեղք է համարված:

Եթե մեկը չի հարցնում քեզ՝ դու առաջախոս մի՛ եղիր և ուրիշի խոսակցության մեջ մի՛ ընկիր և այլոց խոսքը անասունի պես մի՛ որոճա: Եվ ինչ որ կամենում ես խոսել նախ մտածիր, թե բարի է և օգուտ է լսողին և հետո խաչակնքիր բերանդ և միտքդ կնքիր Քրիստոսի աջի նշանով և ապա խոսիր: Եվ տևապես միտքդ զգեստավորիր տրտմությամբ՝ իբրև թե սգավոր ես, որովհետև այնտեղից են ծնվում առաքինություններն ու արտասոււքը: Որովհետև ինչպես մոլթ և թանձր ամպից անձրև է ցողում, ճիշտ այդպես էլ՝ այսպիսի տրտմությունից, որ Աստծո համար է լինում: Արտասոււքի կաթիլները լվանում են մարմնի բոլոր ախտերը: Քո գործերը կշռիր Աստծո պատվիրանների համեմատ և իմացիր քեզ բոլոր մարդկանցից անարժան համարել: Քո մտքում ասա. եթե մարդիկ տեղյակ լինեին իմ գաղտնի գործերին ոչ միայն կանարգեին ինձ, այլև գազանի պես կհալածեին և կքարկոծեին: Արդ, միջակ հանդերձանք օգտագործիր, որպեսզի հպարտությունն ու սնափառությունը չտիրեն քեզ: Որովհետև եթե խիստ կոշտ հագնվես՝ կհպարտանաս այլոց հանդեպ, թե ու-

րիչների համեմատ նախանձախնդիր եմ ճգնության, իսկ եթե ազնիվ ու փափուկ հագնվես՝ դա քեզ սնափառության կտանի: Եվ երբ գիշերը արթնանաս, այնժամ երեք անգամ ծունկի արի, և հետո գնա աղոթքի վայր և գոհացիր Աստծուց: Սրանից հետո թող սա սկիզբը լինի աղոթքի մեջ պատրաստ լինելու և քո մտքում զղջալու: Եվ բարքիդ համար քեզ տրտմության մեջ դիր ու մտածիր վախճանի օրվա մասին, որովհետև այն պետք է վրա հասնի որոգայթի նման, և հիշիր այն, թե դատարկ և անպատրաստ է գտնելու քեզ: Վայ այն օրվան, որ Աստծո առջև կանգնելու ես այդպես՝ գործերից թափուր և բարուց մերկ: Եվ այնպես ահով և դողությամբ ծնրադիր Աստծո առջև և ասա Տիրոջը. «Տեր, եթե շրթունքներս բանաս...» (Սղմ. Ծ 17): Եվ ուշիմ եղիր քահանայական աղոթքի նկատմամբ: Եվ միտքդ սաղմոսի և աղոթքի վրա պահիր և աջ ու ձախ մի նայիր: Եվ աղոթքի ժամին հարկ չէ դառնալ դեպ արևմուտք և նայել, քանզի պետք է միայն Աստծուն նայել և Աստված-դատավորի առջև գանգատվել է ավազակներից, դեերից ու սատանայից: Տույց տուր (քո իսկ օրինակով) քեզ, որ մերկացրին և վիրավորեցին ու չարաչար կողոպտեցին: Հայտնիր քո մեղքերի վերքերի հոշոտումը, որ սատանայից եղավ, որովհետև զանազան ու տեսակ տեսակ մեղքերով խոցեցին: Եվ այնպես համարիր, թե աչքերիդ առջև քո աջ կողմում Աստծուն ունես, որպեսզի չսասանվես:

Առավոտները ծույլ քնով չնիրհես: Երբ կամենաս աղոթել, առանձնացիր մարդկանցից հեռու խաղաղ մի վայրում: Երկու ձեռքերդ միացնելով վեր կարկառիր, միտքդ հեռացրու

(նյութական բաներից) և, եթե կարող ես՝ գլխիդ քողածածկը, ու եթե հարմար պահ է, միտքդ բաց խոստովանությունամբ, արտաքսիր մեղքերի հնությունը և նախ այսպես ասա. «Գոհանում եմ Քեզանից, Տեր Աստված մեր, բոլոր բարիքների համար, որ արել ես մեր բնությունը: Գոհանում եմ Քեզանից, Սուրբ Երրորդություն, որ Քո նախախնամությունամբ երկայնամիտ ես մեր հանդեպ և մեզ չես սատկեցնում կրակի կայծակով, երբ մեղանչում ենք Քո առջև: Գոհանում ենք Քեզանից անոխակալ և բարեգութ Տեր, որովհետև կամենում ես մեր լինելն ու հասնելը կյանքի փրկությունը և ժառանգորդ լինելուն անպատում բարիքին, որ Քեզնից է: Եվ արդ, եկել եմ Քո առջև կանգնելու ամոթապարտ դեմքով՝ չհանդգնելով մերձենալ պատարագին, որ արժանի էր մտքի մաքրությունամբ Քեզ ընծայել, ինչպես սովորեցրիր մեզ, այլ՝ միայն աղոթքի մաղթանքները [Քեզ վերընծայելու] տկարացած, խավար հոգուց բարիքի օրհնության լսելի խոսքով, և այսպես իսկ հասնել կատարյալ հաշտության: Բայց միայն սոսկական խոսքը Քո առջև դնելով, ամենագութ և ողորմած, շնորհիր ինձ գիտություն հանձար՝ Քեզնից առատապես ընծայված ողորմություն խնդրելու և կամ խնդրությամբ հեղելու այդ նրանց վրա, ովքեր խնդրում են:

Սովորեցրու ինձ բախել մարդասեր մեծահարուստիդ դուռը: Քո գանձերի ամենաբարի շտեմարանից հագեցրու թշվառ հոգուս քաղցը, եղեմական օրհնությանդ ցողի ցայտումով զովացրու թշվառիս չորացած շրթունքները»:

Եվ Քրիստոսին՝ մեր Աստծուն Փառք հավիտյանս. Ամեն:



Բ ՆՈՒՅՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՍԱԾ ԽՐԱՏԻ ԽՈՍՔԸ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ

Ես Աստծո ծառաս և այս խոսքերի ընթերցողս ի լրումն ամեն տեսակ առաքինությունների նաև այս պետք է ի մտի ունենամ, որպեսզի չհպարտանամ և բոլոր մարդկանցից ինձ ավելի լավը չհամարեմ: Մի՞թե քեզ անկատար չպետք է համարես և անպիտան, իբրև Աստծո հրամաններին պարտական, ինչպես Տերը հրամայեց, թե՛ «Երբ կատարեք բոլոր գործերը, ասեք, թե Աստծո անպիտան ծառաներն ենք, ինչ պարտավոր էինք անել, արեցինք» (Հմմտ. Ղուկաս ԺԷ 10): Եվ տևապես այս մասին խորհելով հարկ է ամոթխածությամբ կանգնել Աստծո առջև: Հայացքդ խոնարհիր գետնին ու քեզ նայիր և իմացիր, թե հող ես, որպեսզի չմեծամտես, և միտքդ վեր՝ Աստծո մոտ բարձրացրու, որ իմանաս, թե նա է քո Արարիչը և Տերը: Եվ սպասիր հանդերձյալ դատաստանին, և ապա սիրիր քո ընկերոջը՝ աննենդ, անկեղծ սիրով ու հավատով: Մի՛ սիրիր նյութը, վաստակելիս ազահություն մի՛ արա, և քեզանից ցածրերին բարի խրատ տուր, իսկ նրանց, որ քեզանից բարձր են կամ շնորհներով, աստիճանով ու բարքով վեր, նրանց հնազանդվիր սրտի մտոք և մի՛ նախանձիր մեկի շնորհին կամ փառքին: Բայց եթե մի առաքինի [անձ] տեսնես, ջա-

նա, որ Աստծո սիրով նրան նմանվես. հավատքի համբերութեանը, խոնարհութեանը, ժուժկալութեանը, ճգնութեանը, աղոթքին, պահքին, հույսին, երկայնամտութեանը, հեզութեանը, անընչասիրութեանը, անոխակալութեանը, բարքի խոնարհութեանը ջանա, որ [այս բոլորը] քո մեջ դրոշմես իբրև իմաստուն ճարտարագիր, որ այս ամենը նկարակերտես քո մեջ օրինակի հիման վրա: Եվ ինչը քեզ չար է թվում, դու այն մի՛ արա քո ընկերոջը, որովհետև այդ խաբեութիւնն և նենգութիւնն է: Գինի շատ մի՛ խմիր, որ չհարբես, ու եթե պատահի [որ խմես] երեք փոքր գավաթից չանցնես, այլ այն խմիր պետքի համար միայն և օրհնիր Արարչին և տան տիրոջը ու գոհացիր տվողից: Անպարկեշտ կանանց հետ ամենեւին մի՛ նստիր և մի՛ խոսիր ու մի՛ հոժարիր նրանց խոսքը լսել, որովհետև պոռնիկ կանանց խոսքերը նման են թունաւոր նետերի, որ խոցում են լսողների հոգիները և սպանում: Եվ եթե պատահի, որ կնոջ հետ խոսես ինչ-որ անհրաժեշտութեամբ կամ այլ խնդրի պատճառով, որովհետև հարկ է քեզ ամեն ազամորդու հետ խոսել, այնժամ ակնդետ նրան մի՛ նայիր, այլ առջևդ նայիր և անհրաժեշտ խոսքդ ասա: Եվ կանանց մոտ շատ մի մնա, որովհետև դրանից հոժարութիւն է լինում և հոժարութեամբ էլ սատանայի խոսքն է կատարվում: Եվ ծաղրաբար կնոջ հետ ամենեւին մի՛ խոսիր, այլ նրա խաբեական խոսքերից փախիր, ինչպես թունաւոր օձից, որովհետև նրանց խոսքերը շատերին կորստյան են մատնում: Որովհետև թեպետ նրանց խոսքերը քաղցր են թվում, ինչպես Սողոմոնն է ասում, թե՛ «Պոռնիկ կանանց շուրթերից մեղր է կաթում,

բայց հետո լեղուց ավելի դառն է լինում» (Առականք Ե 3-4): Եվ վա՛յ այն մարդուն, որ կրմպի այն: Որդեակ, երբ մի կնոջ մոտիկից հանդիպես, ամեն ժամ ուշքդ ու միտքդ քեզ վրա պահիր, որպեսզի չխաբնվես նրա խոսքերից: Եվ մի՛ նայիր նրան տուփանքով և ոչ էլ ականջդ մոտեցրու նրա խոսքերին, և ոչ էլ միտքդ նրա խոսքերի ետեից տար: Այլ Աստծո ահը հարատևորեն սրտիդ մեջ պահիր և՛ տանջանքների երկյուղը, և՛ գեհենի ահը, Աստծո դատաստանի օրը, և՛ փողի ահեղ հնչումը, և՛ արարածների սասանումը, երկնքի գալարումը, Աստծո Որդու ահեղ ճայնից հրեշտակների սարսափումը, մեղավորների զանազան տանջանքները: Որովհետև մարդ ինչ մեղք որ գործում է ու չի ապաշխարում, մեղքի համեմատ տանջանք է ընդունում, քանզի ոմանք անչե՛ղ կրակի մեջ են ընկնում և ոմանք՝ հավիտենական տանջանքի մեջ, կեսը անլույս խավարի մեջ են տարվում և ոմանք՝ տարտարոսի մեջ: Եվ ոմանց էլ Աստված չար պատասխան է տալիս, ինչպես հիմար կույսերին, որոնց ասում է. «Ձեզ չգիտեմ, հեռացե՛ք ինձանից անչե՛ղ կրակի մեջ» (Մատթեոս. ԻԵ 12): Ինչպես մարգարեն է ասում, թե «Նրանց կրակը չի մարում և որդը չի մեռնում» (Հմմտ. Մարկոս Թ 47): Այս բոլորը նրանց համար է պատրաստված, ովքեր այստեղ չարաչար անցկացրին իրենց կյանքը և անապաշխար մեռան: Եվ այլ զանազան ահագին տանջանքներ պատրաստված են ոչ թե մարդկանց, այլ սատանայի և նրա կամակատարների համար, որոնք մարդ չի կարող լեզվով պատմել: Իսկ դու այս բոլորի մասին մտածիր և Աստծո ահն ու մահվանդ օրը միտքդ պահիր, որպեսզի չմո-

լորվես ու ընկնես հավիտենական տանջանքի մեջ: Եվ հիշիր Աստծո խոսքը, որ ասում է, թե՛ «Ուր ես եմ, այնտեղ կլինի և իմ ծառան» (Հովհաննես ԺԲ 26): Արդ, որդյակ, Աստծուն պաշտիր սրտի մտքով և հավատքով, և ում էլ որ հանդիպես՝ հնազանդության մեջ մնա՛ թե՛ ավագի, թե՛ եկեղեցու առաջնորդի, ինչքան որ կարգն է, հնազանդության մեջ մնա, որպեսզի ուր որ Աստված կա, դու ևս այնտեղ լինես՝ Քրիստոսի հետ բազմելով, որովհետև նա եկավ և ծառայեց մեզ ու մեր բնությանը, և հնազանդ եղավ մահվան չափ և խաչի մահվան (Տե՛ս Փիլիպեցիս Բ 8): Այդ պատճառով էլ Աստված բարձրացրեց նրան. այդպես էլ քեզ կբարձրացնի ի փառս Իր արքայության: Նաև ասաց, թե՛ «Երանի նրանց, որ սուրբ են սրտով և խոնարհ՝ հոգով, որովհետև նրանք Աստծուն են տեսնելու» (Մատթեոս. Ե 8): Եվ այն է Աստված տեսնելն ու նրա հետ արքայության մեջ բազմելը, երբ սիրտդ մաքուր ես պահում ամեն տեսակ չարից և անհոգությունից, ռիսկալությունից և նախանձից, չար հայացքից, մեծախոսությունից և կամապաշտությունից, զրաբանությունից և հայհոյանքից, զագիր գործերից ու պոռնկությունից: Որովհետև այս ամենն է, որ պղծում է սիրտը և զրկում Աստծուն տեսնելուց: Ու երբ այս բովանդակ չարիքից սիրտդ մաքուր պահես, այնժամ կտեսնես Աստծուն և կուրախանա հոգիդ ու համարձակ կխոսես Աստծո հետ: Որովհետև նրանք, որ թեպետ աշխարհում են, բայց իրենց կյանքը անցկացնում են սրբությանմբ և պարկեշտությանմբ, և ողորմած, աշխատասեր, մարդասեր, խոնարհ և ընչազուրկ են՝ նրանք այս աշխարհում [ապրում են] իբրև

միայնակյացներ լեռան վրա: Եվ շատերն են, որ ունեն այս առաքինությունները. այստեղ երանելի են և այնտեղ պսակվում են մեր Աստծո՝ Քրիստոսի արքայության մեջ: Որովհետև ինչպես տանջանքներն են բազում և տեսակ-տեսակ [այդպես էլ՝ հատուցումը], քանզի ոմանք պսակվում են լուսեղեն պսակներով և բազմում Աստծո աջ կողմում, և ովքեր նմանվում են նրան՝ արդեն իրենց հայրենի փառքի մեջ են: Աստված ոմանց սկզբից է կանչում, և իր Հոր կողմից օրհնելով ասում է. «Եկեք իմ Հոր օրհնվածներ» (Մատթեոս. ԻԵ 34): Աստված ոմանց հատուցում և իր նման ողորմած ու բարերար է խոստովանում: Ոմանց Երկնավոր Փեսային է ցույց տալիս: Ոմանց նախապատրաստում է իբրև սրաթև աղավնի, որ թռչում է Աստվածորդուն ընդառաջ ու սլանում անցնում է գետերի վրայով: Ոմանք, որ կույս և պարկեշտ են եղել, նաև՝ բարեգործ՝ նրանց պսակը պայծառ է լինում բոլորից ավելի: Եվ ովքեր սրտով խոնարհ են, հեզ՝ նրանք ժառանգում են երկիրը (Հմմտ. Մատթեոս. Ե 5): Ոմանց իբրև կերակուր տալիս է անմահ պտուղ: Ոմանց պարգևում է կյանքի եղեմը և անմահությունը: Անճառելի և անպատում են բարիքները, որ Աստված խոստացավ իր սիրելիներին, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Ինչ որ աչքը չտեսավ և ականջը չլսեց և մարդու սիրտը չընկավ» (Ա Կորնթացիս Բ 9):

Արդ, որդիներ, այս բոլորը գրեցի ձեզ, որպեսզի տանջանքներից սարսափեք և գերծ մնաք, լինեք երկնքի արքայության ժառանգավորներ մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փառք հավիտյանս. Ամեն:



Գ

ԹՈՒՂԹ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ՝ ՄԽԻԹԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ո՞ր մեկը պետք է ասեմ, ո՞ր մեկը պետք է պատմեմ և կամ ո՞ր մեկն անտեսեմ. այն, ինչ ումանք անկարևոր են նկատում, ստիպում է շարժել լեզուս: Քանի որ խրատիս միտքը կարևոր եմ համարում, ուստի հոժար կամքով պետք է խոսեմ և պատմեմ նեղյալների վհատության և չքավորների անօրեն հիմարության մասին, որոնք իրենց հետին անմտության մեջ նույնիսկ Աստծուն են հայհոյում՝ նրան կողմնապահ և անարդարադատ անվանելով: Ասում են. Աստված սիրում է հարուստներին, խնամում և դարմանում նրանց, հաջողություն է տալիս նրանց գործերին և կարևորություն չի ընծայում տառապյալների զրկանքներին, այլ արհամարհանքով անտեսում նրանց: Այսպիսի անարժան մտածումներով չեն ճանաչում Աստծո արդարությունը, ճշմարտությունն ու ստուգությունը, այլ ողորմությունը անօրենություն են համարում: «Անօրեններին ասացի, թե մի՛ արեք անօրենություն և մեղավորներին, թե՛ մի՛ խոսեք Աստծուն անիրավություն» (Սղմ. 27: 3): Աստված արդար է և նրա մեջ չկա անիրավություն (Սղմ. ՂԱ 16) արդար և ճշմարիտ է Տերը: [Սա] ոչ հրեան կարող է ուրանալ և ոչ էլ՝ հեթանոսը. [մինչդեռ] ամբարիշտները տկար մտքով հայհոյում են [Տիրոջը] և բորբոքում Աստծո բարկությունն իրենց անձերի ու կորուսյալ հոգիների վրա:

Ո՞վ աղքատացած չքավորներ, ինչո՞ւ եք Աստծո համար

անիրավություն խոսում, մի՞թե Աստված զրկեց ձեզ իր պարգևներից. մի՞թե հարուստներին և աղքատներին, որպես եղբայրների, բոլորին հավասարապես չբաշխեց նույն ձեռքն ու ոտքը, արեգակը ծագում է բոլորի վրա, նույնպես լուսինը, աստղերի սառն ու տաքը, չէ՞ որ բոլորս հավասարապես օգտվում ենք լուսից և խավարից, օդից և անձրևներից: Բոլորի համար նույն մկրտությունն է, նույն շնորհքը, Քրիստոսի նույն մարմինը, նույն արյունը, բոլորին տրված է նույն երկինքն ու նույն երկիրը: Ահա այս են Աստծո շնորհները, որ հավասարապես տրվեցին հզորներին և աղքատներին:

Արդ, Աստված ինչո՞վ զրկեց քեզ, և եղավ հարուստների խնամակալը. մի՞թե հարուստների ձեռքից բռնեց և ցույց տվեց գանձեր կամ բազում ինչքեր ու քեզ զրկեց և ցույց չտվեց. ոչ. այլ [հարստությունը եղավ] ումանց անդուլ և բուռն աշխատանքով, ումանց անիրավ վաշխառությունը ու տոկոսահաշվով, ումանք [հարստացան] առևտրով, մի մասը՝ հափշտակությամբ և գողությունամբ, ումանք՝ տառապյալների զրկանքներով: Սրա համար ինչո՞ւ են տխրում դու, որ անհոգ ես ունեզրկությանդ մեջ և դյուրությունամբ ես գտնում հանդարտություն, խաղաղություն և սակավապետությամբ [լուկ] հացով, ջրով և անպաճույճ թանով բավարարում մարմնի կարևոր պետքերը: Մինչդեռ իշխանների և հարուստների ճաշն ու ընթրիքը դժվարությամբ՝ ծանր մղձավանջով են եփվում և խորովվում, գնվում մեծամեծ ծախսերով, նրանց վաճառքները լի են բազում հոգսերով, մանավանդ որ ազահուլությունով և զրկանքներով են ձեռք բերված նրանց կերակուրներն ու ըմպելիքները: Տևապես հալումաչ են լինում խղճի խայթից, նաև որո-

հարուստների

վայնի աղբի պատճառով մեծ ու սաստիկ երկյուղը կտրատում է նրանց սիրտը, և սարսափելի ճմեռը ամեն կողմից հարձակվում նրանց վրա. կասկածը գողերից, վախը՝ ավազակներից, զրկողների արհավիրքը, դատավորների ահը, հարկահանների տագնապը, քրե-նապահների նախանձը, թշնամիների չարախոսությունը և ամեն կողմից եղած նենգությունները, որովհետև բոլորը վիշապների նման իրենց երախները բացել և կամենում են կուլ տալ նրան: Ահավասիկ տեսնում ես, որ հարուստների հոգսերն ու տրտմու-թյուններն ավելին են, քան հանգիստը և ուրախությունը: Եվ ինչ-պե՞ս կարող է հարուստների համար ուրախություն լինել, երբ մշտապես երկնքից անձրև են սպասում և մտահոգվում դաշտերի տվածով, վախենում ավազակներից, տխրում խաչների, արջառուների սատկելու դեպքում, մարդկանց մահվան պարագային դառն տանջանքով լալիս ու ողբում: Այլև միշտ սգում են, արտասուքով, խանդաղատագին պաղատանքով լալիս և միայն վշտագին վտան-գի դեպքում թախանձում, որի հետևանքով մերձավորներից շա-տերը խղճալով արտասվում են և շտապում բժիշկների ու դեղերի ետևից՝ ցավերի [պատճառած] տագնապը ժամանակավորապես փարատելու, այլ նաև վարձ են խոստանում բժիշկներին և դեղերի գինը՝ ցավերի տագնապը մեղմելու համար: Եվ այս բոլոր նեղու-թյունները լինում են ապականացու մարմնի պատճառով, որ թե-պետև բժշկվում է, բայց մեռնելու է: Իսկ ինչպե՞ս վարվենք գեհե-նի ահեղ կրակի մշտնջենական ցավի պարագային, որ պատրաստ սպասում է մեր բազմավեր հոգիներին, որոնք տևապես ախտա-նում են մեղքերի մեջ և ընկած են անբժշկելի հանցանքների մահ-ճում, և մեղքերի անօրենությունները մշտապես խոցոտում և վի-

րավորում են նրանց, և առավելագույնս չարաչար չարչարում է ախտալից ցավերի մտմտուքը: Եվ չենք հառաչում, հեծում ու հանապազ պաղատում Աստծուն, ողբում մեր մեղքերի ցավերը և ոչ էլ մեր հանցանքների մեղքերն ենք լվանում:

Անդադար լալով չեն արտասվում անօրենությունների և մշտնջենավոր տանջանքի արհավիրքների համար, այլ վերքի վրա վերք դնելով՝ դողում են գանձերի վրա, հալումաչ լինում կուտակելիս և դրանց պակասելուց դեղնում և մաշվում են, ուստի ցեցն իսկ վնասակար է հարուստներին (Հմմտ. Մատթեոս. 2 19) և նրանց սարսափի է մատնում: Էլ ի՞նչ ասենք ազահուլթյան մասին, [որ հատուցվելու է դատաստանի] ահեղ օրը՝ արհավիրքներով, տանջանքների դառնագին ողբու-մով. [չատերն] իսկ պատվիրանների ահից սարսափում և տևապես սոսկում են, երբ առաքյալների և մարգարեների ըն-թերցվածները կշտամբում են անողորմ և ազահ հարուստնե-րին: Արդարև, ո՞ւր է հարուստների ուրախությունը կամ մխի-թարությունը, որին, ո՞վ չքավոր բաղձում ու ցանկանում ես, և քո դյուրին ու խաղաղական կյանքի մեջ տխրում և քեզ խեղճ ու թշվառական համարում ու քամահրում բազմապատիկ իմաստությունդ, որովհետև ոչ գողերից վախ ունես և ոչ ավա-զակներից՝ կասկած, չես մտահոգվում դաշտերի և լեռների կա-նաչուլթյան համար, չես վախենում հովիտների նենգությունից, ոչ էլ գազանների հափշտակությունից, չես սարսափում բռնա-վորների բռնությունից, ոչ էլ իշխանների բռնագանձումներից, ոչ նախանձողներն են զրպարտում քեզ, որևէ մեկից երկյուղ և խռովք չունես, ոչ իշխանների ահն է անհանգստացնում քեզ,

ոչ էլ տերերի սաստուճները կարող են մի բան կորզել աղքատից և խռովքի մատնել աղքատին: [Տեսնելով] խռովահար և տագնապի մատնված հարուստներին՝ աղքատները ծաղրում են նրանց: Ամբարտավան իշխանները գայրանում են հարուստների վրա, մինչդեռ աղքատները ոչինչ են համարում այդ: Երկիրը լեցուն է գողերով և ավազակներով, և աղքատը վախ չունի նրանցից: Դատավորները գայլացած ու գազանացած են, բայց աղքատը ապահով է նրանցից, որովհետև ստացվածք չունենալու պատճառով խաղաղ և անհոգ է նրա կյանքը, ազատ ամենքից, բոլորովին զերծ կասկածանքից՝ աննախանձ, անվրեժխնդիր և անմեղ բազմապիսի ախտերից: Նա կարիք չունի [բազում] շինությունների և ոչ էլ՝ փականների: Աղքատի հիվանդությունն պարագային տրտմություն չի լինում և ոչ էլ աղմուկ և հուզում է բարձրանում նրա մահվան պահին, այլ շատ անհոգ է աղքատի օրը և նրա կյանքը՝ անզբաղ, հանգիստ: Այս բոլոր ազատություններն այստեղ են և այնտեղ հարստություն, փափկություն և անանց բարիքի վայելչություն: Ո՞վ կարող է պատմել այն, որ պատրաստված է այնտեղ աղքատների և համբերողների համար: Ո՞ր բերանն է ի գորու պատմել, որովհետև այս աշխարհի թագավորությունների ամեն տեսակ վայելչություններից ավելի ցանկալի է թե միայն առանց տրտնջալու համբերի աղքատությանը, թեթև, անհոգությունը անցկացնի աշխարհիս կյանքը, որովհետև [այդպիսին] միայն օրվա կերակուրն է փնտրում և ննջում անհոգությունը: Իսկ հարուստներին և կուշտներին անուշ չեն թվում ախորժելի կերակուրները. հարբում են մեծագին գինով, թմրում և հիմարանում: Մինչդեռ

աղքատը պարզ ջրով հագեցնում է ծարավը և հարբեցողից ավելի առողջ և զգաստ լինում:

Արդ, ինչո՞ւ ես քեզ խեղճ ու թշվառական համարում. որքանով անհոգ, հեշտալի կյանք ունես, իսկ կերակուրներդ ավելի անուշ և ախորժելի եմ տեսնում քան հարուստներինը, որովհետև զերծ են ամեն տեսակ պղծությունից: Իսկ հարուստների փափկությունը նախ այն է, որ անսուրբ և անպարկեշտ են, նրանց շվայտությունները լի են ամեն տեսակ պղծություններով, որովհետև կուտակված են հափշտակությունը և զրկանքներով, անիրավությունը և ազահույնությունը: Նրանց սեղանները ստեղծվում են շատերի քրտինքով և հափշտակությունը: Նրանք ունեն շատ վախ և քիչ՝ վայելք, տեսակ տեսակ հոգսեր և աննշան հանգիստ և այն էլ բազում կասկածանքով, որովհետև աղքատի կարոտությունը քիչ է և հեշտ է նրա հանգիստը: Մինչդեռ հազիվ անկողին մտած թշնամիների ու պատերազմողների նման մտածումները պաշարում են հարուստին. տան և ծառաների հոգսը, գողերի և զրպարտողների ահը, դրացիների նենգությունը, իշխանների վախը, հարստության մտատանջությունը պատում են նրան թե ինչ հնարքով պետք է շատացնի իր ունեցվածքը: Ահավասիք դառն են հարուստների անկողինն ու հանգիստը, և ամենուրեք տխրությունները բարդվում են տխրությունների վրա, որովհետև տեսնում է խաչների ոչնչացումը և տրտմում: [Եվ հոգսերի] ալիքը հափշտակում է հարուստին: Իսկ ի՞նչ ասեմ կամ ի՞նչ պատմեմ անդենականի տանջանքների և գեհենի կրակի մասին, որ պատրաստված է ազահ և անողորմ հարուստների համար:

Եվ արդ, դու՛ աղքատդ և չքավորդ, ինչո՞ւ ես նեղվում ըն-
չազդրկությանդ նավահանգստի համար և փնտրում հարստու-
թյան այսպիսի մրրիկ և ալեկոծություն: Մի՞թե դու հարուստ
չես, երբ գիշերուզօր անհոգ ես թե՛ տան մեջ և թե՛ դրսում,
աներկյուղ ես ճանապարհի վրա, ապահով՝ օթևանում, ահ
չունես բռնավորներից, վախ՝ զրպարտողներից, և մանավանդ
երբ համբերությամբ դիմանում ես աղքատության փութանցիկ
փորձություններին, որովհետև մեծ բան է ունեցվածքը աղ-
քատներին բաշխելը, բայց ավելի մեծ է անձը աղքատացնել
խոնարհությամբ և գոհանալ Աստծուց: Այս բանը նաև Տերն է
հարգում և գովում. «Երանի հոգով աղքատներին, որովհետև
նրանցն է Աստծո արքայությունը» (Մատթեոս. Ե 3): Քանզի
աղքատությունը ինչ-որ չար բան չէ, և ոչ էլ Քրիստոս ամեն
ինչում աղքատությունն էր ընտրում, որովհետև նրան հարկ
էր թագավորական քաղաքում երևալ և թագավորների դուստ-
րերից հղացվել ու թագավորների ապարանքներում սնվել:

Բայց նա աղքատ կույսից աշխարհ եկավ և աղքատիկ քա-
ղաքում ծնվեց, ուր ոչ տուն և ոչ էլ օթևան կար, այլ՝ քարա-
հարկ մի իջևան, ուր ոչ մահճակալ կար և ոչ էլ օրորոց, այլ՝ մի
քարանձավ, որ հանգչեցնում էր արարածների Տիրոջը, որ սըն-
վեց հյուսնի հյուղակում, ճանապարհորդեց հետիոտն և իջնե-
լով այնքան խոնարհվեց, որ մինչև իսկ աշակերտների ոտքերը
ծառայաբար լվաց: Եվ ովքեր կամեցան երկնքում հարստանալ՝
այսպիսի օրինակով աղքատությունն ու խոնարհությունը ընտ-
րեցին: Իսկ դու, ո՛վ մարդ, ինչո՞ւ ես դողում քո աղքատու-
թյունից, որով անհոգությամբ երկիրքն ես վայելում և ժառան-


գում երկնքի անանց բարիքը աննշան աղքատությանդ փոխա-
րեն, որովհետև երկուն են մարմնի նեղությունները և հեշտու-
թյուններն այստեղ և անդենականում, որովհետև կամ ժառան-
գելու ես հավիտենական և անանց բարիքը կամ էլ այստեղի՛
անցավոր: Կամ աղքատանալու, նեղվելու ես մշտնջենականի
մեջ կամ էլ մի կարճ ժամանակի մեջ, և կամ այստեղ լալու և
սգալու ես կամ՝ այնտեղ, կամ էլ այստեղ համբերելու և տոկա-
լու ես նեղություններին, կամ՝ այնտեղ: Ինչպես Եղիա մարգա-
րեն այստեղ նեղվեց և աղքատացավ ու երկնքում հարստացավ
և փառքով փառավորվեց: Նույնպես և այստեղ Հովհաննես
Մկրտիչը աղքատացավ, քաղցեց, տառապեց և երկնքում
անանց բարիք ժառանգեց, նույնպես և բոլոր մարգարեներն ու
առաքյալները անցավոր նեղությամբ անանց կյանքի վայելչու-
թյունները ստացան: Նաև մեր առաջին հայրերը աղքատու-
թյան կյանքը ընտրեցին, որովհետև գիտեին, որ չափազանց
դժվար է աշխարհային հարստությամբ երկնքի արքայու-
թյունը ժառանգել և ժամանակավոր փափկությամբ երկնքի անհատ-
նում փափկությունները վայելել: Որովհետև ասում է, թե դժ-
վարին է փափկասեր մարդուն Քրիստոսի երեսը տեսնել, այլ
հանգիստը և արքայությունը նեղյալների, ջանացողների և կա-
րոտյալների համար է: Եվ Աստված այնքան անիրավ չէ, որ
նեղյալներին և տառապյալներին բանտից հանի բանտ նետի,
բայց եթե աղքատությունը գոհությունը տանեն՝ բազում ան-
բավ բարություններ կան ամբարված երկնքում:

Արդ, ո՛վ աղքատ և չքավոր, ո՞ւր է քո ուրախության պա-
կասությունը, որ բազում հայհոյանք ես ուղարկում դեպ եր-

կինք և խոսում Աստծո անիրավության մասին, այլև ասում ես, թե ունեվորը շատ հարստություն ունենալով կարող է բազում ողորմություն բաշխել: Բայց իմացիր, թե աղքատի տված ողորմությունը ավելի զարմանալի և ընդունելի է քան հարուստինը, որովհետև եթե մեկը սիրով մի տառապյալի խնամի, հարկ է, որ իր սակավ ունեցվածքից սակավ բաժին հանի տառապյալներին և գերազանցի մեծաքանակ [ողորմությանը], որովհետև Աստված ոչ թե տրվածի քանակին է նայում, այլ տվողի կամքին, և քիչն ընդունում, որպես շատ: Բայց եթե կարոտյալներին մխիթարելու համար ինչքեր չունես՝ տուն ունես օտարականներին հյուրընկալելու, ջուր՝ ծարավը հագեցնելու, գութ և ողորմություն ունես, որով լալիս և ողբում ես վշտացյալներին և ցավագարներին, որովհետև այսքան ողորմությունը մեծ է քան ինչքերի բաշխումը: Նաև նախանձում ես, որ հարուստը իր հարստությունից պատարագներ և պտուղներ է մատուցում: [Բայց] աղքատին պարտ է ավելիով գերազանցել հարուստին: Քո անձը խոնարհությամբ և անմեղությամբ պատարագ մատուցիր Աստծուն, [որովհետև] «Աստված չի արհամարհում խոնարհ հոգին և սուրբ սիրտը» (Սղմ. Ծ 19): Սա ավելին է, քան խոյերի ու զվարակների ողջակեզերը, որովհետև Դավիթ մարգարեն սուրբ սիրտը և խոնարհ հոգին գովելով՝ ընդունելի և Աստծուն հաճելի պատարագ է անվանում: Եվ եթե նախանձես հարուստի կալի և հնձանի պտուղներին, ապա դու ևս պտուղ բեր Աստծուն քո անդամներից, որովհետև աչքի պտուղը կույրին առաջնորդելն է և նրա տեսանելիքի պետքերը տեսնելն է: Ձեռքերի պտուղն է անդամալույծին սպասավո-

րելը և չորացածին օգնելը: Ոտքերի պտուղն է կաղին նեցուկ լինելը և նրա ոտքերի պետքը կատարելը: Լեզվի պտուղն է մոլորյալներին սովորեցնելը և տխուրներին մխիթարելը: Լսելիքի պտուղն է փութով լսել եղբոր և մեծավորի հրամանները և նրանց կամքին խոնարհությամբ ենթարկվել: Եվ այս բոլոր ողորմությունները պարտ է առանց ոսկու և արծաթի ամենքին բաշխել և ինչքերի ողորմությունից ավելի մեծ վարձ ընդունել:

Եվ արդ, ի՞նչ ունես առարկելու. որովհետև աղքատների պատարագը, ողորմությունը և պտուղները ավելի դյուրին և ընդունելի են, քան հարուստներինը: Հանուն որի բազում ժուժկալությամբ համբերեք նեղություններին, և, հանձնառու լինելով, գոհությամբ ընդունեք ձեր վարձը: Բայց եթե տրտնջաք, հայհոյեք և աղքատությունը մի չար բան համարեք՝ կընդունեք ձեր չարագործությունների հատուցումը, որովհետև անսուտ է նա, որ ասում է, թե կան ոմանք, որ տանջվում են այստեղ և այնտեղ, քանզի այստեղ տանջվում են աղքատությամբ և այնտեղ՝ տրտնջալու, հայհոյելու պատճառով արդար Դատավորից հանդիմանվելով կշտամբվելու են, հալումաչ լինելու գեհեհում, որոնք սողոմացիների նման տանջվեցին այստեղ և այնտեղ էլ պետք է տանջվեն: [Ուստի] չլինի թե ընկնեսք այնտեղի տանջանքների և դատապարտության մեջ: Այլ մեր մեղքերը ապաշխարենք, նեղություններին համբերենք, աղքատությունը սիրենք, վշտերից գոհանանք, ընչազրկությունը փառավորենք, բազում առաքինություններով երկինքը ժառանգենք և անբավ բարությունների վայելչությունն ըմբոշխնենք մեր Տեր Հիսուս Քրիստոսով, որին փա՛ռք հավիտյանս. Ամեն:



Դ

ԽՐԱՏՆԵՐ ՎԱՐՔԻ ԵՎ ԿՅԱՆՔԻ, ՊԱՏԳԱՄՆԵՐ ԵՎ
ՔԱՐՈՉ ՀԱՅՀՈՅԱՆՔԻ, ԿԻՐԱԿԻՆ ՀԱՐԳԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԱՍՎԱԾ ԳՐԻԳՈՐԻՍԻՑ, ՈՐՆՐԱՆ
ՀԱՅՏՆՎԵԼ ԷՐ ԱՍՏԾՈՒ ԵՎ ԲՈԼՈՐ ՍՐԲԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Պարտ և արժան է բոլոր քրիստոնյաներին հավատալ ու երկրպագել ամենասուրբ Երրորդությունը, Հոր, Որդու և Սուրբ Հոգու Աստվածությունը, ու երկյուղով, սիրով մնալ, ըստ նրա հրամանների, ինչպես ասաց Տերը, թե՛ «Պետք է սիրես քո Տեր Աստծուն Գո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով և քո ամբողջ մտքով» (Մատթեոս ԻԲ 37): Այս է Արարչից մեզ տրված մեծ և առաջին պատվիրանը, որից հետո միայն [հրահանգում է] այլ կարգադրություններ կատարել, ինչպես ասում է Տերը. «Ով սիրում է ինձ՝ իմ պատվիրանները կպահի» (Հովհ. ԺԴ 15): Եվ հարկ է երկյուղով մնալ ու զգուշանալ անձի համար ամեն տեսակ մեղքերից, ինչպես ասում է Դավթի սաղմոսը, թե՛ «Երանելի է այն մարդը, որ երկյուղում է Տիրոջից և պահում նրա պատվիրանները» (Սղմ. ՃԺԱ 1): Որովհետև հարկավոր է մի-

այն հավատքի վրա վստահանալ և ուրիշ բարիք չգործել, այլ մարդուն հարկ է ունեցած հավատքի, իբրև բարի հիմքի վրա շինություն դնել և հաստատել, որով կառուցվում է տունը և շինվում ի բնակություն Աստծո, ըստ առաքյալի խոսքի, որ ասում է, թե Աստծո տուն ու տաճարն ենք (Ա Կորնթ. Գ 16, Զ 19), որ բարեգործության և հուսո պարծանքի մեջ հաստատուն ենք մինչև վերջ, որովհետև շինվածքն առանց հիմքի մի բան չէ: Նույնպես և շինվածքն առանց հիմքի հաստատուն չէ, այլ շուտ փլուզվում է, ըստ Տիրոջ խոսքի, որ ասում է, թե՛ «Ով տունը շինում է առանց հիմքի շուտով կկործանվի» (տե՛ս Ղուկ. Զ 49): Նույնպես և գործերն են առանց հավատքի անօգուտ, իսկ հավատքն էլ առանց գործերի՝ ունայն (Հմմտ. Հակոբ Բ 20, 26), ինչպես մարմինն է առանց հոգու մեռած, համաձայն Հակոբ առաքյալի: Այլ հարկ է ուղիղ և մոտիկ պահել հավատքը, և ապա հավատքից հետո զգուշանալ ամեն տեսակ մեղքից. ազահույնից, գողությունից, շնությունից, պոռնկությունից, զրկանքներ [պատճառելուց], սուտ և ճշմարիտ երդումից, զրախոսությունից, բամբասանքից, ընկերոջը դատելուց, հայհոյանքից, որ ավելի ծանր է ամեն տեսակ մեղքից և Աստծուն դնում է բարկության մեջ, որովհետև այլ են այն մեղքերը, որ մարդիկ ծածուկ են գործում, միայն իրենք գիտեն, և մեղք գործելիս վախից հալումաչ են լինում՝ չլինի թե մեկը տեսնի իրենց և հանդիմանի: Մինչդեռ հայհոյանքը բացահայտ մեղք և բոլորին մեղքի մղող լիբբ անօրենություն է և պղծում է իր ու լսողի հոգին: Եվ թող մեկը չասի, թե հայհոյանքը խոսքով մեղանչելուց ծանր մի բան չէ: Արդ, լսիր դու, որ այդ ես ասում՝ խոս-

քի մեղքը գործից ծանր է, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Շները, պոռնիկները, գողերը, թշնամացողները, բամբասողները և հարբեցողները Աստծո արքայությունը չեն ժառանգելու» (Ա Կորնթ. Զ 10): Արդ, տես և իմացիր, որ թշնամացողն ու բամբասողը պոռնիկի և շնացողի հետ դուրս են գալու արքայությունից և տանջվելու գեհենի կրակի մեջ: Ահա տես խոսքով մեղանչեցին, բայց գործողների հետ հավասարվեցին և տանջվեցին: Եվ իրապես բամբասողները դատվելու են պոռնիկների հետ, որովհետև երբ մեկը գործով է մեղանչում դու նույնը լեզվովդ ես պատմում, բամբասում ու դատում, [ուստի] միասին պետք է տանջվեք, որովհետև միևնույն է ստորին անդամներով մեղանչեցիր թե՞ վերին: Արդ, եթե բամբասանքը մարդուն հանում է արքայությունից, ապա տես նա, ով բացելիքաց թշնամանում և հայհոյում է, խավարը չի՞ գնալու: Եթե ասես թե խոսքի մեղքը այնքան ծանր է. [կպատասխանեմ] այո շատ ծանր է, որովհետև չնայած խոսք է, բայց սրտից է դուրս գալիս: Լսիր Քրիստոսին, որ ասում է Ավետարանում. «Սրտից են դուրս գալիս չար խորհուրդները. սպանություն, շնություն» (Մատթեոս. ԺԵ 19) և այլն: Մի՞թե սուտ և չար խոսելը, հայհոյելը խոսքի մեղք է, բայց գործողության [մեղք] համարվեց: Ասում է. Սրանք են, որ պղծում են մարդուն և հանում արքայությունից, որովհետև լուտանքն ու չարախոսությունը հայհոյանքի համար է ասում, քանզի ով հայհոյում է Աստծուն է հայհոյում, և աշխարհում էլ ի՞նչ ծանր մեղք կա դրանից ավելի, քան այն, որ Աստծուն են հայհոյում: Ու եթե ասես թե Աստծուն չեմ հայհոյել, այլ մարդուն եմ անարգել

բաց աչքերդ և տես, որ Աստված մարդուն իր պատկերով արարեց, և դու Աստծո պատկերը, պղծում ես հայհոյանքով: Տես, թե քանի՞ քանի՞ կորուստ ես պատճառում. սրանից ավելի էլ ի՞նչ հայհոյանք: Եվ չես լսում Քրիստոսին, որ ասում է, թե ամեն դատարկ բանի համար հաշիվ եք տալու դատաստանի օրը (Մատթեոս. ԺԲ 36): Եվ դարձյալ, թե «Քո խոսքերով պետք է արդարանաս և քո խոսքերով պարտավորվես» (Մատթեոս. ԺԲ 37): Եվ Սողոմոն Իմաստունն ասում, թե «Մարդու կյանքն ու մահը լեզվի ձեռքին են» (Առակ. ԺԸ 21): Եվ Հակոբոս առաքյալն ասում է. «Ով խոսքով չի մեղանչում նա կատարյալ մարդ է» (Հակ. Գ 2) և ով չի սանձահարում իր լեզուն, այդպիսի հավատքը իզուր է, իսկ պահքն ու աղոթքը՝ անօգուտ:

Արդ, լսեք Աստծո ահը և ի մտի ունեցեք, թե որքան ծանրություն կա խոսքի մեղքի մեջ: Եվ Տերը հրամայում է Ավետարանում, թե «Ով իր եղբորն ասի՝ հիմար, ենթակա կլինի գեհենին, և ով իր եղբորն ասի՝ ապուշ, կգնա հավիտենական կրակի մեջ» (Մատթեոս. Ե 22): Իսկ եթե մեկը հայհոյանքով ապականում է մարդու, որ Աստծո պատկերն ու նմանությունն է տես, թե արդյոք ո՞ր խավարը նա չի գնա: Եվ դարձյալ Պողոս առաքյալն ասում է, թե «Մի՛ մարեք Աստծո հոգին, որով կնքվեցիք փրկության օրվա համար» (Ա Թեսաղոնիկ Ե 19): Եվ ով հայհոյում է իր անձի մեջ մարդու է Սուրբ Հոգին և նրա հոգին խավարում է, որովհետև երբ մանուկը մկրտվում է ավագանում, նրա մեջ վառվում է Սուրբ Հոգու լույսը, և երբ մեծանում, հայհոյում է, այն լույսը, որ Սուրբ Հոգուց է վառ-

ված, անցնում և մարում է նրա մեջ, և նրա հոգին խավար է դառնում: Եվ այնպես է համարվում, թե դուրս եկավ հավատքից և անհավատների շարքին դասվեց: Եվ այսպես. ծանր են հայհոյանքի խոսքերը, որովհետև մարդուն հանում են հավատքից: Ի՞նչ օգուտ է մարդուն լեզվով ասել, թե քրիստոնյա եմ և դարձյալ նույն լեզվով հայհոյանքով իրեն հանել քրիստոնեությունից: Եվ Աստված բարկանում է մարդու, տան և բնակավայրի վրա, որովհետև Պողոս առաքյալը ևս ասում է, թե՛ «Աստծո բարկությունը գալու է անհնազանդ մարդկանց վրա» (Եփեսացիներին Ե 6), ուրեք, թե՛ տղամարդ և թե՛ կին, չարություն են գործում, հայհոյում, որովհետև կանանց հայհոյանքը ավելի է զայրացնում Աստծուն և պատուհաս բերում աշխարհին, քանզի կանանց համար գովելի է պարկեշտ և խոնարհ մնալը, համեստ խոսելը, ամոթխած լինելն ու քայլելը, այնպես որ ոչ ոք չլսի նրանց խոսքը, այլև գլխահակ լինելը, հեզ ու հանդարտ խոսելը: Այս է կանանց պարծանքը Աստծո և մարդկանց մոտ, նրանց, որ մարդկանց առջև կանգնում են ամոթխածությունից և պատկառանքով: Իսկ ուրեք անպատկառ են, անհամ, հանդուգն, բարձր են խոսում, անպարկեշտ կեցվածք և քայլվածք ունեն, անտեղի ծիծաղում են և անամոթաբար բոլոր մարդկանց երեսին նայում, այսպիսի կանայք պոռնիկներից ավելի են բամբասավում և հայհոյվում մարդկանցից ու դատապարտվում Աստծո կողմից, որովհետև չպահեցին իրենց պարկեշտությունը: Իսկ եթե կանայք հայհոյանք էլ են տալիս՝ տես թե ի՞նչ խավարի ու տանջանքի մեջ պետք է գնան, որովհետև ուրեք բերանից հայհոյանք են հանում՝ պղծում են օդը և ուր

հասնում է հայհոյանքի ձայնը՝ բոլոր սահմաններն ու վայրերը պղծվում են և այնտեղ կաքավում են դեերը, ինչպես ծուխն է մեղուններին հալածում այդպես էլ հայհոյանքն է մարդուց հալածում Սուրբ Հոգուն: Այն բերանը, որ հայհոյում է, դառնում է դեերի երգարան և այնտեղ չի բնակվում Աստծո շնորհքը և տունը չի գործնում, ոչ էլ այգին է պտուղ բերում և անշահ ու առանց մերձավորի են մնում: Եվ Աստված առավել բարկանում է այն մարդուն, որ հայհոյում է անասունին, որովհետև չափազանց անմտություն է անբանների վրա զայրանալով նրանց իբրև բանականների հայհոյել, որովհետև Աստված հրամայեց, թե՛ ով անասուններին անողոքաբար ծեծի՝ դա մեծ մեղք կհամարվի և [դրա համար] պատիժ կկրի (Հմմտ. Ղեկտ. ԻԴ 18): Մինչդեռ դու ծեծում և հայհոյում ես. մի՞թե Աստված, որ նրան տվել է քեզ, չի զայրանա, ավելին, կվերցնի նրան քեզանից և քեզ էլ կդատի ու կտանջի անողորմ մարդկանց հետ, որովհետև Աստված անասուններին մեզ տվել է ծառայելու համար, որպեսզի կերակրենք, դարմանենք նրանց և մեր պետքերն ու կարիքները նրանցով հոգանք ու գոհանանք Աստծուց, որ նրանց տվել է մեզ: Իսկ դու գոհանալու փոխարեն Աստծուն բարկացնում ես հայհոյանքներով: Տեսեք, թե որքան կորուստ է պատճառում հայհոյանքը և հոգին սատանային մատնում, և որքան շատ է աշխատում՝ ոչ շահում է, ոչ էլ փրկվում, որովհետև Աստված չի ընդունում [այդ]: Եվ սա անօգուտ է մարմնին, իսկ մահից հետո էլ արժանի չի դառնում հաղորդություն այն պիղծ բերանը, որ հայհոյում է, որովհետև, ուր հայհոյանք են լսում, որ տալիս են մարդիկ, ասում են թե Աստծուց է հրա-

մայված և թե՛ ինչ էլ որ ասես [միլենոլյն է] Աստված կանիծի այդ բերանը, և Աստված էլ անիծում է: Տես, թե ինչպես են չըքմեղողթյուն գտնում: Եվ կապված բերանը գնում է Աստծո առաջ ու դատաստանի օրը որդնալից լինում: Այլև կապված ձեռք ու ոտքով հեռացնում են Աստծո երեսից և տանում հավիտենական խավարի ու կրակի մեջ:

Արդ, եղբայրներ, լսեք Աստծո սպառնալիքները, դադարեցեք մեղք գործելուց, այլև մանավանդ նրանցից, ովքեր չեն պատվում կիրակին, այլ անխտիր գործում և աշխատում են, որ առավելագույնս տանջվելու են Քրիստոսի գալստյան ժամանակ, որովհետև կիրակի օրը դատաստանին պետք է Քրիստոս գա՝ դատելու ողջերին ու մեռյալներին: Եվ իմացեք, թե նա, ով թագավորի օրը չի պատվում՝ անարգում է թագավորին, նույնպես և նա, ով չի պահում և պատվում կիրակին՝ անարգում է Քրիստոսին, որովհետև Քրիստոս հրամայեց թե՛ Կիրակին իմ օրն է, ով հավատում է Ինձ և պատվում և ընդունում Ինձ, նաև կիրակին է պատվում, որովհետև Քրիստոս կիրակի օրը հարուժյուն առավ մեռելներից և կիրակի օրը պետք է աշխարհ գա և կիրակի պետք է դատաստան կատարի: Իսկ եթե չի պատվում կիրակին, արհամարհում է Աստծո ամեն տեսակ երախտիքները՝ հարուժյունը, համբարձումը, երկրորդ գալուստը, ննջեցյալների հարուժյունը: Եվ ով կիրակին չի պատվում՝ երախտամոռաց է գտնվում Աստծո բարիքի հանդեպ: Կարծում եմ, որ այնպիսին չի ունենա կյանքի հարուժյուն, այլ կրկին դժոխք է գնալու, ըստ Դավիթ մարգարեի, թե՛ «Մեղավորները կրկին դժոխք կընկնեն և բոլոր մեղավոր-

ները՝ ովքեր մոռացան Աստծուն» (Սղմ. Թ 18): Եվ ո՞վ է նա, որ մոռանում է Աստծուն, եթե ոչ նա, ով կիրակին չի պահում և պատվում, [իսկ եթե պահեց]՝ Աստծուն մոռացած չէր լինի: [Բայց] նրա անհավատությունը երևում է գործից, որովհետև չի մեծարում կիրակի օրը, որովհետև ով անարգում է թագավորին՝ ինքը կանարգվի թագավորից: Նույնպես՝ ով Քրիստոսին անարգի և չմեծարի կիրակին՝ ինքը կանարգվի Քրիստոսից, որովհետև Քրիստոս հրամայում է իր սուրբ Ավետարանում, թե՛ «Փառավորելու եմ Ինձ փառավորողներին և անարգելու Ինձ անարգողներին» (Ա Թագ. Բ 30), և «Ով Ինձ անարգի՝ անարգում է Ինձ առաքողին» (Հովհ. Ե 23):

Արդ, եղբայրներ, տեսեք կիրակիի ծանրությունը, որովհետև Աստծո մոտ է բարձրանում արհամարհանքը և ծանր մեղք է գործում նա, ով արհամարհում է Արարչին, անտեսում նրա երախտալից բարությունները, իսկ եթե դա մարդը մարդուն աներ՝ նա կբարկանար և մահ կբերեր նրան, էլ ո՞ւր մնաց նրանք, ովքեր անարգում են Աստծո բարիքը և չեն գոհանում բարիքի Տվողից, որովհետև Աստված պատվիրեց քեզ վեց օր աշխատել և հրամայեց մեկ օր հանգստանալ աշխատանքից և հիշել Աստծուն՝ քո Արարչին: Եվ հարկ է իմանալ, որ վեց օր քեզ տվեց և մեկ օրը Իրեն վերցրեց: Արդ, դու անիրավ զրկողի և հափշտակողի նման չես ամաչում արդարությունից, որ քո վեց օրը վերցնում ես և դառնալով հափշտակում և քեզ ես վերցնում Աստծո մեկ օրը, և այդ մեկ օրը փոխ չես տալիս Աստծուն, որ քեզ է տվել քո բովանդակ կյանքը: Դու դրա համար չես գոհանում, և այն մեկ օրվա պատիվը խլում ես

Աստծուց, չես աղոթում Նրան և շնորհակալ լինում Նրան, որ կյանքի վայելքը շնորհեց քեզ և այդ մեկ օրով քեզ հիշեցրեց Իր ապագա գալուստը ու մշտնջենավոր հանգիստը, և ցույց տվեց, թե ով այս կիրակին հանգստանա՝ այն կյանքում հանգիստ կգտնի, և եթե այս կիրակի մի բան անի՝ այն կյանքում անհանգիստ կտանջվի: Արարածների մեջ վերջին և առաջին օրը կիրակին է, և նա բոլոր օրերի թագն է, և ուրիշ օր չի կարող փոխարինել նրան: Այս պատճառով նրան Աստծո օր ենք անվանում: Ինչպես Աստված Տերն է ամեն տեսակ երկնավորների և երկրավորների և մնում է հավիտյանս հավիտենից, որովհետև առաջ անսկիզբ, անժամանակ էր, այդպիսին է միշտ, կա և կմնա մշտնջենապես, այսպիսին է կիրակին սկզբից. աշխարհի գոյանալու առաջին օրը, երբ Աստված ասաց. «Եղիցի լոյս և եղեւ լոյս» (Ծննդ. Ա 3): Որովհետև Աստված մեծարեց կիրակին և Իր նման նրան աշխարհի լուսատու դարձրեց, որ միշտ կա ամեն շաբաթ և կիրակի, որովհետև նրանով ենք հիշում Աստծուն, մեր Արարչին: Եվ գիտենք, որ նրանով լուսավորեց մեզ առաջին լինելու թյանը և [լուսավորելու է] մեր երկրորդ լինելու թյանը: Դարձյալ կիրակի օրը մեզ ծագեցրեց Իր հարու թյան լույսը և մեզնից վանեց մահվան և մեղքի խավարը: Եվ նրանով ենք միշտ կատարում և իմանում, թե վերջին օրը կիրակին է՝ աներեկո և անփոխարինաբար թագավորող անմահ Աստծո հետ: Որովհետև այն օրն է ծագում աչքի լույսը և Քրիստոսի գալուստը: Այդ պատճառով Աստված հրամայեց մեզ մեծարել կիրակին և հանգստանալ ու Քրիստոսի գալուստանը սպասել: Իսկ ով պատվի և մնա՝ նա ու-

րախուժյամբ նրան ընդառաջ կգնա, իսկ ով չպատվի՝ չի լինի նրա գալուստանը: Այս պատճառով հարկ է պատվել կիրակին իբրև Քրիստոսի գալուստյան օր և հանգստանալ մարմնական աշխատանքներից և Աստծուն պաղատել, աղոթել և նրա պատվիրանները քննել ու խորհել թե այս շաբաթ Աստծո պատվիրաններից ո՞րն եմ կատարել և կամ ո՞րն եմ մոռացել և կամ այս շաբաթ ի՞նչ մեղք եմ գործել Աստծուն ու հեռացել նրա կամքից: Հարկավոր է կիրակի օրը նստել տանը և մտածել այս բոլորի մասին և հիշել, որ Քրիստոս այսօր է [նորից] աշխարհ գալու և այսօր է արդարների ու մեղավորների դատաստանը անելու: Եվ արդ, արդարներին հանգիստ է պարգևելու և մեղավորներին հատուցելու է տանջանքով: Իսկ ես՝ գերիս, որ մեղավոր եմ և անարժան, ի՞նչ եմ լինելու այն ահեղ կիրակի օրը, որ բարիք չեմ գործել, այլ մեղք ու բազում չարիք կատարել, ուրեմն ինձ էլ է տանջելու: Վա՛յ ինձ. որովհետև այսպիսի խոսքերով և մտածումներով է հարկ անցկացնել կիրակին և ամեն բանից հեռու մնալ, և այս ամենի մասին խորհել, ինչպես մարգարեն է ասում, թե՛ Ամեն ինչից հեռու մնացեք և ճանաչեք Աստծուն, աղոթեցեք ի խորոց սրտի և ասացեք. Քրիստոս, փառքի Թագավոր, երբ կիրակի օրը գաս հայրական փառքով՝ դատելու աշխարհը, ողորմիր ինձ՝ մեղավորիս և խնայիր Քո արարածներին: Հարկ է այսպիսի խոսքերով Աստծուն աղաչել, որպեսզի առաջիկա շաբաթ արժանի դարձնի խաղաղությամբ և առողջությամբ աշխատել և շահել: Եվ ով այս կյանքում պահի, պատվի և աղոթի կիրակի օրը, նա կհանգստանա գալիք կիրակիին և կբազմի Քրիստոսի աջ կող-


մը, իսկ ուղքեր չպատվեն, այլ անխտիր աշխատեն ու գործեն և չիմանան, թե ինչ է այս օրը, նրանք համարվելու են անասունի պես և անասուններից ավելի վատթար, որովհետև անասուններն անբան են և ոչինչ չունեն, չեն խնդրում և Աստված էլ նրանցից չի խնդրում, այլ կան ու մեռնում են, ոչ բարիք են անում և ոչ էլ տանջանք [կրում]: Մինչդեռ մարդս Աստծո պատկերով է գոյացած, խոսքով մեծարված և իր կամքի իշխան է կարգված: Այս բոլորը Աստված է տվել մարդուս և նրան կնքել քրիստոնյա անվամբ, միտք ու զգայություն տվել և նրա համար արարել աշխարհը, արեգակը, լուսինը, աստղերը երկրին լուսատու [դարձրել], բույսերը, պտղաբեր ծառերը և անասունները՝ ծառայություն և կերակուրի համար: Եվ ոչ միայն այս, այլև հրեշտակներին [կարգեց] մարդկանց սպասավորելու և պահպանելու համար: Եվ այս ամենը մարդու համար արեց. անձրևը ի շահ և ի սնունդ բույսերի և տունկերի: Եվ ի հավելումն այս բոլորի Ինքը Բանն Աստված աշխարհ եկավ մեզ համար և մարմին հագավ կույս Մարիամ Աստվածածնից, մեր մահկանացու մարմինն առավ և թշկեց բազում հիվանդների մեր բնություն օրինակով, և հետո խաչվեց մեզ համար, անարգվեց, պախարակվեց, լուտանքների ենթարկվեց, խոցվեց, մեռավ բոլորի համար, թաղվեց և մեր մահվան պարտքը Ինքը հատուցեց Իր մահվամբ: Բայց և հարություն առավ և մեզ հարություն պարգևեց մեր մեռելությունից, երկինք հանեց և նստեցրեց Աստծո Աթոռի աջ կողմում:

Արդ, ի մտի ունեցեք Աստծո բոլոր երախտիքները, որ արել է մեզ: Եվ Աստված ի՞նչ է խնդրում մեզանից սրա փոխարեն.

ոչ այլ ինչ, բայց եթե սիրել նրան, կատարել նրա հրամաններն ու պատվիրանները: Եվ ով չի պատվում կիրակին՝ չի կատարում նրա հրամանները, որովհետև եթե այդ մի հրամանը չի կատարում, որ բոլորից դյուրին և թեթև է, քանզի դադար է աշխատանքից, ուրեմն իմացիր, որ մնացածն էլ չի կատարել: Այնժամ իր գալստյան պահին Տերը կասի Իր հրեշտակներին. Դրանից վերցրեք քրիստոնյայի անունը, և այդ անպիտան ծառային հանեք արտաքին խավարը, ուր աչքերի լաց և ատամների կրճտոց է (Մատթեոս ԻԲ 13), որովհետև դա իմ պատվիրաններից և ոչ մեկը չպահեց, արհամարհեց ինձ և իմ խոսքը: Տերը այս հրամայեց Ավետարանում, թե՛ ով իմ պատվիրաններից մեկը չկատարի՝ չի մտնի երկինքի արքայություն (Հմմտ. Մատթեոս. 19), Աստված այս կյանքում կիրակին իբրև հանգիստ շնորհեց, այնպես որ նույնիսկ հրամայեց կիրակի օրը ծունկի չգալ, էլ ուր մնաց որևէ բան անել, և այն [հավիտենական] հանգիստը սրանով մեզ ցույց տվեց, թե այնպիսի հանգիստ է, որ ամենևին աշխատանք չկա: Եվ ով չի պատվում կիրակի օրը և աշխատում է, որովհետև Աստված այսպես է ասում նրան, թե՛ Այ չար և վատ ծառա, երբ ես քեզ խնայեցի և կարգադրեցի ինձ ծունկի չգալ, որպեսզի քեզ ծանր չլինի՞ դու ինքդ քեզ ինչո՞ւ տանջեցիր, այնժամ Տերը բարկանում և բարկությունը նրան ուղարկում է տանջանքի և հավիտենական կրակի մեջ: Եվ եթե կամենում եք այստեղ տեսնել Աստծո բարկությունը, որ թափվում է աշխարհի վրա, ապա դա կարող է կիրակիի պատճառով լինել, նրա, ով չհանգստացավ և աշխատեց: Կիրակիի պատճառով է կրակն ու հրդեհը, ժանգը, օդի

ապականումը և այլ բազում պատահարները, որովհետև ծանր մեղք է, անարգանք, հայհոյանք Աստծուն: Քանզի այն մարդը, ով աշխատում է կիրակի օրը՝ ոչ Աստծուց է երկյուղում և ոչ էլ մարդուց ամաչում, ինչպես մարգարեն ասում է, թե՛ Աստված ավելի ատում է լրբին քան մյուս մեղավորներին, որովհետև ուրիշ մեղքեր գործելիս մարդիկ ամաչում, հալուժաչ են լինում, իմանում են, որ մեղքով վնասվեցին: Այնպիսինների մեղքը Աստված դյուրությամբ է թողնում ամաչելու պատճառով: Իսկ ովքեր հայհոյում են և աշխատում կիրակի օրը՝ մարդկանց առջև գործում են բացահայտորեն, անամոթաբար ու ասում, թե՛ ոչ Աստծուց ահ ունեն, ոչ էլ՝ մարդուց: Այս պատճառով Աստված նրանց դատում է թե՛ այս և թե՛ այն կյանքում, բարկանում և բարձիթողի է անում աշխարհը:

Արդ, եղբայրներ, լսեք Աստծո պատվիրանները և ի մտի ունեցեք տանջանքների ահն ու երկյուղը և զգուշացեք ձեր անձերի համար, որպեսզի այստեղ և այնտեղ չտանջվեք, այլ պահելով Աստծո պատվիրանները, փրկություն գտնեք և արժանի լինեք Աստծո արքայությունը, և կիրակի օրը ընդառաջ գնաք Քրիստոսին և իբրև շատ սիրելի համբուրեք նրան ու նրա Աջ կողմում նստեք: Եվ դուք, եղբայրներ, սիրեցեք իրար և սիրեցեք Աստծուն, ողորմություն արեք ընկերոջը, աղքատին, տնանկին, և ինչպես Դավիթն ասաց. «Ով մտածի աղքատի և տնանկի մասին՝ Տերը չար օրվանից կփրկի նրան» (Սաղմոս Խ 2): Եվ ձեր մեղքերը խոստովանեք ու ողորմությամբ քավեք և արժանի եղեք երկնքի արքայությունն ի Քրիստոս Հիսուս, ի Տեր մեր, Որին փա՛ռք հավիտյանս. Ամեն:



Ե

ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑՈՒ ՇԱՀԱՎԵՏ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ

Արդ, ով ցանկանում և փափագում է անանց կյանքին, անվախճան փառքին, թող հաստատվի կյանքի մեջ և զանց առնի այստեղի անցավոր փառքը: Ով ցանկանում է դրախտի փափկությունը, թող այստեղ մարմնով չփափկանա: Ով կամենում է ապրել հրեշտակների հետ, թող այստեղ չնստի հրապարակներում: Ով Տեր Հիսուսին սիրում է սրտով, թող այստեղ անբաժան լինի նրանից՝ անարատ սրբությամբ: Ով աճապարում է մտնել լույսի առագաստը, թող այստեղ իր հետ վերցնի ողորմության յուղը: Ով վախենում է անվախճան որդից, թող այստեղ լեզվով չխայթի իր եղբորը: Ով զարհուրում է բորբոքված բոցից, թող այստեղ իր մեջ մարի նախանձի բոցը: Ով վախենում է արտաքին խավարից (Հմմտ. Մատթեոս. Ը 12, ԻԲ 13), թող այստեղ մեղքի խավարի մեջ չչրջի: Ով երկյուղում է աչքերի լացից և ատամների կրճատցից, թող այստեղ իր աչքերից չցամաքեցնի արտասուքի վտակները: Ով սարսափում է աններելի տանջանքներից, թող այստեղ զօրուգիչներ անդադար լա: Ով դողում է աններելի պատուհասից, թող այստեղ միշտ չհանդգնի: Ով կամենում է երկար ճանապարհ գնալ, թող այստեղ ճանապարհի պաշար

պատրաստի: Ով կամենում է դառն ու ահեղ դատաստանի ժամանակ անդատ և անդատապարտ մնալ, թող այստեղ չդատապարտի իր եղբորը: Ով իր տիրոջը պարտական է բյուր քանքար, թող այստեղ իր նմանին գիջի հիսուենն ու հարյուրը: Ով կամենում է դեերի չարութեան միջով անցնելու վհասնել երկինք, թող այստեղ խնդրի իր Տիրոջ օգնութեանը: Ով ցանկանում է անանց պսակին, թող այստեղ համբերի ամեն տեսակ վշտի և նեղութեան: Ով կամենում է փրկվել բոցածավալ ծովից, թող այստեղ արտասուքով ծովացնի իր աչքերը: Ով կամենում է անվնաս անցնել հրեղեն գետով, թող այստեղ բազմապատկի ողորմութեանը: Ով ցանկանում է մտնել անսուտ վայելչութեան մեջ, թող այստեղ չծուլանա գնալ հիվանդատեսի: Ով ախորժում է լսել երանավետ ձայնը, որն ասում է. «Ազնիվ ծառա՝ բարի և հավատարիմ» (Մատթեոս. ԻԵ 21, 23), թող այստեղ ականջը չխցի ողորմութեան խնդրողների առջև: Ով ախորժում է ժառանգել այն, ինչ աչքը չտեսավ և ականջը չլսեց (Ա Կորնթացիս Բ 9), թող այստեղ դեգերի անդադար աղերսելով: Ով կկամենա ըմպել կենաց աղբյուրից, թող այստեղ մաքուր և անարատ մնա աղտեղի ցանկութեաններից: Ով կամենա մասնակցել անտրտում հարսանիքին, թող այստեղ հարսնարան ստեղծի: Ով կփութա հագնալ Փրկչի փառքի երևումով, թող այստեղ ջանա արդարանալ մեղքերից: Ով կամենա լսել փողի քաղցր ու ախորժ ձայնը, թող այստեղ չանտեսի օտարականների և կարոտյալների ձայնը: Ով կամենա ամպերի մեջ օգով բարձրանալ Տիրոջն ընդառաջ (Ա Թեսաղոնիկացիներին Դ 16),

թող այստեղ աճապարի աղքատներին ընդառաջ գնալ: Ով երկյուղում է Տիրոջ խոսքերից, թող այստեղ ժրանա կատարել իր Տիրոջ կամքը: Ով ակնկալում է ժամանել իր Տիրոջ հարսանիքին, թող այստեղ արթուն լինի՝ երեկոյան, կեսգիշերին, աքլորականչին և առավոտյան, այսինքն՝ մանկութեանը, երիտասարդութեանը, տարեց ժամանակ և ծերութեան: Ով կամենա դասակից լինել հրեշտակներին, թող այստեղ չախորժի նստել հրապարակներում, որովհետև հրապարակը մեղքի աղբյուր է, և հրապարակասիրութեամբ չես ազատվի մեղքից, ասում է Սողոմոնը (Հմմտ. Առակաց է 8):

Արդ, ո՛վ իմ եղբայրներ, իմաստուն մտքով իմացեք, և, ինչ որ ասելու եմ ձեզ կարճառոտ խոսքով, բայց՝ խորին խորհրդով, հոգացեք, որովհետև ով իր մեղքերի մասին կրմտահոգովի այնտեղ՝ [լուկ] գեհենի կրակի մեջ ոչինչ չի շահի: Ով այստեղ կենցաղավարում է հեշտ ու փափուկ, այնտեղ չարաչար տանջվելու է անչափելի հեծութեամբ: Ով այստեղ որովայնը անխտիր խճողում է անհագաբար, այնտեղ փտելու և մաշվելու է անմխիթար: Ով այստեղ զվարճանում է շատ գինով, այնտեղ ծարավելու է մի կաթիլ ջրի: Ով այստեղ մինչև կեսօր թավալվում է խելացնոր քնով, այնտեղ չարչարվելու է անքուն որդերից տազնապած: Ով այստեղ անհագ և անառակ ծիծաղում է, այնտեղ լացելու, ողբալու է մերկ ու խայտառակ: Ով այստեղ պարծենում է քչախոսութեամբ, այնտեղ պապանձվելու է հանդիմանութեամբ: Ով այստեղ սովում է պահքով, այնտեղ գովաբանվելու է բոլոր սրբերով: Ով այստեղ սովոր է անիծել, այնտեղ լսելու է. «Հեռացեք ինձա-

նից, անխնայներդ» (Մատթեոս. ԻԵ 41): Ով այստեղ հավատքով կեղծավոր է, այնտեղ քննության է ենթարկվելու և անհավատներին խառնվելու: Ով այստեղ խռովարար և ռիսկալ է, այնտեղ տարտարոսն է ժառանգելու: Ով այստեղ գոռոզ և ամբարտավան է, այնտեղ իջնելու է հնոցի խորքը: Ով այստեղ նախանձում է այլոց բարեկեցությանը, այնտեղ չի ստանալու իր վաստակի հատուցումը: Ով այստեղ դանդաղկոտ է աղոթքի մեջ, այնտեղ գատվելու է սուրբ աղոթքներից: Ով այստեղ անխտիր մեղքի մեջ է, այնտեղ մտնելու է տուգանքի և տանջանքի մեջ: Ով այստեղ անողորմաբար մարդ և անասուն է ծեծում, այնտեղ ծեծվելու է կրակե գավազանով: Ով այստեղ կշտապնդվում է կերակրով, այնտեղ կշտամբվելու է հրեշտակներից: Ով այստեղ չապաշխարի իր չարությունների պատճառով, այնտեղ փակվելու են ապաշխարության դռները: Ով այստեղ շատերի բեռն ու կարիքը չվերցնի, այնտեղ նրան կվերցնի բորբոքված բոցը: Ով այստեղ բարիքի մեջ չի վաստակում, այնտեղ չի վայելելու խոստացված բարիքի մեջ: Ով այստեղ չի ընդունում օտարականներին, որբերին, այնտեղ չի մտնելու խաղաղ հարկերի տակ: Ով այստեղ իր գույքը խնայում է տնանկներին ու անօթևաններին, այնտեղ նրա առջև կփակվի առագաստի դուռը: Ով այստեղ անբարտավան ու սնափառ է, այնտեղ կկուրանա և կայրվի անչեջ կրակի մեջ: Ով այստեղ չմտահոգվի իր մեղքերի համար, այնտեղ դառն հեծությամբ կողբա: Ով այստեղ իր անձը արդար է համարում, այնտեղ կեղծավորների հետ կրակի մեջ կնետվի: Ով այստեղ ընկերոջ մեղքը իրենը չհամարի և

կարեկցանքով չզղջա, այնտեղ նրա հետ պարտավոր կլինի [Դատավորի առջև]: Ով այստեղ այլոց մեղքն է բամբասում և կամ հրապարակում, այնտեղ ահալի հրապարակում կըդատապարտվի: Ով այստեղ չչահի ոսոխի դեմ մարտը, այնտեղ չի կարող ազատվել Դատավորից: Ով այստեղ մահվան օրը մոռանա, այնտեղ պաշարելով նրան անողորմ կտանջեն: Ով այստեղ ցասկոտ և բարկացկոտ է, այնտեղ Աստծո բարկությունը կա և կմնա նրա վրա:

Արդ, ո՛վ իմ որդիներ, իմաստութամբ զգուշացեք և փախեք ամեն տեսակ փոքր ու մեծ սխալներից, որովհետև դրանցով է սատանան խաբուսում բոլորին: Արդ, որդյակ, մի՛ թափառիր այս արեգակի տակ և մի՛ մոռացիր արդարության Արեգակի ծագումը, մտքիցդ մի՛ հանիր քո վախճանի ժամը, և հեռու մի՛ համարիր ահալի օրն ու պատասխանատվությունն ըստ քո գործերի: Մի՛ ապավինիր այս աշխարհի հանցավոր կյանքին, և մի՛ գայթակղվիր այս կյանքի ստապատիր տեսանելի բաներով: Դադար մի՛ տուր աչքերիդ արտասուքին և թող քեզնից չպակասեն սխալներիդ պատճառով պաղատանքներդ: Մի՛ դադարեցրու աղոթքը և մի՛ դանդաղիր բարեգործության մեջ: Մի՛ եղիր հույս և ծուլ, և մի սովորիր լինել անձնդյուր և փափկակյաց, այլոց մեղքը զզվելի մի՛ համարիր, իսկ քո հանցանքը՝ փոքր ու թեթև: Մի՛ խոսիր մեկի մասին: Մի՛ ասա այն, ինչ օգուտ չէ քեզ, և մի՛ լսիր այն, որ շահ չէ քեզ և ոչ էլ Աստծուն՝ ընդունելի: Թող քո շուրթերը չխոսեն մարդկանց որդիների գործերի մասին, և մի՛ բամբասիր մեռած մարդուն: Մի՛ ծուլացիր տքնության և մի՛

ձանձրացիր մտավոր աղոթքի մեջ, մի՛ եղիր աշխարհականներին վաշխառու և փոխատու: Եթե եկեղեցական ես՝ առանց ընկերոջ մի՛ օթևանիր աշխարհականների բնակարաններում, քեզ համար մի՛ գտիր քույրացու, սանամայր, մայրացու և խոստովանադուստր: Մի՛ ծածկվիր ուրիշի հետ նույն կարպետի տակ, և գլուխդ մի՛ դիր ուրիշի հետ նույն սնարի վրա: Բամբաստողի հետ մեկին մի՛ բամբասիր և մի՛ բարկացիր բարկացկոտի և զայրացկոտի հետ: Ակնապիշ մի՛ նայիր կանանց դեմքին և տղամարդկանց վայելչությունը: Մի՛ հիշիր աշխարհականների վարքը և ազահուստյամբ ձեռք մի՛ բեր ոսկի և արծաթ: Մի՛ եղիր հպարտ և ամբարտավան և քո աղոթքի ժամը թող քեզնից չվրիպի: Մի՛ արհամարհիր փոքրին և մեծին, խեղանդամին, խեղին, կույրին կամ կաղին, հիվանդոտին կամ էլ մարդկանց մեջ նմաններին: Մի՛ երզվիր սուտ կամ իրավ, և ականջ մի՛ դիր նրանց, ովքեր պատմում են այլոց սուտ կամ իրական մեղքերի մասին: Մի՛ պատուհասիր ծերերին կամ պառավներին և կամ ուրիշ տկարներին: Մի՛ խրատիր հպարտ մեկին և իշխանին: Մի՛ թքիր մարդկանց առջև և մի՛ տարածիր ձեռքերդ ճակոտելով, ոսկորներովդ մի՛ հպարտացիր և հիմարի պես մի՛ բերանբաց հորանջիր: Մի՛ սովորիր ննջել զօրուգիչներ, և շատ մի՛ օգտագործիր միս ու գինի, որովհետև այն ուսմանների և ոչ թե եկեղեցականների կերակուր է: Հաց ուտելիս թող բերանդ ձայն չարձակի և ատամներդ թող չձափձափեն: Իշխաններին ու գլխավորներին դիմադարձ և բամբասող մի՛ եղիր, մի՛ եղիր ծուլ և դժկամություն մի՛ արա տերունական գործը: Մի՛ վերցրու

ուրիշների դրածը և ոչ էլ բացիր օտարների կոծկածը:

Մի՛ մոռացիր վախճանը, այլ աչքիդ առջև ունեցիր գաբրիելյան փողի ահեղ ձայնը և Քրիստոսի ահավոր ատյանի առջև կանգնելու գոչյունը: Հիշիր անաչառ դատաստանն ու անկաշառ Դատավորին, դատաստանի քննությունն ու համաձայն գործերի հատուցումը, կրակե համատարած ծովը, հրեղեն գետի ընթացքը, կայծակների տարածուն ու բորբոքված բոցի բարկությունը, ստուգահաս ձայնը, որ ասում է. «ձեզ չեմ ճանաչում» (Մատթեոս. ԻԵ 12), և դեպ «արտաքին խավար» (Մատթեոս Ը 12, ԻԲ 13) անդարձ ճանապարհը, աչքերի անդադար լացը և ատամների անհանգիստ կրճտոցը (Հմմտ. Մատթեոս. Ը 12, ԺԳ 42, 50, ԻԲ 13, ԻԴ 51, ԻԵ 30, Ղուկաս ԺԳ 28), սառնամանիքի սաստկությունը և անքուն որդերի ահագնությունը: Արդ, ո՛վ եղբայրներ, հիշեք այս բոլորը, և ձեր խղճալի կյանքը ողբացեք: Վայ տվեք ձեր անձեռին և խեղճ ասացեք ձեզ, ջանացեք, հնար գտեք զերծ մնալ այս ամենից:

Արդ, ո՛վ եղբայրներ, հրաժարվեք ամեն տեսակ մեղքերից ու չարից. այստեղ ջանացեք, այստեղ ճգնեք, այստեղ հաշտեցրեք ձեզ հետ ձեր Տիրոջը և փրկվեք բոլորդ այն ազահուստյունից, որովհետև այն կյանքը քչերին է վիճակված, և նրանցն է փառքն ու պսակը, ովքեր վաստակել են այստեղ: Եվ արդ, եթե կամենում ես փրկվել այն ամենից, ինչ լինելու է և հասնել խոստացված բարիքին, դու զգուշ եղիր խոսքերի ու գործերի մեջ, փոխարինաբար չարի դեմ ղնելով բարին, մեղքի դեմ՝ արդարությունը, բարկության դեմ՝ հեզությունը,

անզգամության դեմ՝ հանդարտությունը, թշնամության դեմ՝ բարեբարությունը, անհնազանդության դեմ՝ հնազանդությունը, ստահակության դեմ՝ հոժարությունը, շռայլության դեմ՝ ժուժկալությունը, ռխակալության դեմ՝ անռխակալությունը, նախանձի դեմ՝ լավակամությունը, ատելության դեմ՝ սերը, դառնության դեմ՝ քաղցրությունը, ծուլության դեմ՝ աշխատասիրությունը, պարապության դեմ՝ գործը, կեղծավորության դեմ՝ պարզությունը, խարդախության դեմ՝ միամտությունը, հոհուոցի դեմ՝ լալն ու արտասուքը, անհուստության դեմ՝ հույսը, տրտմության դեմ՝ ուրախությունը, փորձությունների մեջ՝ երկայնամտությունը, վշտի մեջ՝ համբերությունը, ազահուլության դեմ՝ չափավորությունը, ընչասիրության դեմ՝ սակավապետությունը, փառասիրության դեմ՝ արհամարհանքը [փառքի նկատմամբ], պատվամոլության դեմ՝ համեստությունը, թերահավատության դեմ՝ ճշմարիտ հավատքը, թուլության դեմ՝ քաջությունը:

Խրատի այս խոսքերը կատարիր քո կարողության չափով և դրանք սովորեցրու փափագողներին, և մյուս բաները ևս, որոնց մասին չգրեցի: Մի ծուլացիր ամեն տեսակ բարի աշխատանքի մեջ, որովհետև այս սակավ խոսքերն Աստծո մեծամեծ պատվիրանների [լուկ] հիշատակումն են:



Չ

ՍՈՒՐԲ ՀԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑՈՒ ԽՐԱՏՆ՝

ՌԵՂՂՎԱԾ ԿՐՈՆԱՎՈՐՆԵՐԻՆ

Ի՞նչ Քրիստոս Հիսուս ամենամաստ ծառայակիցս՝ Հովհաննես Գառնեցիս գրում եմ ի պատասխան գրածդ կենդանի գրոց, որ կարդում ես գրված այս խոսքը: Քանիցս լսել ես Հակոբոս առաքյալից, որ ասում է. «Ամեն ոք, ով գիտե բարին և չի կատարում՝ մեղք է նրա համար» (Հակ. Դ 17): Եվ ի՞նչ է բարին. բարի է բարին խորհելը, բարին խոսելը, բարին վաստակելը և տառապալներին տալը: Բարի է դառն դատաստանից դողալը և անտանելի տանջանքից երկյուղելն ու անանց փառքին, անվախճան վայելչության փափագելը: Բարի է զօրուգիչեր Աստծո ողորմության դռների մոտ դեգերելը և ընդհանուր դատաստանի մասին տևապես մտածելը, նաև անաչառ հարցաքննության համար ջերմ արտասուք թափելը: Ու եթե մեկը անփուլթ գտնվի այս ամենի հանդեպ՝ մեղք է նրա համար:

Մեղքն այն է, երբ մեկը հպարտ, ամբարտավան և ամբարիշտ է: Մեղք է, երբ մեկը շատ է ուտում և խմում, ու մինչև ցերեկը քնում: Մեղք է, երբ մեկը հույլ և ծուլ է, թույլ և ջրիկ, մեղկ, վավաչոտ և անզուսպ: Մեղք է հորանջելը, ճմրկոտելը, հեշտանքի հակվելը: Մեղք է տուփանքով և չարությամբ նայելն ու չար մտածելը: Մեղք է գողանալը, երգվելը

և նախատական անուն դնելը: Մեղք է բանասարկությունը, անօգուտ գրույցը և մարմինը պարարտացնելը: Մեղք է մատնությունը, եղբայրատեցությունը և խռով քնելը: Մեղք է քեն պահելը, նենգությունը խոսելը և չար կամենալը: Մեղք է հիվանդի մոտ չգնալը, տկարներին անտեսելը և կարոտյալներին չհոգալը: Մեղք է բարձր ծիծաղելը, կատակ անելն ու դատարկաբանելը: Մեղք է հակառակությունը, անհնազանդությունը և կամապաշտությունը: Մեղք է ի գին այլոց ցավի հաց ուտելը, ուրիշների մեղքը ուռճացնելը և մեռելին բամբասելը: Մեղք է (անդենականը) մոռանալը, մարդկային առտին գործերի մասին խոսելը և ինքնարդարացումը: Մեղք է ուրիշների կոծկածը բացելը, օտարների պահածը վերցնելը ու եկեղեցու իրերը վատնելը: Մեղք է գործված մեղքը կրկնելը ու գործվածը չխոստովանելը և այլոց մեղքը հրապարակելը: Մեղք է քահանային և մյուս կարգավորներին արհամարհելը: Մեղք է առանց աղոթքի անգեղջ մնալը և արտասուքից խոսպանանալը: Մեղք է վայրիվերո անեծքը, նզովքը, մարդ կամ անասուն անգթորեն և անողորմ ծեծելը: Մեղք է մահվան օրը մոռանալը և առանց պաշարի երկար ճանապարհ գնալը և բարիքի մեջ անպտուղ լինելը:

Բազմակերպ է մեր մեջ մեղքերի սողոսկումը. կան, որ տեսանելի են, կան որ անտեսանելի: Քանզի այս աշխարհի իշխանը տևապես պատերազմում է մեր բնության դեմ, որովհետև հին ու բազմահնար է վիշապը: Արդ, զգուշ և զգաստ, սուրբ և արգար, արթուն և զվարթուն եղիր, որպեսզի չարը խորամանկելով չմտնի մտքիդ կամ զգայություններիդ մեջ և

չհափշտակի առաքինության գանձը, և դու պարտավոր լինես դառն դատաստանի, որովհետև ծուլացար և հսկումով չպահեցիր առաքինության գանձատունը:

Արդ, այսուհետև արիացիր՝ պահպանել մտքիդ և զգայություններիդ ամրոցը, որպեսզի քո անփութության պատճառով գանձատունը մեծ կործանումով չխորտակվի: Բայց եթե կամենաս հարցնել, թե ինչ^ո է Աստված սատանային թույլ տալիս այսպես գործել, ապա իմացիր, սիրելիս որովհետև Աստված հրեշտակին և մարդուն անձնիշխան ստեղծեց ու մեզ թողեց անձնիշխանության խնամքին. եթե կամենում ենք՝ բարին ենք գործում և ժառանգում անանց փառքի անսուտ խոստումը, իսկ եթե կամովին չարն ենք գործում՝ վրիպում ենք անանց փառքից և ժառանգում աչքի լացն ու ատամների կրճտոցը: Եթե կամենանք՝ կշարժենք մեր հանդեպ Աստծո գուլթն ու ողորմածությունը և կդառնանք Աստծո կամքի գործակիցը, ինչպես ինքը մարդասեր Աստված մարգարեի միջոցով ասաց. «Զեմ կամենում մեղավորի մահը» (Եզեկ. ԺԸ 32): Որովհետև մեր բնության մեջ սերմանված է նախանձելն ու ցանկանալը: Բարին սիրելը բարի է, չարն ատելն էլ է բարի, մինչդեռ չարը սիրելը չար է, բարին ատելն էլ է չար, ու միևնույն է սիրելն ու ատելը: Բարուն նախանձելը բարի է, չարին նախանձելը չար է, բայց նախանձը նույնն է: Բարուն ցանկանալը բարի է ու չարին ցանկանալը չար է, բայց ցանկությունը նույնն է:

Արդ, ո՛վ պատվական եղբայր, զորացիր և քաջ եղիր և պինդ բռնիր անձնիշխան կամքիդ երասանակը, որպեսզի անձնիշխան կամքով չգլորվես աջ և ահյակ: Մի՛ մերձեցիր, մի՛

ճաշակիր, որպեսզի չհպվես ամեն տեսակ ապականացու բանե-
րի: Բայց ամեն տեսակ առաքինություն սկիզբն ու հիմքը խո-
նարհությունը դարձրու և խարխախ դարձրու սերը, այլուն՝ հույ-
սը, հզոր աշտարակ՝ հավատը և ամեն տեսակ բարիքի լրումը՝
ողորմածությունը, առանց որի ոչ ոք չի կարող տեսնել Տիրոջը:

...Բայց մի՛ սովորիր ցերեկով ննջել, որպեսզի մտքիդ աչ-
քերի վրա մռայլն ու մառախուղը չիջնի: Եվ մի՛ ունեցիր ամ-
բարտավան հոգի, որովհետև եթե քո բոլոր գործերն ի բարին
կատարես տքնությունք և արտասուքով, ու եթե նույնիսկ
առաքինության գլուխն ու գազաթը բարձրանաս, բայց խո-
նարհություն չունենաս՝ ոչ մի բանից չես օգտվի, և հիմար
կույսերի նման առագաստից դուրս կմնաս (տե՛ս Մատթեոս.
ԻԵ), որ ողորմություն չարեցին. ճիշտ նրա նման, երբ մեկը
ջուր է լցնում ծակ կարասի մեջ, որ (այնպես էլ) չի լցվում:
Նաև մեր Տերն իսկ մարգարեի միջոցով ասաց. «Ես ո՞ւմ վրա
հանգչեմ, եթե ոչ հեզերի և խոնարհների, և նրանց՝ ովքեր
դողում են իմ խոսքերից» (Եսայի 42 2): Նաև Ինքն իսկ
Հիսուս, ով անհաս բարձրությունից խոնարհվեց, նա, որ կա-
տարում և սովորեցնում էր, այս ասաց, թե՛ «Ինձանից սովո-
րեք, քանզի հեզ եմ և սրտով խոնարհ» (Մատթեոս. ԺԱ 29):
Եվ երբ Տերն ասաց. թե՛ «Ես և Հայրս նրա մոտ կգանք և նրա
մոտ կօթևանենք» (Հովհ. ԺԴ 23), ինչո՞ւ չասաց, թե՛ Ես,
Հայրս և Հոգին կգանք. որովհետև Սուրբ Հոգուն խոնարհու-
թյամբ զգեստավորեց: Եվ ահա հողեղեն մարդը խոնարհու-
թյամբ Սուրբ Երրորդության օթևան է դառնում:

Բայց եթե կամենում ես աղոթքի համար հարցնել՝ աղոթքի

համար չափ ու սահման չկա, ինչպես և Դավիթն էր ասում.
«Օրհնեցե՛մ Տիրոջն ամեն ժամ» (Սղմ. ԼԳ 2), նաև մինչ այդ
ասաց. «Իմ աչքերն ամեն ժամ Տիրոջն են ուղղված» (Սղմ. ԻԴ
15), նաև «Ես Աստծուն ձայն տվի և Տերն ինձ լսեց» (Սղմ.
ԾԴ 17), նաև՝ «Օրվա մեջ յոթ անգամ օրհնեցե՛մ քեզ արդա-
րություն համար» և այլն: Բայց յոթը անչափություն է ցույց
տալիս, ինչպես մեր Տերը եղբոր կատարած հանցանքի համար
Պետրոսին ասաց. «Ոչ թե ասում եմ՝ յոթն անգամ, այլ՝ յոթա-
նասուն անգամ յոթը» (Մատթեոս. ԺԸ 21): Որովհետև թեպետ
հանրագումարը չորս հարյուր իննսուն է, բայց դա անչափու-
թյուն է ցույց տալիս: Եվ այս աստիճանը զառիվեր բարձ-
րացողների համար առաքինության մարտահանդես է:

Բայց դու, սիրելիս, իշխանության տակ ես և հայրերի
հարկի ներքո, ու մանավանդ մարմնով՝ դանդաղկոտ. միայն
այս արա, որպեսզի չմոռանաս աղոթքի պահը, այլ քիչ քիչ
կատարիր օգտակար բաներ, ըստ քո կարողության:

Երբ արձակվես գիշերային ժամից, դու գնա մտիր քո
սենյակը և կանգնիր՝ շրջվելով դեպ արևելք և յոթ անգամ
ծունկի գալով յոթ անգամ ասա այս սաղմոսը, թե՛ «Աղաչում
եմ քեզ, Տեր, որ առավոտյան լսես իմ ձայնը» (Սաղմոս Ե 4),
ամբողջ տունն ասա, և հետո ասա. «Փա՛ռք Հորը, Որդուն և
Սուրբ Հոգուն», և հետո ասա «Օրհնություն և Փառք Հորն
ու Որդուն»: Այնուհետև ասա մի կանոն կամ մեկից ավելի,
իսկ կանոնի վերջում՝ Արևագալի քարոզը և իր աղոթքը և
վերջում «Հայր մերը»:

Իսկ միջօրեին մեր Տերը խաչի վրա էր բեկեռված, և այս

ժամին խավարեց արեգակը, արի և կանգնիր, տասնվեց անգամ ծոնկի արի և ասա սաղմոսի այս տասնվեց տները, թե՛ «Ով ապրում է Բարձրյալի աջակցութեամբ» (Սաղմոս 1), և հետո. «Փառք» ապա՝ «Եվ ևս խաղաղություն, օրհնություն...», և հետո որ կանոնը ցանկանում են՝ ասա, իսկ վերջում ասա «Արթուն մտքով...» և իր աղոթքը. «Զգեստավորի մեզ, Տեր Աստված...» և հետո «Հայր մերը»:

Իսկ իններորդ ժամին, որովհետև այս ժամին մեր Տերը լեզի և քացախ խմեց և բարձր ձայնով գոչեց «Էլի՛, էլի՛», վերկաց և վեց անգամ ծոնկի արի՝ ասելով այս վեց սաղմոսները, թե՛ «Խորքերից քեզ կանչեցի, Տեր» (Սաղմոս ՃԻԹ 1) և հետո «Փառք» և ապա «Եվ ևս խաղաղություն», «Օրհնություն և փառք», և հետո սկսիր այն կանոնը, որ կցանկանաս, իսկ կանոնի վերջում՝ «Սուրբ սրտովը», և ապա՝ «Տեր գործությունների» աղոթքը և «Հայր մերը»:

Իսկ երեկոյան ժամին, որովհետև այս ժամին մեր Տերն իջավ գերեզման, երեք անգամ ծոնկի արի և երեք անգամ ասա միայն այս սաղմոսը. «Ես Աստծուն ձայն տվի» (Սաղմոս ՄԴ 17), և ապա «Փառք», իսկ հետո «Եվ ևս խաղաղություն, օրհնություն և փառք», և հետո որ կանոնը ցանկանաս՝ ասա, և կանոնի վերջում «Գոհացեք Տիրոջից» քարոզը (երգը), «Տեր բարեբար» աղոթքը և «Հայր մերը»:

Իսկ «Եկեացեցից» հետո մատովդ զրոշմիր Քրիստոսի խաչի նշանը արևելքի, արևմուտքի, հյուսիսի և հարավի, երկնքի, երկրի կողմը, ապա՝ երեսդ, անկողինդ, իսկ հետո երեք անգամ ծոնկի արի՝ ասելով այս սաղմոսատները, թե՛

«Այսուհետև մենք խաղաղութեամբ կննջենք և կարթնանանք» (Սաղմոս Դ 9), «Դու ես իմ պաշտպանը, Տեր, և քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին» (Սաղմոս 1 6), «Ահա Աստված իմ օգնականն է, և Տերը՝ իմ հոգու ապավենը» (Սաղմոս ՄԳ 6): Իսկ հետո գետնախշտի անկողնի մեջ մտնելով երեսդ դարձրու դեպ արևելք և գոհութեամբ ննջիր:

Իսկ երբ առաջինն արթնանաս քնից, վերկաց և երեք անգամ ծոնկի արի և միայն երեք սաղմոսատներն ասա, թե՛ «Ես ննջեցի և քուն մտա» (Սաղմոս Գ 6) «Աստված, ինձ օգնութեամբ հասիր» և «Դու Տեր, օգնութեամբ ինձնից հեռու մի՛ պահիր» (Սաղմոս ԻԱ 20), և «Կեսգիշերին ելում էի գոհութեամբ մատուցելու քեզ քո արդար դատաստանների համար» (Սաղմոս ՃԺԸ 62) և հետո «Փառք Հորը», «Եվ ևս խաղաղություն», «Օրհնություն և փառք Հորը և Որդուն»:
Եվ ապա սկսիր ու ասա այս կանոնը, որ կցանկանաս, և կանոնի վերջում իր քարոզը (երգը) և գիշերվա աղոթքը ասա և ապա՝ «Հայր մերը»:

Իսկ երբ հնչեցնեն ճաշի ժամը, դու սթափ հոգով երգիր և փութով առաջանալով մտիր գավիթը, և երեք անգամ ծոնկի գալով խաչակնքիր երեսդ, և ապա, մտնելով խմբի մեջ, կանգնիր քո տեղը և ուշադիր ունկնդիր եղիր սաղմոսերգութեամբ, ընթերցվածներին ու պաշտամունքին: Մի՛ սովորիր նստել եկեղեցում կամ զրուցել:

Արդ, ով պատվական եղբայր, տես և իմացիր խոր մտքով, թե՛ քաջաթուխ արծիվը լուկ երկու թևով չէ, որ բարձրանում է. նա ունի նաև մեծ ու փոքր փետուրներ, որով բովանդակ գո-

րությամբ սլանում է վեր: Այդպես էլ դու պարտավոր ես ոչ միայն աղոթքով հաճոյանալ Աստծուն, այլ նաև խոնարհությամբ և ողորմածությամբ, հեղությամբ և հանդարտությամբ, ժուժկալությամբ և բազում համբերությամբ: Քանզի հարկ է մտովի կամ բացահայտ դատել եղբորդ: Քեզ հարկ է հող և մոխիր լինել բոլորի՝ թե՛ փոքրի և թե՛ մեծի մոտ:

Մի՛ լինիր բազմազրույց և բամբասասեր, մի՛ արա բանասարկություն և աղմկարարություն, մի՛ ասա մեկից լաված խոսքը, մի՛ եղիր ինքնիրավ ու եսակենտրոն, ամենևին մի՛ բամբասիր մեռած մարդուն, մի՛ մաշիր քեզ ցանկասիրության ցավով և պոռնկական խորհուրդների ունայնությամբ: Մի՛ նստիր հրապարակներում, քանզի դրանք մեղքի աղբյուր են, և շատերը վնասվում են շատախոսությունից: Մի՛ ունեցիր խորթ մայր, խորթ քույր, խոտովանադուստրեր: Առանց ընկերոջ մի՛ օթեանիր աշխարհականների տներում: Մի՛ սիրիր ոսկի և արծաթ, այլ սովորիր լինել ընչազուրկ և առանց ստացվածքի: Մի՛ եղիր դիմադարձ և հակառակվող, որպեսզի չատվես Աստծուց և մարդկանցից: Քո աղոթքի ժամը թող չվրիպի քեզնից, որպեսզի ծուլության մեջ չընկնես: Մի՛ եղիր բարկացկոտ, զայրացկոտ և դյուրագրգիռ, «որովհետև մարդու բարկությունը Աստծո արդարությունը չի կատարում» (Հակոբ Ա 20): Աչքդ մի ճարպոտի կանանց դեմքին նայելով, որպեսզի քո մտքում չարմատակալվի ցանկասիրական ցնորքը: Աշխարհականներին փոխատու մի՛ եղիր, մի՛ սիրիր աշխարհը, վաշխառությունն ու տոկոսը: Մի՛ զրպարտիր կամ հանդիմանիր մեկին հրապարակավ, որպեսզի խստագույնս խոցելով չխայթես նրան: Ընկերոջդ առջև մի՛ թքիր խորի,

խլինք կամ թուք: Ժամարարին վայել է սուրբ վայրում թքել կամ ձեռք լվանալ: Վայել է բարձր ծիծաղել կամ բարձրաձայն զրուցել, այլ հարկ է տանն առանձնանալով տեւպես կարդալ:

Այլ դու, սիրելիս, եղբորդ կարիքները հոգա՞ կարելով, կարկատելով, լցնելով չուխայի [պատուվածքը], նաև մյուս պետքերին հոգ տանելով: Բոլորին ծառայիր լրջմտությամբ, մշտապես այցելիր հիվանդներին, տկարներին, կաղերին, կույրերին, խեղանդամներին և վերքոտներին, որովհետև Քրիստոս բազմած է նրանց սնարին: Եվ եթե քեզ հիվանդություն վիճակվի, դու գոհությամբ ընդունիր: Եվ երբ աղքատ կամ կարիքավոր տեսնես, դու երեսդ մի՛ չըջիր նրանից, որովհետև նրա հետ է Քրիստոս: Հյուրերին զբաղեցրու բարի խոսքերով, օտարների հետ ընտանեբար զրուցիր, սգավորներին մխիթարիր՝ հուսադրելով, նեղյալներին սփոփիր՝ սիրով, բոլորին զվարթ երեսով ներկայացիր: Ծերերին նեղություն մի՛ տուր, մանուկներին մի՛ արհամարհիր: Հաճախ մի՛ օգտագործիր միս և գինի, որովհետև միսը միս է ավելացնում, գինին ապշեցնում է միտքը:

Ամենայն ինչի ժամը, կշիռն ու չափը կա. երբ կամենում ես խոսել՝ սկզբից մտածիր և հետո խոսիր, որովհետև հանցանքները ջրի պես խմում ենք լեզվով: Եվ այս բաների մասին մարգարեն ասում է, թե՛ «Ասացի՛ զգուշանամ իմ ճանապարհին, որ լեզվովս չմեղանչեմ» (Սաղմոս ԼԸ 2): Բայց որքան հնար կա դու մշակություն մի՛ արա, բայց և մշակներին մտքով մի՛ դատիր:


Երբ աղոթում ես՝ միայն քեզ համար մի՛ արա, այլ՝ բոլոր կենդանիների, անասունների, ողջերի ու մեռյալների, որ եղել

են, կան և լինելու են մինչև աշխարհի վախճանը: Ով Ադամի հանցանքը և անցյալ հանցավորների մեղքը իրենը չի համարում, նրա աղոթքը ընդունելի չէ: Երբ կամենաս, որ աղոթքի ժամանակ արտասուք գա, դու քեզ բոլորից մեղավոր համարիր, և եթե ցանկանաս, որ աղոթքդ բարձրանալով հիշվի Աստծո առջև, դու ամենևին ոչ մեկին մի՛ տրտմեցրու: Բայց տրտնջողն ու զայրացկոտը հազիվ թե հասնի առաքինություն գազաթը: Ծջմարիտ առաքինությունն այն է, որ յուրաքանչյուր ոք հատուցվում է համաձայն իր պատվի:

Բայց մեզ ինչո՞ւ է հարկ տարբերվել ի սեր խրատի, որովհետև ահա սկզբից լսեցիր Հակոբոս առաքյալից, որ ասաց. «Ով որ գիտե, թե ինչ է բարին և չի անում, նրա համար այդ մեղք է» (Հակ. Դ 17): Եվ ահա, ո՞վ է, որ չգիտե բարին. բանն այն է, որ կանք, գիտենք, բայց չենք կատարում Տիրոջ կամքը: Այս պատճառով Տերն ասաց իր ուսուցանող վարդապետության մեջ, թե՛ «Ամեն ոք, ով գիտե իր Տիրոջ կամքը, բայց չի կատարում ըստ նրա կամքի, շատ ծեծ կուտի» (Ղուկաս ԺԲ 47):

Արդ, ո՞վ պատվական եղբայր, արիացիր և կատարիր ամեն տեսակ բարություն. այն, որ սովորեցիր մանկությունից ի վեր, այն, որ լսեցիր սուրբ հայրերից, այն, որ վկայում է քո միտքը, այն, որ ամեն օր կարդում ես. այդ բոլորը արա և կատարիր, և սիրո ու խաղաղության Աստված քեզ հետ կլինի:

Աստծո մեծամեծ պատվիրաններից սակավ խոսքերդ են հիշելի, որպեսզի սրանց հիշատակությունը կատարես ամեն ինչ: Ողջ եղիր Աստծո սիրո և Հիսուսի հավիտենական համբերության մեջ:



Է

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԸ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՎԱՏԻ ՄԱՍԻՆ

Նախ հարկ է իմանալ, թե ինչ է քրիստոնեական հավատը: Եվ արդ, իմանալու է, որ հավատը Աստծո՝ մարդկանց հետ [հարաբերություն] միջոց է և շաղկապ, որովհետև հավատը հաստատվում է Աստծուց մեր [հանդեպ] և մարդկանցից՝ Աստծո [հանդեպ], ինչը օրինակով ծանուցենք լսողներին: Արդ, ինչպես լույսն ու շողը արեգակից են իջնում և մտնում բոլոր երթիկներից և լուսամուտներից, ձևանում ըստ մեծ ու փոքր չափի և լուսավորում տան մեջ եղողներին, նույնպես և Աստծո հավատը մարդկանց հանդեպ իջնում է և բնակվում նրանց սրտերի և հոգիների մեջ և պարունակում համաձայն ընդունողների մեծություն և փոքրության: Ինչպես օրինակ մատանու տիպը և կնիքը մոմի վրա է կերպավորվում և մոմի վրա տպվածը տեսնողներին նմանություն է երևում, այդպես էլ Աստվածությունից մարդկանց [հանդեպ] եղած հավատը տպավորվում և կերպավորվելով կնքվում է սրտերում, մարմիններում և հոգիներում:

Հավատը Աստծո կողմից երկնքի բարձրունքներից [դեպ] մարդիկ իջած անմարմին, լուսեղեն լար է, որովհետև մեր

ձեռքերը փոխելով, այսինքն՝ պես պես բարեգործությունք մարտն հարձրանում:

Հավատը երկնքի արքայությունից բանալին է, որ մեզ Աստված տվեց, որովհետև ով հավատի զորությունը ձեռքում ունենա, նա կբացի ու կմտնի Աստծո արքայությունը:

Հավատը մարդկանց սրտերում արմատացած տունկ է, տունկի արմատը Հայրն է, արմատի ոստերը, տունկի անթառամ ծաղիկը Սուրբ Հոգին է, քաղցրահամ պտուղը՝ Միածին Որդին, իսկ տունկի շուրջ զարդարված տերևները բարի գործերն են:

Ինչպես ծառն առանց պտղի գեղեցիկ չէ և ոչ էլ պտուղն է առանց ծառի պտուղ, այդպես էլ Հավատն է առանց բարի գործերի վայելուչ, և ոչ էլ գործերն են [վայելուչ] առանց ճշմարիտ և ուղիղ հավատի: Հավատը հիմքն է, այլև՝ բոլոր բարի գործերը. գործերով ենք դառնում Աստծո տաճարը, ինչպես և մեր Տեր Քրիստոս ասաց Պետրոսին. «Դու ես վեմը և այդ վեմի վրա պետք է հաստատեմ իմ եկեղեցին» (Մատթեոս. ԺԶ 18), որ Պետրոսի դավանության վրա հաստատված քրիստոնյաներն են: Այդ հավատը այն է որ քահանան մկրտության պահին կնքահոր բերանով ասել է տալիս, և այն խոստովանությունը կնքում է մանկանը, որը սնվում է այն հավատով, և մահվան օրը քահանան հավատի նույն դավանանքն է տալիս, և նա այդ [հավատով] գնում է Աստծո մոտ, (հավատով), որ երկնքի արքայությունից բանալին է:

Արդ, քրիստոնեությունից գլուխը հավատն է, և հավատը զորոշվում է մկրտության մեջ, պատկերվում հավատացյալ-

ների հոգում, ապա հայտնի է, որ քրիստոնեական հավատը ստանում ենք մկրտության մեջ: Եվ հարկ է ձեռք իմանալ, թե ինչ է մկրտությունը, որ սկիզբն է հավատի և քրիստոնեությունից, նաև՝ գլուխը, որ կոչվում է կնունք: Եվ ի՞նչ է մկրտությունը. մկրտությունը վերստին հոգևոր ծնունդ է, ինչպես Քրիստոս է Նիկողիմոսին ասում. «Թե մեկը ջրից և հոգուց չծնվի՝ չի կարող մտնել Աստծո արքայություն» (Հովհ. Գ 5): Եվ վերստին ծնունդ է ասվում, որովհետև ով մի անգամ այստեղ ծնվել է մարմնավոր ծնողներից՝ ծնվել է ըստ մարմնավոր ախտի, երկրորդ անգամ ծնվում է հոգևոր և աստվածային ծնունդով՝ Սուրբ Հոգով: Եվ այս ծննդյան մեջ հայրը՝ Աստված է, մայրը՝ եկեղեցին, արգանդը՝ ավագանը, որ մանկանը ծնում է ջրով և հոգով. ինչպես ջուրն է մաքրում մարմնի աղտը, նույնպես Սուրբ Հոգին մաքրում է հոգին և այն դարձնում Աստծո տաճար: Եվ մեր մկրտությունը Քրիստոսի մահվան մեջ, ինչպես Պողոսն է ասում. «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք» (Գաղատ. Գ 27): Եվ դարձյալ, թե՛ «Նրա մահվան մեջ մկրտվեցիք» (Հռովմ. Զ 3), որովհետև երբ քահանան ջուրը լցնում է ավագանի մեջ, ասում է. «Տիրոջ ձայնը ջրերի վրա է» (Սղմ. ԻԸ 3), այսինքն՝ այն աստվածային ձայնը որ արարչության ժամանակ եղավ ջրերի վրա և ասաց. «Թող ջրերը արտադրեն կենդանության շունչ ունեցող զեռուններ» (Ծննդ. Ա 20) և այն ձայնը, որ [հնչեց] Հորդանանում Քրիստոսի մկրտության ժամանակ, թե՛ «Դա է իմ սիրելի որդին» (Մատթեոս. Գ 17, ԺԷ 5, Մրկ. Թ 6): Եվ մյուսոնք խա-

չանման կաթեցնում է ջրի մեջ, որովհետև մյուսոնը Քրիստոս է և Քրիստոսի խաչելությունը խաչն է: Եվ ինչպես Քրիստոս խաչով մեռավ, նույնպես և քրիստոնյաները, ավագանի խորհրդով, խաչակից են լինում Քրիստոսին: Եվ այն, որ քահանան երեք անգամ մանկանը ընկղմում է ջրում, Քրիստոսի երեքօրյա թաղման խորհուրդն է [ցույց տալիս]՝ որպես թե թաղվեց Քրիստոսի հետ, և ջրից դուրս բերելը՝ որպես թե Քրիստոսի հետ հարություն առավ մեռելներից: Եվ բեմ հանելը՝ որպես թե երկինք համբարձվեց, որովհետև բեմը երկնքի օրինակն է: Եվ մանկան հաղորդվելը՝ որպես թե սրանից հետո Քրիստոսին միացավ, ինչպես ասաց, թե «Ով ուտի իմ մարմինը և ըմպի իմ արյունը, նա կբնակվի իմ մեջ և ես՝ նրա» (Հովհ. 2 57): Այնուհետև մկրտությունը մարմնական գործ չհամարեք և ծիծաղելով կամ հարբած չկատարեք, այլ՝ ահով և դողով լինեք: Եվ եթե քահանա է՝ մեկը մկրտում է, մյուսը՝ պատարագում և հաղորդություն տալիս: Եվ քահանաները թող հարկադրանքով չպահանջեն կնքադրամ և անգին չնորհի գինը, այլ սիրով և հոգով կամքով տրվածը թող ընդունեն որպես նվեր եկեղեցուն: Եվ այս է քրիստոնյաների կարգը, որովհետև երբ խաչը օրհնել են տալիս՝ քառասուն օրվա ձեթ են տալիս եկեղեցուն՝ կանթեղ վառելու համար: Նույնպես և նորակնունք մանկան ժամանակ, երբ եկեղեցուն նվերներ են տալիս, օրինական է և Աստծուն հաճելի: Եվ նոր կնքված մանկանը ամեն կիրակի հաղորդություն են տալիս մինչ քառասուն օր: Եվ մեղք ու հայհոյանք չպետք է լինի այն տանը, ուր կնքված մանուկ կա: Եվ երբ

մանուկը զգալ է իմանում՝ նրան խաչ հանել են սովորեցնում, երբ ոտքի է կանգնում սովորեցնում են եկեղեցի գնալ, ծունկի գալ: Եվ երբ լեզուն խոսք է ասում, նրան սովորեցնում են հավատի դավանությունը, ինչը մկրտության ժամին կնքահայրն ասում է իր բերանով. նույնը ասում է մանուկը և յոթ տարեկանից հետո սովորում է խոստովանել: Եվ ծնողներին հարկ է, որ իրենց զավակներին զգուշությամբ ուսուցանեն և սնուցանեն և չթողնեն, որ անփութորեն թափառեն, տեսնեն, լսեն և սովորեն մեղք գործել: Եվ ծնողները դառնում են մեղքի պատճառ, որովհետև Քրիստոսի ահեղ դատաստանի ժամանակ նրանք են պտասխան տալու իրենց զավակների համար, որի մասին աստվածային Պողոսը ասում է, թե «Հայրեր, խրատեք ձեր որդիներին» (Հմմտ. Եբր. ԺԲ 8): Ուրեմն, ո՛վ ցանկալի հոգևոր որդիներ և դուստրեր պետք և անհրաժեշտ են մեր հավատի վրա նաև բարի գործեր, որոնք գենք են, քանզի գրված է, թե «Հավատն առանց բարի գործերի մեռած է» (Հակ. Բ 20, 26), և անօգուտ է հիմքը առանց շինության և շենքը՝ առանց հիմքի: Որովհետև ինչպես հավատն է անօգուտ առանց բարի գործերի, նույնպես և բարի գործերն՝ առանց հավատի: Ինչպես միաթև արծիվը չի կարող երկինք ճախրել, նույնպես և մեր հոգին, որ թագավորական արծիվ է և Աստծո պատկերի նմանություն պատկերը. նրան անհրաժեշտ է երկու թև, որպեսզի կարողանա բարձրանալ երկինք Աստծո մոտ. մի թևը հավատն է և մյուսը՝ գործը, ինչը մեզ հարկ է ընդունել քրտինքով և աշխատանքով և աճեցնել մեր հոգիներում և բովանդակ ճիգ ու ջանքով բարին գործել

Աստծո օգնութեամբ: Եվ ամենից առաջ եղեք աղոթասեր, տևական եղեք պահքի և պարկեշտութեան մեջ, փախեք ծուլութիւնից, որովհետև ծուլերի և հուլերի համար դատաստանի օրը փակ է լինելու արքայութեան դուռը, քանզի ով հուլ է պահքի և ծուլ աղոթքի մեջ՝ այնպիսին անասուն է կոչուում և ոչ թե մարդ: Իսկ ով արթուն է, պահքը և աղոթքը սիրող՝ Աստծո առջև նա մարմնավոր հրեշտակ է կոչուում: Եվ շատերը պահքով ու աղոթքով Աստծուն տեսան և միշտ ուրախացան նրա առջև, որովհետև պահքը, աղոթքը և պարկեշտութիւնը, որ լինում է անոխակալ հոգով և խոնարհ մտքով, լուսեղեն ճանապարհ է, հոգեղեն նավ, հրեղեն սանդուխտ, որ առանց մոլորութեան և ուղիղ (ընթացքով) մարդուն տանում են Աստծո մոտ: Իսկ հեշտասերը, որ անասունի պես բտում է իր մարմինը՝ կրակի ժառանգորդ է, նաև աղբակեր, տղմասեր, կյանքով ողորմելի, ինչպես նաև Պողոսը՝ Քրիստոսի լեզուն ասում է. «Որոնց Աստվածը իրենց որովայնն է և փառք՝ ամոթը» (Փիլիպ., Գ 19), նաև ասում է. «Ողբում եմ Քրիստոսի Խաչի թշնամիների կորուստը, որովհետև գիտեք, որ որովայնի անժուժկալութիւնից և ազահարուստութեանց է» (Փիլիպ. Գ 18): Այս անբավ տառապանքը, ցավը և մահը մեր մարդկային ցեղի վրա եկավ, գալիս և գալու է մշտապես: Նաև պարկեշտութեամբ ուտելն ու խմելը ցամաքեցնում է ցանկութեան ախտը, և մարդը լինում է հրեշտակների նման: Իսկ շատ ուտելն ու խմելը մեծացնում է պիղծ ցանկութիւնը և բանական մարդուն հավասարեցնում անասունի հետ, որովհետև Սողոմը և Գոմորը կրակի և


ծծումբի մեջ գցեց կերակուրների և խմիչքների շվայտ պարտութիւնը և Նոյի ժամանակ ջրհեղեղը բոլորին իսպառ ջնջեց, որովհետև հարբեցողութիւնը դիվահարութիւնից չար է: Իսկ ով Աստծո կամքի մեջ է մնում պահքով և աղոթքով՝ Աստված նրան տալիս է նահատակների վարձը: Բայց եթե դուք նրան խեղդում է ջրի և այրում կրակի մեջ, ապա հարբեցողը հիմարանում և անասունի նման չի իմանում, թե ինչ է անում, որովհետև գինին նրանից խլում է իմաստութիւնը, որի պատճառով Պողոս առաքյալը գրում է, թե՝ «Շարժվենք ոչ թե անառակութեամբ, հարբեցողութեամբ, պոռնկութեամբ և պիղծ բնութեամբ» (Հռովմ. ԺԳ 13): Եվ Քրիստոս մեր Հուլսը հրամայում է. «Զգուշ եղեք ձեր անձերին, չլինի թե ձեր սրտերը ծանրանան շվայտութեամբ և հարբեցողութեամբ» (Ղուկ. ԻԱ 34): Շվայտանալը գեխութիւն անելն է, ով չգիտե, թե ուր է կամ ինչ է անում: Ո՛վ իմ որդիներ, դուք պետք է որ տեսած կամ հանդիպած լինեք, երբ մարդ գինուց հարբած է լինում, աչքերը այստեղ այնտեղ է գցում, այլև ձեռքերը երկարելով ձգտում ավելի շատ կերակուրի, գոռում ամպի և որոտում գվարակի նման, սրտխառնուկից փսխում է գինին, որով լղոզվում է երեսը և դառնում շնից գարշելի, որ վերադառնում է իր փսխածին (Առակ. ԻԶ 11, Բ Պետ. Բ 22): Եվ շները շրջապատում են նրան և լիզելով սրբում նրա երեսն ու բերանը, և նրան թվում է, թե (այդ անում են) Կիպրոսի ոսկերիք սրբիչով, որի պատճառով շնորհակալ է լինում և օրհնում նրանց:

Ահա տեսեք, թե որքան չար է դիվահարութիւնը, բայց

առավել չար է հարբեցողութիւնը: Եվ իրավացիորեն է գրում երկնաքաղաքացի Պողոսը, թե՛ Հարբեցողը տանջվելու է շնացողների և սպանողների հետ (Ա Կորնթ. Զ 10), և աստվածաբան մարգարե Եսային ասում է, թե՛ «Վա՛յ, որովհետև քահանաներն ու ժողովուրդները հիմարացան գինուց, թմբուկներով և պարերով են խմում գինին և զբաղվում նրանով» (Եսայի ԻԸ 7): Եվ գինու հոտն իսկ, որ գալիս է նրանցից գեհեների հոտն է, որ վառելով այրում է նրանց: Նաև բոլոր Աստվածաշունչ գրքերը նախատում և անարգում են հարբեցողներին և ոչ թե՛ գինին, շնացողներին և ոչ թե՛ կնոջը, սպանողներին և ոչ թե՛ սուրբ, գողերին և ոչ թե՛ ինչքը, որովհետև Աստված կնոջը ստեղծեց և օրհնեց որդեծնության համար և գինին՝ առողջության և ծերության, տկարների ու սգավորների համար և սուրբ՝ գազաններից և թշնամիներից [պաշտպանվելու] և ինչքերը՝ կարիքի և պետքերի համար: [Գովելի է] սովոր կարգը և չափավոր մարդը, որոնք հանուն Աստծո կամքի նորոգվում են. բարի է կինը, ինչքը և սուրբ:

Իմ որդիներ, վա՛յ շնացողներին, ովքեր ապականում են Աստծո տաճարը և պղծում սուրբ անկողինը, որի պատճառով, աղաչում եմ, փախեք պոռնիկութունից ինչպես օձից, որովհետև Քրիստոս մեր հույսը դատապարտում է տուփալից նայվածքը և մտքով աղտեղանալը, քանզի տուփական մեղքերն ավելին են քան մարմնի գործերը, և շնութիւնը մարմնի ներսում և մարդու կարողության մեջ է. ուստի այն է շնութիւնը, երբ, չունենալով օրինական ամուսնութիւն, թե՛ տղամարդ և թե՛ կին գնում, շնանում են: Եվ նա միայն շընա-

ցող չէ, այլև մարդասպան է կոչվում Սուրբ Գրքում, որովհետև հոժար կամքով թողեց սուրբ կաթը և շների արյունը խմեց, թողեց սուրբ հացը և գնաց գարշելի աղբը կերավ ու թարախը լակեց, որ շնութիւնն է: Ո՛վ որդիներ, հագար լիտր թուք նրա երեսին, ով թողնում է հալալը և վերցնում հարամը. սա մի անմիտ բան է. ուրեմն օտար կնոջն ու օտար տղամարդուն ավելի՞ն գտար քոնից, որ հոգիդ և մարմինդ թունավորեցիր, և դեերի տուն դարձար: Որդիներ և դուստրեր լիաբերան վա՛յ մեզ, թե որքա՛ն արդար արյուն հեղվեց երկրում շնության պատճառով՝ բացահայտ և գաղտնի սպանությամբ՝ թույներով կամ պիղծ հնարքներով և կամ որքան մանուկներ լույս աշխարհ չեն գալիս մարդկանց փախից և ամոթից, որովհետև շնության ցավն ու ցանկութիւնը մաշեց աշխարհը և մարդկանց ցեղը և դարձյալ մաշելու է, ինչպես և գրել է աստվածային Պողոսը, թե՛ «Վա՛յ ձեզ, զարգասեր կանայք, ովքեր ի գայթակղութիւն երիտասարդների շպարում են իրենց երեսը, շինում աչքերը. այնպիսիները չեն կարող տեսնել Խաչի լույսը, այն մեծ օրը, և անմահ Փեսան նրանց չի համբուրի ինչպես արդարներին [է համբուրում]: Եվ արդ, վա՛յ այնպիսի կնոջը, որ չար թույներով և հնարքներով խափանում է որդեծնութիւնը և խրատ է տալիս այլոց նույնը կատարել, որովհետև հրախառն արյան ծովում նրանք տանջվելու են առանց փրկվելու, և Աստված ահագին ու սոսկալի դատաստանի ժամանակ նրանցից պահանջելու է հասուն մարդու արյուն այն բոլոր մանուկների համար, ովքեր խափանվեցին դիվական չար թույներով <...>:



Ը
ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏԸ՝
ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՔԵՐԻՑ

Ով իմ որդիներ, վերջին ժամանակներն են, և բովանդակ երկիրը լցվել է մեղքով, որովհետև սառչեցին ու խավարեցին մեր հոգիները և սրտերը պիղծ դեերի շնչից, ինչպես հրամայում է Քրիստոս ասելով, թե՛ Սառչեց երկիրը, և «Ցամաքելու է շատերի սերը» (Մատթեոս. ԻԴ 12), որ տեսնում ենք. երբ ամեն տեսակ մեղք համարձակ գործում է քահանաների և աշխարհականների մեջ, ինչպես ջրհեղեղի ժամանակ և լիներու է Նեոի երևմանը մոտ ժամանակ: Եվ հիրավի, Աստված արդարությամբ բարկացավ աշխարհի վրա և ոչնչացրեց մարդկային ցեղը անծանոթ և խուժադեմ ազգերի ձեռքով, որոնց դուրս բերեց արևելքից: Իսկ ով ջանա և այս դառն ժամանակներում բարիք գործի, Աստված շատ կուրախանա և մեծ վարձ կտա նրան: Արդ, ինչպես պատվական ու ցանկալի է ծաղիկը, որ ցուրտ ձմռանը գտնում են սառն ձյան մեջ, նույնպես և մարդու բարեգործությունը՝ այդ ժամանակներում: Այս պատճառով աղաչում եմ ձեզ, ո՛վ Աստծո քահանաներ և ժողովուրդ, քաջությամբ ջանացեք և բարին գործեք, որով ուրախանում է Քրիստոս, Ով իր արյամբ փրկագ-

նեց ձեզ սատանայի ծառայությունից, որ կատաղած չուն և անկուշտ բող է, որովհետև ինքը կորավ և ջանում է (բուրբին) կորստյան մատնել մինչև վախճանը: Եվ բոլոր բարի գործերից առաջ հանձն առեք համբերությունը: Քանզի այն մարդը, որ համբերող չէ, չի կարող բարին գործել, իսկ ով համբերող է և երկայնամիտ, նա ամեն տեսակ բարիք է գործում, որովհետև այն մարդը, որ անհամբեր և կարճամիտ է, նա ամեն տեսակ աննշան բաներից և աննշան պատճառից բարկանում, տրտմում և տրտմելով վիրավորում է ընկերոջը, և չի հանդարտվում: Մինչդեռ ով ջանում և համբերում է նեղությունն ու չարչարանքին՝ որտեղից էլ որ դրանք գան՝ թե՛ դեերից, թե՛ մարդկանցից՝ [նա արժանի կդառնա Աստծո արքայությունը]: Քանզի առաջին սուրբերը համբերությամբ արժանի դարձան Աստծո արքայությունը, որովհետև հանուն Աստծո համբերեցին ամեն տեսակ չարչարանքի ու հալածանքի, և մեռան Աստծո անվան համար՝ գոհանալով ուրախությամբ և անոխակալությամբ, այս կյանքը ատեցին և ամեն տեսակ տառապանքով իրենց անձը կորցրեցին, ինչպես Քրիստոս հրամայեց (Տե՛ս Մատթեոս Ժ 39, ԺԶ 25, Հմմտ. Մրկ. Ը 35, Ղուկ. Թ 24-25): Եվ այն կյանքը գտան, ու իրենց անձը ապրեցրին Աստծո խաղաղություն մեջ, համաձայն Քրիստոսի հրամանի, քանզի հավատքը մարդուն օգտակար չէ առանց բարի գործերի (Տե՛ս Հակ. Բ 20, 26): Խոսքիս վկա է Քրիստոս Ինքը, որ ասում է՝ Ով հավատա ինձ և ասի՛ Տեր Աստված՝ չի մտնի արքայություն մեջ, այլ կմտնի նա, ով իմ հանդեպ եղած հավատքով կատարում է Հորս կամքը, ինչի

մասին գրեցի իմ Ավետարանում (Մատթեոս է 21). ով ողորմած է, հյուրասեր, անոխակալ, խոնարհ, աննենգ, և սիրով է ընդունում ատելիին ու բարեկամին, և իր մեղքերը ապաշխարում է խոստովանությամբ ու արտասուքով, որովհետև այն մարդը, ով համառությամբ դարձի չի գալիս և մեռնում է չարիքի մեջ, նա դառնում է սատանայի որդի և նրա հետ տանջվում <...>:

Սրանից հետո, որքան կարող եք, հեռու փախեք չար լեզվից, որովհետև չնայած մեր լեզուն փոքր անդամ է, բայց առյուծից ավելի չար, պատառող, վիշապարբու գազան է: Եվ այս աշխարհի կորուստը օձի լեզվից եղավ, որովհետև այնտեղ էր նստել սատանան, նա խոսեց նենգությամբ և կորստյան մատնեց Եվային, նույնպես՝ մեզ: Այսօր ևս սատանան նստած է ամեն տեսակ չար, անկարգ լեզվի վրա և շատերին կորստյան է մատնում, և ոչ ոք չի կարող համբել, թե քանի մարդ է զրպարտվում և մեռնում չար լեզուների հետևանքով: Այս պատճառով Քրիստոս և նրա բոլոր սրբերը հաստատորեն պատվիրեցին մեզ ասելով, թե սանձեք ձեր լեզուները, որովհետև ամեն տեսակ մեղք վախով և ամոթով է կատարվում, մինչդեռ լեզվի չարը գործում է համարձակ, անաշխատ և անահ, ու խիստ ծանր մեղք է, քանզի մատնում է, դառնում Հոգույի ընկերը: Եվ ով բարկանում ու հանիրավի նգովում է, դա նրա գլխին կշրջվի, որովհետև Քրիստոս հանիրավի դատաստան չի անում:

Եվ ով չար ու մեծամեծ հայհոյանքներ է տալիս՝ նա նրա բերանն է, իսկ լեզուն՝ սատանայի բերանը և լեզուն: Եվ կրա-

կե որդերով տանջվում է դժոխքի հատակում սատանայի հետ, որովհետև չար հայհոյիչը Աստծուն հայհոյող և անարգող է անվանվում, տանջվում է ուրացողների, հերձվածողների հետ, որովհետև չնայած ամեն տեսակ մեղք չար է, բայց հայհոյանքը թունավորելով ապականում է նախ հայհոյողի հոգին, ապա՝ լսողի, և դարձնում Աստծուն ատելի <...>:

Սրանից հետո պատվելով մեծարեք կիրակին, որովհետև արարչության առաջին օրը կիրակի էր, և այս օրը թարգմանվում է Աստծո օր և փառքով լցված Տերունական օր: Եվ Մովսեսը կիրակի օրը ժողովրդին դուրս բերեց Եգիպտոսից: Եվ Քրիստոս կիրակի օրը ծնվեց Կույսից և կիրակի օրը մեռեց ներքից հարություն առավ: Իսկ ով կիրակին չի պատվում բարի գործով և մարմնավոր զբաղումներից զերծ մնալով՝ նա չի պատվում Քրիստոսի ծնունդը: Նաև աշխարհի վախճանին վերջին կիրակին Քրիստոս հարություն է տալու մեզ և հատուցելու մեզ ըստ մեր գործերի: Այս պատճառով մեզ անհրաժեշտ է կիրակի օրը խոստովանել և հիշել ասեղ դատաստանը, բարիք գործել, լալ և ապաշխարել և քենը մաքրել սրտից: Նաև հարկ է քահանաներին որքան հնարավոր է կիրակի օրը կանուխ սկսել պատարագը, որպեսզի ժողովուրդը կարողանա առանց հացի մնալ մինչև մեր Քրիստոս Աստծո պատարագի ավարտը <...>:

Դարձյալ Աստծո սպառնալիքներից քեզ համար մահացու թուն է, ավա՛ղ, նաև գոռոզությունը. վախեցեք և հեռու փախեք գոռոզությունից, որովհետև այն մեծ բող սատանան, որ կատաղի շուն է, գոռոզությամբ կործանվեց և ոխակալու-

Թյամբ կորստյան մատնեց Ադամին և մեզ: Այդ պատճառով գոռոզը և ոխակալը սատանայի որդիներ են, և նրա հետ են տանջվելու, ինչպես և Քրիստոս հրամայում է ասելով, թե՛ Իմ Հայրը չի թողնում ոխակալի մեղքը և չի ընդունում նրա բարի գործը: Եվ մարդ, որ գոռոզությամբ բարձրանում և իրեն սուրբ ու մեծ է համարում ընկերներից, նա իջնում է սատանայի մոտ, և ոխակալ ու գոռոզ է հորջորջվում Քրիստոսից, որ մեր Աստվածն է, և հիշիր քո կորուստը, որովհետև եթե Քրիստոսի խոսքերին չես հավատում՝ դու սատանային ես պաշտում: Քանզի Քրիստոս քեզ ասում է. Եթե դու ընկերոջդ՝ քո հանդեպ արած փոքրիկ մեղքը չես ներում, ապա ես քո՝ իմ հանդեպ արած անթիվ չարություններն ինչպե՞ս ներեմ, որովհետև դու ինչ չափով չափես ընկերոջդ՝ ես քեզ եմ չափելու: Եվ եթե խոնարհությամբ ինքդ քեզ մեղավոր ու խոտան համարես քո ընկերներից՝ ապա դու ինձ համար բնակարան և հանգիստ կլինես այս և այն կյանքում <...>: Սրանից հետո կախարդից, ոգեհարցուկից և աստղաբաշխից իբրև սատանայից հեռու փախեք, քանզի նրանք իրենց ձեռագրով միաբան որդիներն են սատանայի և դևերի եղբայրները, ինչպես Հանեսն ու Համբեսն էին, Նիկյուրեսը ու Կենապասը և այլ կախարդներ ու տգետներ: Եվ անմիտը հավատում է նրանց սուտ և խաբեբա խոսքերին, որովհետև եթե նրանք կարողանային ստույգ և ճիշտ խոսք ու գործ կատարել, ապա նրանք իշխաններ, արքաներ և աշխարհակալներ կլինեին: Մինչդեռ նրանք սուտ, տգետ ու դիվական խոսքերով խաբում են տխմարներին և նրանցից վերցնում իրենց

համար անհրաժեշտը, դևերի սեղանին դնում ճրագ և խունկ, ու տխմարներին սեղանակից դարձնում դևերին: Իսկ մարդ, որ գնում է նրանց մոտ՝ սատանայի մոտ է գնում և նրան միաբանվում, և ով նրանցից թուղթ կամ մի նշան է վերցնում և հավատում նրանց դիվամոլ խոսքերին, նա դևերին կապում է իրեն: Եվ եթե զղման է գալիս և խոստովանում՝ քահանան նրան տանում է եկեղեցու դուռը կամ Խաչի առջև, նորից հրաժարեցնում և դավանել է տալիս Հայր Աստծուն, Որդի Աստծուն և Սուրբ Հոգի Աստծուն <...>:

Սրանից հետո փախեք շնությունից, որովայնամոլությունից, հարբեցությունից, որովհետև այս երեք չարերը սատանայից ծնված եղբայրներ են, և հորդորում, աճեցնում են մեկը մյուսին, որովհետև ով շատ է ուտում և խմում նա աճեցնում և բորբոքում է շնության և ցանկասիրության ախտը և առիթ տալիս շնության. ովքեր ուտում և խմում են՝ նրանց շատ ծախս է անհրաժեշտ: Եվ շատերը այս երեք չարիքի պատճառով ավերում են իրենց հայրենիքն ու տունը, և աղքատանում, դառնում գող, զրկող, սպանող, ովքեր կարող են կատարել այս չարությունները: Լավ գիտեք և այն, որ Ադամը պտուղ ուտելով կորցրեց իրեն և մեզ, իսկ Սողոմոն և Գոմորոն՝ նաև նրանց ընկերներին: Շատ ուտելն ու խմելը զորացրեց ախտն ու շնության ցանկությունը նրանց, ովքեր թողեցին որդեժնության համար Աստծո սահմանածը և կանանց թողնելով նոր չարություններ գործեցին, և Աստված կրակով ջնջեց նրանց: Եվ Նոյի ժամանակ գիրացան ու Աստծուն մոռացան, որովհետև պարարտ ու շատ էր անաչ-

խատ բարիքը: Եվ աճեց նրանց պիղծ ցանկութիւնը. ոչ ծածուկ շնութեամբ և ոչ էլ իրենց կանանցով չհագեցան, դեռ ավելին իշխաններն ու խելացի տանուտերերը սատանայի խորհրդակցութեամբ բոլոր կանանց ընդհանուր դարձրին և բաց թողեցին իբրև անասուն, որպեսզի առանց ահի և ամոթի չնանան: Եվ Հայրապետների գրքում գրված գտանք, որ փողոցներում և հրապարակներում խայտառակվում էին առանց ամոթի և շան նման, քսան, երեսուն տղամարդ շանում էին մի կնոջ հետ, իսկ մյուսները շուրջպար բռնած ծափ էին տալիս, թռչկոտում և շնից ու խոզից ավելի գարշելի ձևով մեղք էին գործում: Եվ այնժամ Աստծո հրամանով Նոյը մտավ տապանի մեջ և Աստված ջրհեղեղով բնաջինջ արեց նրանց:

Ահա, որդիներ, այս է շատ ուտելու և խմելու շահը: Իսկ ով սակավապետութեամբ է ուտում և խմում, պահքն ու պարկեշտութիւնը ցամաքեցնում է շնական ցանկասիրութեան պիղծ ախտը, և մարդը դառնում է մարմնավոր հրեշտակ <...>:



ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔ ԴԺՈՒՔԻ ՄԱՍԻՆ,
ԹԵ ՍՏՈՒՅԳ ԿԱ ԴԺՈՒՔԸ՝ ԱՍՏԾՈՒ ԵՎ ԲՈՒՐ
ՍՈՒՐԲԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅԱՄԲ, ԵՎ ԼՈԿ ՍՈՒՏ
ՍՊԱՌՆԱԼԻՔ ՉԷ, ԻՆՉՊԵՍ ԿԱՐԾՈՒՄ ԵՆ
ՏԳԵՏՆԵՐՆ ՈՒ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ, ԱՍՏՂԱԲԱՇԽՆԵՐԸ
ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ, ՈՎՔԵՐ ՆԵՈՒՆԱԽԱԿԱՐԱՊԵՏՆԵՐՆ
ԵՆ, ՈՐԻ ՄԱՍԻՆ ԵՄ ՄԵՂԱՎՈՐ ՎԱՐԴԱՍ ԳՐՈՒՄ
ԵՄ ՍՈՒՐԲ ԳՐՔԻՑ, ԵՎ ՀԱՅՏՆՈՒՄ ՉԵՉ

Արդ, այսօր ինձ մոտ եկեք ամեն տեսակ մեղավորների խմբեր, հող լիզելով [բերանքսիվայր] ընկնենք Աստծո առջև և բարձրագոչ ձայնով օրհնենք նրան, և բարեբանելով փառաբանենք ամեն ժամ, քանզի ողորմեց մեզ և սկզբից հայտնեց դժոխքի անունը, տանջանքը և չարութիւնը, որովհետև արդար և վայել չէր Աստծուն, եթե մեզնից պահեր և կոծկեր դժոխքը և հետո այնտեղ գցեր մեզ: Մինչդեռ ինչպես սկզբից էլ ողորմած ու բարի էր Աստված, ցույց տվեց և մեզ հայտնեց դժոխքի մասին գործով և խոսքով՝ բոլոր սուրբերի միջոցով, որպեսզի դուրս գանք չարից և չմտնենք դժոխքի տանջանքների մեջ: Եվ դժոխքի սպառնալիքներով խրատում է մեզ ու սարսափեցնում ինչպես մեկը, որ գավազանով խրատում է չարամիտ ծառային և անմիտ որդուն և խթանով ուղղում է չին ու խարազանով՝ եզին, որովհետև ով խնայում է որդուն ու

ծառային, և գանահարում՝ ատում ու չի սիրում նրանց: Նույնպես և Աստված ծանր մահակով, դժոխքի սպառնալիքով սթափեցնում է մեզ և արթնացնում մեղքի հեշտագին քնից, և հորդորում գնալ դեպի բարին, որպեսզի չկորչենք: Արդ, բարի և շահավետ է մեզ դժոխքի սպառնալիքը քան արքայության խոստումը: Եվ ով իմաստությամբ քննի՝ կարգարացնի իմ խոսքերը: Քանզի մեղքից հեռանում ենք ոչ թե հանուն Աստծո տեսության, որին ցանկացան սերովբենները, և ոչ էլ ի սեր անճառելի բարիքի և արքայության: Այլ դժոխքի սպառնալիքի և ահագին ամոթի պատճառով ենք հեռանում մեղքից և ջերմ արտասուքով ապաշխարում, որով ազատվում ենք: Իսկ եթե հեշտաքարոզ և քաղցրաբան մեկը ձեզ մոտ գա և ասի, թե դժոխք չկա, Քրիստոս ավերել է այն, թե Աստված բարի և քաղցր է՝ իմացեք, որ դիներ, որ մեղքի հայրը՝ սատանան է խոսում նրա շուրթերով և նա չգիտի. որպեսզի տգետներն ու մեղսասերները լսեն այս, թե դժոխք չկա և ուրախանալով շտապեն դեպի մեղքը: Եվ մահը գողի նման գալիս է հանկարծակի ու նրանց տանում դժոխքին գերի: Եվ Աստված և բոլոր սուրբերը քարոզում են, թե կա դժոխք, մինչդեռ դու դիվաբան քարոզում ես, թե՛ չկա: Իմացեք իմ որդիներ, այն մարդը, ով Աստծուն ողորմած և քաղցր է կարծում, ու ասում, թե տանջանք չկա, նա ստուգապես սատանայից ավելի անմիտ, անողորմ ու չար է: Նույնպես և նա, ով ասում է, թե չկա հարություն ու գործերի հատուցում, նմանապես և նա, ով խրատում է Աստծուն, թե ինչո՞ւ ստեղծեցիր այս կամ այն: Որովհետև մեղավորներիս համար ավելի մեծ բարիք կա, քան

այն, թե մեռելներից հարություն չենք առնելու և չենք կրելու ահագին ամոթը մեծ հրապարակում, ու չենք տանջվելու գեհենում: Արդ, երանի կլիներ մեզ, եթե անասունների նման հարություն չառնեինք²: Բայց վայ մեզ որովհետև ստուգապես պետք է մեռելներից հարություն առնենք՝ Աստծո և Նրա բոլոր սուրբերի վկայությամբ: Եվ ով չի հավատում, թե կա դժոխք և հարություն՝ նա անձամբ կկրի տանջանքի փորձառությունը, երբ հարություն առնի մեռելներից, և այնժամ անօգուտ և անշահ կհավատա, կլա և կողբա: Նա ինքն իրենով կլեցնի դժոխքի լայնությունն ու խորությունը և կտանջվի նրա մեջ, որովհետև նաև ես՝ իբրև մսեղեն [զանգված] ընկած լինելով անբավ մեղքերի տակ, բոլոր մեղավորներից ավելի կարիք ունեմ դժոխքի տրոհմանն ու ավերմանը: Ուրեմն ավելի լավ է ինձ տանջվել անչեջ գեհենում քան թե խաբել մարդկանց և ասել թե չկա դժոխք կամ սուտ համարել Աստծո և նրա սուրբերի սպառնալիքը դժոխքի վերաբերյալ: Արդ, փառավորյալ է մարդասեր Աստված, որ գործով և ճշմարտությամբ արարեց, օրինակեց և մեզ հայտնեց, թե կա դժոխք, որ այսպիսին է: Որովհետև երբ Ադամն ու Եվան խախտեցին պատվիրանը, Քրիստոս ամենևին չխնայեց նրանց, այլ արտաքսեց նրանց իր փառքից ու բարիքից: Եվ երբ մարդկանց ցեղը՝ ամեն տեսակ մեղքի մեջ անասունի նմանվեց, նա չողորմեց նրանց, այլ ջրհեղեղով ջնջեց նրանց: Եվ երբ հիմարանալով, հակառակ նրա սկսեցին աշտարակ կառուցել, նա ցրեց նրանց՝ բաժանելով նրանց լեզուները: Եվ երբ Սողոմոն բազմացավ անկարգ ու անսահման չարագործությունը՝ նա ան-

սահման կրակով վերից կիզելով նրանց իսպառ այրեց: Եվ երբ փարավոնը նրան չլսեց՝ նա Կարմիր ծովի մեջ ընկզմեց նրան իր զորքի հետ միասին, իսկ դրանից առաջ տասն հարվածներով տանջեց Եգիպտոսը Մովսեսի ձեռքով: Եվ երբ Մովսեսի ժողովուրդը կերակուր ցանկացավ՝ նա նրանցից չորս հազարին ոչնչացրեց մի ակնթարթում, նույն ձևով վարվեց, երբ շնանում էին ամաղեկացիների աղջիկների հետ, նույն քանակով ոչնչացրեց նրանց: Ահա, որդիներ, Աստված սկզբից այս բաներն արեց, որպեսզի հավատաք նրա սպառնալիքներին, թե անդամ ձեռքերից անջատվեք և չեք զրկվեք: Քանզի Աստված նույնն է և չի փոփոխվում. տալով դժոխքի օրինակը նա բազում հարվածներ և ցասում բերեց մարդկանց վրա՝ մեղքերի պատճառով, որպեսզի դուրս գան դժոխքի տանջանքից. մահտարածամ, սով սրածուծություն, երաշտ, հիվանդություն, դիվահարություն, աղքատություն և այլ բազում զայրույթ ու բարկություն: Եվ դարձյալ Աստված սաստում է իր խոսքով և սպառնում է Իր սուրբերով, ինչպես այն, որ ասում է թե՛ «Բորբոքված հուր կա Իմ բարկության մեջ, որ կիզելով այրում է մեղավորներին և իջեցնում դժոխքի հատակը», և թե՛ «Վրեժի օրը պետք է հատուցեմ նրանց, ովքեր ճաշակել են վիշապների գինին սողոմացիների այգուց», որ չարագործն է: Եվ Ենոքն ասում է, թե՛ «Տերը բյուրավոր հրեշտակներով գալու է հատուցելու ամբարիշտներին և նրանց, ովքեր չար խոսեցին նրա մասին»³: Եվ Դավիթն ասում է. «Տերը դատում է իր ժողովրդին և մեղավորների վրա հուր և ծծումբ է տեղացնելու» (Սաղմոս Ժ 7): Եվ Սողոմոնն ասում

է. «Պիտի նկուն լինեն երգող աղջիկները և իբրև կապար տարածվելով պետք է իջնեն դժոխք, որովհետև թագավորը զայրանալու է ամբարիշտների վրա» (Հմմտ. Ժող. ԺԲ 4-5): Եվ Հովեյն ասում է, թե՛ «Վա՛յ, վա՛յ, որովհետև մոտ է Տիրոջ օրը՝ զարհուրելի դառնություն» (Հովեյ Ա 15): Եվ Հոբն ասում է. «Սոսկալի մահվան են [արժանի] չարերը, որովհետև նրանք բորբոքեցին [Աստծո] բարկությունը, խորհակահար պետք է լինեն, հողմն ու մրրիկը քշելու է նրանց, և հողմի առջև հարդի նման են լինելու» (Հմմտ. Հոբ ԻԱ 18): Եվ Հեսուոն, իբրև դժոխքի օրինակ, քանդեց Երիքովը և անիծեց այն կառուցողին (տե՛ս Հեսու Զ 26): Եվ Քրիստոս՝ մեր հույսը, ավերեց դժոխքը: Իսկ ով չար գործերով կառուցի այն՝ լսելու է Քրիստոսից, որ ասում է, թե՛ «Գնա անչեղ կրակի մեջ» (Մրկ. Թ 42): Ամովսը ասում է. «Մի ցանկացեք Տիրոջ օրը, որովհետև այն չար ու խավար է» (Ամովս Ե 18-20): Եվ Ովսէ մարգարեն ասում է. «Վա՛յ, քանզի Տիրոջ օրը եղեգի նման այրելու է ամբարշտին»: Եվ Միքիան ասում է. «Տիրոջ օրը բորբոքված հնոցի նման է լինելու և մեղավորները՝ եղեգի, ու կրակը այրելով չորացնելու է նրանց»: Եվ Ամբակումն ասում է. «Երբ Իմ անձը բարկությունից խռովվի, Քո բարկության ժամանակ հիշիր, երբ բարկությամբ արթնանաս երկրի և նետաձիգ լինես ամբարիշտներին» (Ամբակում Գ 2): Եվ Դանիելն ասում է. «Նայում էի, մինչև որ ավթոռներ դրվեցին և մի Ծերունի նստում էր այնտեղ: Նրա առաջից հստում էր կրակե հորդ մի գետ, հազար-հազարավորներ պաշտում էին նրան և բյուր-բյուրավորներ նրա շուրջն էին: Եվ ննջեցյալ-

ները հարուժյուն առան հողից՝ ոմանք կյանքի համար և ոմանք անարգանքի, նախատինքի և ամոթի համար» (*Դանիել է 9-10*): Եվ Հովհաննես Մկրտիչն ասում է. «Ով բարի պտուղ չի բերում՝ նրան հատելու է Աստծո հրամանների կացինը և կրակն է նետվելու» (*Մատթեոս Գ 10, Ղուկ. Գ 5*), և թե՛ «Ո՞վ ձեզ սովորեցրեց փախչել վերահաս բարկությունից», Նրա, «որի քամհարը իր ձեռքում է և կմաքրի իր կալը, ցորենը կհավաքի իր շտեմարանում» (*Մատթեոս. Գ 7, 12*), որ արդարներն են, և «հարզն այրելու է անշեջ հրով», որ մեղավորներն են: Եվ հավատքի վեմ Պետրոսն ասում է. «Տերը չի ուշացնի իր գալուստը, բայց Տիրոջ օրը պիտի գա ինչպես մի գող, երբ երկինքը պիտի անցնի, չքանա շառաչյունով, և տարերքը հրով կիզված պիտի լուծվի, և երկիրն ու ինչ գործեր որ կան նրա վրա, հայտնի պիտի լինեն, և լինելու է նոր երկինք ու նոր երկիր, ըստ խոստումի» (*Բ Պետրոս Գ 9-10, 13*): Եվ Հովհաննես Ավետարանիչն է ասում. «Ահա տեսա, կոխում էր Աստծո հնձանը» (*Հայտն. ԺԴ 19*), որ դժոխքն է, «Եվ հարուժյուն առան մեռելները և կանգնեցին Աստծո Աթոռի առջև, և Գիրքը բացվեց և մեռելները դատվեցին համաձայն գրվածքների, և որի անունը չգտնվեց կենաց գրքում, նրան կապեցին ու նետեցին կրակի լճի մեջ» (*Հայտն. Ի 12-15*): Եվ Պողոսը՝ Քրիստոսի լեզուն, ասում է, թե «Աստծո արքայությունը չեն կարող ժառանգել արվագետները, շնացողները, մարդասպանները, հարբեցողները, բամբասողները և գրգռողները, որովհետև նախանձի կրակը ուտելու է նրանց» (*Ա Կորնթ. Զ 10*), [նաև նրանց, ով] այստեղ պատրաստեց փայտ,

խոտ, եղեգ, որ չարի գործերն են: Կրակը փորձելու է նրանց հարուժյան օրը, և մեղավորների խմբերը պատժելով մնալու են կրակի մեջ:

Ահա, իմ որդիներ, Սուրբ Գրքի առաքյալներից և մարգարեներից քաղված սակավաթիվ խոսքեր դժոխքի մասին: Նրանք ունեն և այլ բազում խոսքեր դժոխքի վերաբերյալ: Բայց այսքանը բավական համարեցի, որովհետև դուք քաջապետների խոսքը, որ ձեր առջև բազում օրինակներով պատմում են դժոխքի տանջանքի և ամենայն ինչի մասին: Վա՛յ ինձ որդիներ, որովհետև «Մեծ ահ է ընկնել կենդանի Աստծո ձեռքը» (*Եբբ. Ժ 31*) անմաքուր և անսուրբ կյանքով: Նաև մեր Աստծուց՝ Քրիստոսից, որ Հայր Աստծո սրտի անմիջնորդ ծնունդն է, անդադար լսում եք, նրանից, որ իր Սուրբ Ավետարանի բազում տեղերում պատմում է դժոխքի մասին իր խոսքի մեջ փոխաբերաբար ասելով, թե՛ այնժամ Թագավորն իր ձախ կողմում կանգնեցնելու է այծերին և ասելու, թե՛ «Անիծյալներ, հեռացեք ինձանից արտաքին խավարի մեջ» (*Մատթեոս ԻԵ 30*) և այլն: Նաև՝ մի ազնվական հեռու աշխարհ գնաց՝ ստանալու իր Թագավորությունը և վերադառնալու: Եվ ստանալով Թագավորությունը հետ դարձավ ու կտորեց իր թշնամիներին: Եվ նրան, ով չէր բազմացրել արծաթը, կապել տվեց և նետեց կրակի մեջ (*տե՛ս Ղուկ. ԺԹ 12-27*): Նույնպես վարվեց և նրա հանդեպ, ով չունեց հարսանյաց շորեր (*տե՛ս Մատթեոս ԻԲ 12*), և նրա, ով ուտում, խմում և ծեծում էր իր ծառայակիցներին (*տե՛ս Մատթեոս ԻԴ 48-*

50), նաև անիրավ մշակներին տանջեց և իր այգին տվեց բարի մշակներին (տե՛ս Մատթեոս. ԻԱ): Եվ գալիս են հիմար կոյսերը ու լալիս և ասում. Տե՛ր, Տե՛ր բաց մեզ: Եվ ասում է թագավորը, թե՛ «Չեմ ճանաչում ձեզ, հեռացե՛ք ինձանից» (տե՛ս Մատթեոս. ԻԵ): Նաև [պատժեց] նրան, ով իր անբավ մեղքերի դիմաց ստացավ Աստծո թողութունը, բայց ինքը ռիսակալ հոգով չթողեց ընկերոջ մեղքը, այլ խեղդում էր նրան: Տերն իմացավ այս և կապել տվեց նրան և նետեց անխուսափելի տանջանքի մեջ, ասելով՝ «Տուր քո տնտեսության հաշիվը» (Ղուկ. ԺԶ 2): Եվ թե՛ «Գեհենի է պարտավոր նա, ով իր եղբորն անվանում է խենթ ու հիմար» (Մատթեոս Ե 22): Նաև գալու են արևելքից և արևմուտքից և հանելու ձեզ արտաքին խավարը (տե՛ս Մատթեոս Ը 11-12):

Կան և այլ բազում վկայություններ դժոխքի մասին՝ գրված մեր Տեր Աստծո՝ Հիսուս Քրիստոսի սուրբ Ավետարանում, որ միշտ լսում եք սուրբ եկեղեցում: Եվ եթե [մեկը] այն քիչ բաներին, որ գրեցինք, չանսա և չհավատա, ապա շատ բաներին էլ նա չի հավատա: Որովհետև Քրիստոս հրամայում է՝ ասելով. «Ով հավատարիմ է փոքր բաներում՝ նա հավատարիմ կլինի նաև մեծ բաներում, և ով փոքր բաներում անիրավ է՝ նա անիրավ կլինի և մեծ բաներում» (Ղուկաս ԺԶ 10):

Արդ, բազում քննություն կատարվեց դժոխքի վերաբերյալ, թե Քրիստոսի գալստից առաջ որտեղ էր այն. ոմանք ասացին երկնքում էր: Դարձյալ ոմանք ասացին, թե դժոխքը Երուսաղեմի տակ էր, ներքին սանդարամետի անդունդներում, և թե՛ սատանան այնտեղ էր պահում հոգիներին: Եվ

այս տեղին, պատշաճ ու ստույգ է քան մյուսները, որովհետև հարմարվում է առաջ և հետո Երուսաղեմում կատարած Աստծո գործերին. քանզի երկու նախաստեղծների ոսկորները այնտեղ բերվեցին և Աստծո նախախնամությամբ այնտեղ թաղվեցին: Եվ Աստված Ադամին ստեղծեց Սիոն լեռան [հողից]: Հին օրենքը, մարգարեները և պատարագը այնտեղ հաստատվեց և տաճարը այնտեղ կառուցվեց: Այդ պատճառով Բանն Աստված այնտեղ մարմին հագավ մեծ խորհրդով, որ կանխանշված էր վաղ ժամանակներից: Այդ պատճառով այնտեղ ծնեց և ազատեց Եվային և այնտեղ խաչվեց ու փրկեց Ադամին, և այնտեղ իջավ դժոխքի մեջ, ազատեց արգելափակված հոգիներին, ավերեց դժոխքը, կապեց սատանային, հարություն առավ մեռելներից և ոչնչացրեց մահվան գորությունը: Եվ արդ, սա այն դժոխքն է, որ սատանան և մարդկանց մեղքն ու անհավատությունը կառուցեցին մինչև մեր Աստծո՝ Քրիստոսի գալուստը: Եվ հավատացինք ու հավատում ենք, որ Քրիստոս ավերեց դժոխքը:

Այժմ քննեք ու իմանանք, թե այս դժոխքը, որ Քրիստոս ասում է, թե աշխարհից դուրս է, որտեղի՞ց բուսեց կամ որտեղի՞ց եղավ: Որդիներ, երբ Քրիստոս ավերեց այն դժոխքը, որ շինել էր սատանան, կար ուրիշ ավելի դառն դժոխք, որ այս աշխարհի մեղքերի և չար գործերի շատանալու հետևանքով սատանան կրկին շինեց: Ահավասիկ մեզ օգուտ և շահ չեղավ առաջին դժոխքի ավերումից, որովհետև ամեն մեղավոր ինքն է շինում դժոխքը, որ առաջինից չար է: Դատաստանի օրը Քրիստոս յուրաքանչյուր ազամորդու ուղարկում

է իր շինութեան մեջ: Այդ պատճառով Քրիստոս մեր Փրկիչը ասում է, թե՛ Երկինք, իմ Հոր մոտ ուղարկեք ձեր գանձերը և մի՛ եղեք սատանայի գանձապահն ու մշակը, որովհետև ինչ չափով չափեք՝ ես ձեզ այն չափով եմ չափելու (տե՛ս Մատթեոս Զ 20, է 2, Մարկոս Դ 24, Ղուկաս Զ 38):

Ահա, Աստծո քահանաներ, իմ եղբայրներ և կարգակիցներ, իմացաք, որ ամեն աղամորդի ինքն է շինում իր դժոխքը և արքայութիւնը: Այս պատճառով, աղաչում եմ ձեզ բարի օրինակ եղեք մարդկանց մեջ: Որովհետև եթե մենք՝ քահանաներս ծուլ և ազահ, գինեսեր, զրկող և ապականված լինենք՝ չենք կարող խրատել մեր ժողովրդին: Եվ եթե գայթակղվեն՝ նրանց արյունը Աստված մեզնից պիտի պահանջի, ինչպես մարգարեին ասաց, որին հսկիչ կարգեց (Եսայի ԻԱ 6, Երեմիա Զ 17): Իսկ եթե մենք մեղավորներին բարի օրինակ լինենք՝ խոնարհ, անոխակալ, սուրբ, ողորմած, համբերող, պարկեշտ և աղոթարար՝ նրանք մեղավորները կշահեն և մենք կկարողանանք սովորեցնել և խրատել նրանց, որով կփրկվենք նրանց արյունից: Քանզի քահանան աղ, լույս և Աստծո հրեշտակ է մարդկանց մեջ: Եվ ով խոսքով գործի և մեղավորին դարձի բերի այնպիսին Աստծո բերան կկոչվի, և առաքյալների ու մարգարեների հետ միասին Աստծուց վարձ կստանա: Եվ Քրիստոսին փա՛ռք հավիտյանս. ամեն:

Բայց որքան մեծ է մեր պատիվը մարդկանց առջև այս կյանքում, նույնքան սաստիկ է մեր տանջանքը այն կյանքում, եթե մեր չար գործերով գայթակղենք մարդկանց: Իսկ եթե անարատ ծառայենք Քրիստոսի ժողովրդին, նա՛

Քրիստոս մեզ առաջամարտիկի վարձ կտա: Եվ դուք ժողովուրդներ անբասիր ծառայեք եկեղեցուն, ինչպես և սկզբից գրեցի և մի՛ եղեք ձեր առաջնորդների դատավորը: Անարատ կերպով ծառայեք մարմնավոր իշխանութեանը և [ստուգեցեք] հարկը, որովհետև ով գողանա և զրկի հարկի իրավունքը՝ գող Աքարի և Գեհեզի հետ կդատվի (տե՛ս Հեսու Զ 18, է 1-26, Ա Մնաց. Բ 7, Դ Թագավ. Դ, Ե, Ը), որովհետև ինչ ավելիով առնեն ձեզնից, այն կորուստ է լինելու նրանց, և ձեզ՝ կյանք Աստծո հետ: Եվ դուք իշխաններ ու դատավորներ, որ նստած եք Աստծո աթոռին, ուղիղ և առանց նենգութեան դատեք Աստծո ժողովրդին, որովհետև այսօր կաք և վաղը փոշի եք գերեզմանում: Եվ դրանից հետո գալու և երևալու է ձեզ ահռելի ու սոսկալի Դատավորը, որ չի շեփոքում անիրավութիւնը և ինչպես մի մազով կքաշեր լեռը, այդպես կքաշի ձեր ունեզերից և հետո կրակի մեջ կնետի, որից և որտեղից թող բոլորին փրկի Սուրբ Հոգին:

Ահա, որդիներ, ձեզ պարզ խոսքով հիշեցրի Աստծո օրենքը և արքայութեան հանգիստը, դժոխքի չարութիւնը և սոսկալի տանջանքը:

Եվ Հայր Աստծուն, նրա Միածնին և Սուրբ Հոգուն վայել է փառք և անլուրի ձայնով օրհնութիւն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:





Ժ

ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ՝ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԽՐԱՏԸ՝ ԱՍՎԱԾ ԱՌՅՈՒԾ [ԱՆՈՒՆՈՎ] ՊԱՏԱՆՈՒ ԽՆԴԻԱՆՔՈՎ

Պործը, որի մասին խնդրեցիր ինձանից, ո՛վ սիրելի որդեյակ, թեպետ և անկարող էի բավարար չափով կատարել, բայց քո առաջատես մտքի խոհականության վրա զարմանալով հիացա: Այդ պատճառով, անտեսելով տկարությունս, բազմահոժար բաղձանքով փուլթացի գորացնել քո մեջ եղած կրակի բորբոքումը, համաձայն Իմաստունի այն խոսքի, թե՛ «Իմաստունների խոսքերը նման են եզների խթանի կամ մեծավորի տված մուրհակի վրա խփած կնիքի» (Ժող. ԺԲ 11), որոնք աննվազ ծագումով փայլեցնում են աստվածային սիրո ճառագայթը: Հանուն դրա զգուշ եղիր. լուկ խոքով մի՛ երևա աստվածասեր, այլ ճշմարտության փուլթա Տիրոջ պատվիրանների կատարմանը. «Որովհետև ով սիրում է ինձ, ասում է, իմ խոսքը կպահի» (Հովհ. ԺԴ 23): Եվ այս լինում է, երբ մեկն արիությանը գոտեմարտում է մոլի փափկասիրության դեմ և Քրիստոսով ազատված անձը զերծ պահում սովորական ախտերի ծառայությունից, որպեսզի ապստամբ ծառայի նման անտանելի տանջանքների չմատնվի: Եվ քանի որ այս բոլորի

մասին բավական [հրահանգներ] ունես աստվածաշունչ գրքերում՝ հավատավոր սրտով խրատիր քեզ և շատերին, որովհետև «Տիրոջ պատվիրանները լույս են» (Սղմ. ԺԼ 9). ով կատարի դրանք կհարատևի նրանցով, և ով արհամարհի դրանք ու չկատարի, Աստծո նույն օրենքները կդատապարտեն նրան վերջին օրը: Այս պատճառով տվյալ խնդրի շուրջ եղածը խաղաղությունը թող մտապահվի, որպեսզի [գոնե] սակավ չափով տեսնենք մասնավոր խնդրանքը, այսինքն՝ թե քահանային ինչպես է պետք եկողներին առաջնորդել խոստովանության, դեղ դնել նրանց վերքերին և կոչել ապաշխարության:

Եվ արդ, իմ աղքատ [կարողություն] համար խիստ ծանր է քո խնդրանքը, որովհետև այսպիսի բաներին արդարակորով վեճով լուծում տալը վիճակված է նրանց, ովքեր խոսքով կատարյալ են և Հոգով՝ լեցուն: Որովհետև այս մասին եղած խնդիրը մշուշապատ, թանձրամած և խիստ անորոշ է, մանավանդ պետք ունի մեծ տքնության և աշխատության: Եվ ոչ թե աննշան ջանքով, [իրավունք] վերապահելով իրենց պատրաստ համարեն. ովքեր, ըստ իս դեռ ընթերցելու անհրաժեշտություն ունեն՝ հայտնապես հասած չլինելով [Սուրբ] Հոգու բարություն առաջնորդությանը, որը մասն իսկ չունի տարակուսանքի, չնայած նույն Ինքը անտեսանելիորեն լիովի կատարում է քահանայական կարգը: Սակայն սուրբ եկեղեցու աստվածային օրենքներն այսպիսի գործի իրավունքը ոչ բոլորին են վերապահում, այլ աստվածային գրքերին քաջատեղյակ և հասակով կատարյալ և ամեն տե-

սակ բարի գործերի մեջ վկայված [մարդկանց], ովքեր Քրիստոսին մկրտած մեծն Հովհաննեսի նման օժտված լինելով ամենայն բարոլթյամբ՝ ցանկալի և պատկառելի են, որովհետև թերևս այսպիսիին է կարելի եկողներին առաջնորդել դեպ խոստովանություն, ու մեր անձերը պահել հաստատուն և առանց վնասի:


Արդ, նախևառաջ նրան, որ խոստովանահայր լինելու նպատակ ունի, անհրաժեշտ է իմանալ խոստովանության շահն ու օգուտը, և Սուրբ Հոգու վարդապետությամբ հավատացյալներին հորդորել խոստովանության փութալ՝ բոլորի առաջ դնելով այն, թե խոստովանությունը որքան և ինչպիսի մեծամեծ բարիքների առիթ է, և որքան մեծամեծ չարությունների ու անտանելի պատիժների պատճառ է դրան հակառակը: Ուստի և դրանից հետո անհրաժեշտապես հարկ է ստույգ և ճշմարիտ խոստովանության եղանակին ծանոթացնել, որպեսզի չլինի թե խոստովանության փոխարեն խաբեություն ստացվի, քանզի խոստովանությունը բացատրվում է իբրև ծածուկ գործերի հայտնություն: Այս պատճառով խոստովանության անհրաժեշտությունը ոչ թե այժմ՝ ժամանակների վախճանին է սահմանվել, այլ՝ ժամանակների սկզբում համարյա առաջին մարդուց՝ Ադամից, որից Աստված պահանջեց մարդկային ցեղի գաղտնի և պարսավելի գործերի խոստովանությունը: Որովհետև նախ առաջին շահը, որ պտղաբերում է նրանից, սիրո ուխտն է և Աստծո հետ հավատարիմ մտերմության հավաստումն ու բարեկամության պատճառը, իսկ սատանայի նկատմամբ՝

անհաշտ թշնամության և սկիզբը նրանից հրաժարվելու, փախչելու և նրա չարակամության հանդեպ ատելության, նրա ծառայությունից ապստամբելու և Աստծուն դիմելու, բանսարկուռի ծածուկ որոգայթների մատնության հայտնության և խայտառակության: Որի հետևանքով խոցահարող նետերը սրտով ուղիղներին գցում են գաղտնի խավարի մեջ՝ նրանց հրապուրելով չար գործերով ու տեսակ-տեսակ մեղքերով, որոնք մահվան խայթոցներ են: Արդ, ստույգ խոստովանության շնորհիվ խաբեությունները դառնում են լիովին գործազուրկ: Որ այս այսպես է հայտնի է նրանից, որ ինչպես Աստված ամեն տեսակ բարիքի պատճառ է, այդպես էլ սատանան՝ ամեն տեսակ չարիքի: Եվ ինչպես «Աստված լույս է և նրա մեջ չկա ոչ մի խավար» (Ա Հովհ. Ա 5) այդպես ամեն տեսակ մտածումներ ու գործեր, որ աստվածային են ու բարի, լույս են և լույսի մեջ են համարձակությամբ, բացահայտ կատարվում: Եվ ահա պարզ է, որ այն, ինչ հայտնի է, լույս է: Սրա նման էլ, ինչպես սատանան սկզբնաչար և չարության ուսուցիչ է, նրա իղձերն ու գործերը գաղտնի և խավարային են, որովհետև խաբեություններ են և, չար լինելով, բարու կերպարանք ունեն: Այդ պատճառով չի մտաբերում բացահայտ համարձակությամբ գործել լույսի մեջ, որպեսզի նրա գաղտնի մեքենայությունները բացորոշ կերպով չխայտառակվեն, որովհետև «Ամեն ոք, ով չարություն է գործում, ատում է լույսը և չի գալիս լույսի մոտ, որպեսզի նրա գործերը իր երեսով չտան» (Հովհ. Գ 20): Եվ ահա հայտնի է, թե մեկը որքան հոժար է սատանայի

խորհուրդներին և նրանից խաբվելով նրա կամքն է կատարում՝ չարություն գործելով, թիկունք դարձնելով Աստծուն և սեր, միաբանություն ունենալով սատանայի հանդեպ: Եվ մարդ որքան թաքուն պահի իր մեղքերը և քահանային չխոստովանի՝ իբրև սատանայի բարեկամ խնայում է նրան և չի հայտնում նրա խորհուրդները: Այդ պատճառով էլ նման [մարդու] համար անկարելի է ատել մեղքը և չգործել [այն]: Եվ որքան նա չթողնի մեղքեր գործելը, այլ նրանցով աղտեղանա, նույնքան Աստծո բարկությունը կբարդվի նրա վրա և թողություն չի գտնի: Իսկ երբ սթափվելով կտեսնի իր՝ չարիքի մեջ լինելը և կխորհի, որ ամոթով է Աստծո առջև իմանալով, որ չար գործերով հոժարելով սատանային՝ տրտմեցնում է նրան, այնուհետև կսկսի փափագել Աստծուն և հնար փնտրել՝ գերծ մնալու սատանայից և մաքրվելու մեղքերի աղտեղությունից: Ապա հիշելով չար գործերը՝ կսկսի պատկերացնել և ամոթով տալ ահեղ ատյանի առաջիկա հարցաքննությունը, թե արդար Դատավորը ստուգապես հաշիվ է պահանջելու բոլոր չար գործերի համար, զարհուրելու է և, իրեն անօգնական տեսնելով հուսահատվելու, և վախից տագնապելով արտասուք է թափելու և ստուգապես համոզվելու, թե չի կարող ճողոպրել դժոխքի տանջանքներից, որ պատրաստված են անզեղ մեղավորների համար: Բայց եթե [կամենա] Աստծուն ապավինել և դարձյալ հաշտեցնել իր հետ, երբ դիմի Աստծուն, չի կարող հաշտվել նրա հետ կամ սիրելի լինել նրան, եթե նախ չհրաժարվի սատանայից և կարգալուծ չանի այն սերը, որ ուներ նրա նկատմամբ,

քանի դեռ մեղք էր գործում, և ատելությամբ լցվի նրա չար խրատների հանդեպ, որոնցով ինքն իրեն թշնամի էր դարձրել Աստծուն: Եվ նրանք այլ կերպ հայտնի և հավաստի չեն դառնում, եթե նախ, ինչ խորհրդակցություն, որ ուներ սատանայի հետ, խոստովանությամբ չի հայտնվում և ասվում Աստծուն քահանայի առջև, ու իբրև իր թշնամու և իրեն նենգողի չի ամբաստանում ամեն տեսակ նենգություններն ու չարության հանգամանքները, չի մեղադրում ամոթալի գործերը, որ խաբեց և գործել տվեց նրան [սատանան], որպեսզի հայտնի դառնա, թե սատանայի հանդեպ սիրո և ոչ մի տեղ չի թողել, այլ իբրև կատարյալ թշնամի անխնա չարախոսում է նրան և ոչինչ չի քողարկում՝ խնայելով նրան: Սա նման է մարդկանց հետևյալ սովորությանը, երբ մի թագավորի սիրելիներից ու խորհրդակիցներից մեկը բաժանվելով նրանից մի ուրիշ թագավորի մոտ է գնում սրանով ցույց է տալիս, թե հավատարիմ բարեկամն է նրա, ում մոտ գնաց: Եվ նա ստուգապես պատմում է իր առաջին տիրոջ, որից ապստամբեց, բոլոր խորհուրդներն ու գործերի հանգամանքները, և դրանով համարվում է [իր նոր տիրոջ] սիրելիներից և բարեկամներից: Այսպես էլ՝ ով խոստովանությամբ ապստամբում է սատանայից, որ ամբաստանություն է նրա հասցեին, հաստատում է իր՝ Աստծուն բարեկամ լինելը <...>:





ԺԱ

ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԱՍՎԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱՅԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ

Քրիստոսի արյամբ փրկված ի Քրիստոս իմ եղբայրներ, քրիստոնյային անհրաժեշտ է խոստովանությունը և ապաշխարությունը իր անձը լվանալ մեղքերից և հետո հաղորդվել Քրիստոսի մարմինն և արյանը, որպեսզի և ոչ մեկը անմաքուր անձով ի վնաս իր անձի չհաղորդվի: Այս պատճառով ի խրատ և ի զգուշություն լսողներիդ ցանկանում եմ հինգ բան խոսել ձեզ հետ եկեղեցում. առաջին՝ ցույց տալ, թե պատարագվող սուրբ հացն ու գինին Քրիստոսի մարմինն ու արյունն է, երկրորդ՝ այս, թե ինչո՞ւ է մարմինը, այսինքն՝ հացն ու բաժակը Քրիստոսի միս և արյուն կոչվում, երրորդ՝ այս, թե ինչո՞ւ է Քրիստոս իր սուրբ մարմինն ու արյունը տալիս ճաշակելու համար, չորրորդ՝ այս է ցույց տալիս, թե հարկ է նաև խոստովանությունը և ապաշխարությունը սրբվել և հետո Աստուծո Սեղանին հաղորդվել, հինգերորդ՝ ցույց տալ ճշմարտապես խոստովանելու և սրբությունը հաղորդվելու շահը և [մյուս կողմից]՝ թաքցնելու և առանց սրբության հաղորդվելու վնասը:

Արդ, դուք ուշադրություն լսեք, որովհետև համառոտ եմ

խոսելու: Հավաստիորեն հավատում և քարոզում ենք, որ քահանայի ձեռքով աստվածային սեղանի վրա մատուցվող հացն ու բաժակը, ճշմարտապես դառնում են Քրիստոսի մարմինն ու արյունը: Եվ այս հայտնի է, որովհետև նույն ինքը սուրբ հացն ու սուրբ բաժակը Քրիստոսի մարմինն ու արյունն են: Նա ինքը ստուգապես Աստված է, որովհետև ինչպես Սուրբ Հոգին նախապես մտավ սուրբ կույս Մարիամի մեջ և մաքրեց նրան և հետո Բանն Աստված իջնելով Կույսի մեջ նրանից մարմին առավ և Իրեն միավորելով աստվածացրեց: Ծիշտ այսպես էլ Սուրբ Հոգին իջնելով հացի և գինու մեջ սրբում է [այն] և նույն ամենարվեստ Բանն Աստված, միանալով սրան, աստվածացնում է այն: Եվ թող ոչ ոք այս սուրբ հացը և գինին թերահավատությամբ լով հաց և գինի չհամարի, որովհետև Հոգին սրա մեջ իջնում է աներևութաբար և Բանն Աստված միանում [սրան աներևութաբար], ինչը չի կարող տեսնել մարմնավոր աչքը: Եվ քեզ վկա է այն, որ չենք տեսնում մարդու Հոգին, նմանապես և ոչ ոք չի կարող ասել, թե մարդը միայն մարմին է, որովհետև նաև Հոգի է, թեպետ արտաքուստ չի երևում: Արդ, պարզ է, որ մեզ համար անտեսանելի կերպով Աստված միավորվում է սուրբ հացին և բաժակին:

Ինչո՞ւ է Քրիստոսի միսն ու արյունը սուրբ հաց և գինի կոչվում. ինչպես առաջին բանի մասին, թողնելով նրա բազում իմաստները, համառոտ խոսեցինք, այդպես էլ երկրորդ բանի մասին կարճառոտ կերպով այս կասենք, որ թող օտար չլի վա հացը մարմին և գինին արյուն անվանել, որովհետև Սուրբ Գրոց սովորությունն է բազում տեղերում այս բանն

այսպես անվանել. ինչպես առաքյալը հացի վերաբերյալ ասում է, թե շատերս մի հաց և մի մարմին ենք, որ կոչվում ենք Քրիստոսի մարմին և անդամներ (Ա Կորնթ. Ժ 17), ինչպես ցորենի հատիկները մանրվելով և միանալով դառնում են մի հաց, մենք ևս շատ լինելով դառնում ենք մի միավորվելով Քրիստոսին: Եվ Երեմիան ասում է, թե «Ինձ համար ասացին, եկեք, փայտ զցենք նրա հացի մեջ» (Երեմիա ԺԱ 19), այսինքն՝ մարմնի մեջ և սպանենք նրան: Այս սովորույթը պահպանելով Քրիստոս Իր մարմնի համար ասաց, թե հաց է և արյունը՝ գինի, որովհետև հաճախ Սուրբ Գիրքը ասում է, թե «Նրա արյունը պետք է խմեն իբրև գինի» (Հմմտ. Եսայի ԼԴ 7) նաև «Խաղողի արյամբ պետք է լվանա իր հանդերձները» (Մննդ. ԽԹ 11): Այս մասին համառոտիվ այսքանը բավական է:

Ի՞նչ շահ կամ ինչ անհրաժեշտ օգուտ է տալիս Քրիստոս Իր սուրբ մարմինն ու արյունը ճաշակողներին. նախ այս ճաշակման միջոցով ցույց է տալիս Իր անսահման սերը մեր հանդեպ, և ապա կամենում է սրանով մեզ մեծ շահ բերել, որովհետև ճաշակել տալով՝ կամենում է մեզ աստվածացնել՝ միացնելով Իրեն, մեզ հաղորդելով Իր մարմնին և մեզ զորացնել Իր նմանությունում ու սիրով, որովհետև ինչպես երեխան իր մոր կաթն ուտելով գոյավորվում, կերակրվում, սնվում և աճում է, և այս պատճառով չափազանց սիրում իր ծնողին, քանզի կաթը հենց արյունն է՝ ճերմակի փոխարկված, այսպես էլ Քրիստոս Իր մարմնով և արյամբ մեզ կերակրելով կամենում է, որ մենք աստվածաման լինենք ու նրանով սնվելով, աճելով՝ աստվածանանք, և սիրենք նրան իբրև ծնող ու նրա

նման Աստված դառնանք, ինչպես մանուկն է իր մորից մարդ դառնում: Արդ, ինչո՞ւ է մեր աստվածանալն այդքա՞ն պատշաճ. որովհետև «Աստված սուրբ է, սիրում է սուրբերին և հանգչում սուրբերի մեջ»: Ճիշտ այդպես՝ ով սրբվում է աստվածանում է՝ սիրելով սրբությունն ու բարին, որ սիրում է Աստված և ատելով պղծությունը, որ ատում է Աստված: Եվ հաղորդվել ցանկացողը հարկ է, որ մեծ զգուշությամբ հաղորդվի՝ խոստովանությունում, և, իր կարողության չափով ապաշխարությունում սրբի իր անձը և հետո հաղորդության համար մոտենա Աստծո Սեղանին, որովհետև անսուրբ անձով սրբերին մերձենալը վնաս է, ինչպես աչքերի ցավելը՝ ուղիղ արեգակին նայելիս. որովհետև ինչպես առաջին անսրբությունը նախ մաքրվում է ավազանով՝ սրբվելով վերստին ծննդյամբ, ապա կերակրում սուրբ հացով և կենդանարար արյամբ, որից հետո, քանի որ չկա երկրորդ ավազան, պետք է մաքրվել խոստովանությունում ու ապաշխարությունում և ապա աստվածային Սեղանին մոտենալ: Ինչպես եթե մեկը թագավորական սեղաններին մոտենա աղտեղի ու գարշահոտ շորերով, ցեխոտ և զազրելի ձեռքերով՝ փոխանակ վայելելու՝ դանահարվելով կարտաքսվի, այդպես էլ այստեղ: Այս ասում եմ, ոչ թե զարհուրեցնող խոսքերով լսողներից հուսահատության մեջ գցելու, այլ որպեսզի Աստծո երկյուղից սարսափած, արժանավայել ջանքով նախամաքրված, կարող լինենք վստահաբար առաջ ընթանալ՝ ոչ թե [հաղորդության համար] օր ընտրելով Զատիկը կամ Հայտնությունը, այլ՝ անձի արժանավորությունը: Որովհետև երբ մեկը պատրաստվում և զգուշա-

նում է, այն է Զատիկը և այնժամ կարող է հաղորդվել: Եվ հարկ է նախ խոստովանությամբ և ապաշխարությամբ մաքրվել և հետո մոտենալ սուրբ հաղորդությանը: Սուրբ Պողոս առաքյալը խրատում է. «Թող մարդ նախ ինքն իրեն փորձի և ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից, որովհետև ով ուտում և խմում է անարժանորեն պարտական պիտի լինի Քրիստոսի արյանը» (Ա Կորնթ. ԺԱ 27-28): Եվ բազում ցավեր, պատիժներ, հիվանդություններ ու մահեր մարդկանց պատուհասում են անարժան հաղորդության հետևանքով:

Արդ, անձը փորձելը խոստովանությամբ և ապաշխարությամբ մաքրվելն է և անձի՝ ապաշխարության մեջ գտնվելն ու զգուշանալը, ձգձգելը, տեսնելը և ինքն իրեն փորձելը, թե՛ հաստատուն է դարձի ու զղջման մեջ, և հետո հաղորդության մոտենալն է, որպեսզի չլինի թե առանց տևական փորձառության, քանզի դեռ կամքն ու խորհուրդները սրբված չեն մեղավոր ցանկություններից, հապճեպ հաղորդվելով կրկնակի վնաս կրի՝ [ի մտի ունենալով] նախ այն, որ Աստված [«կիզող հուր է»] ում հաղորդվում՝ (Բ օրենք Դ 24, Եբր. ԺԲ 29) մեղքի ժանգով [ծածկված] աղտեղությունները դառն այրումով ոչնչացնում է կամ մի որևէ պատուհասով կամ խղճի խայթով այրում, որը հանդերձյալ հրի կանխաճաշակումն է: Եվ երկրորդ, հաղորդությանը հապճեպ մոտենալով՝ դեռ մեղքի արմատը, այսինքն՝ դրա հանդեպ սերն իր մեջ ունենալով՝ Քրիստոսի հետ հաղորդվելուց հետո, քիչ ժամանակ անց «դարձյալ իր փսխածին» (Բ Պետ. Բ 22) և առաջին մեղքին է վերադառնում՝ [լինելով] առավել ատելի,

և իր անձի վրա մեծամեծ պատուհաս կուտակում:

Արդ, ապաշխարության հիմքը խոստովանելն է: Խոստովանության շահն այս է. ստուգապես և ճշմարտորեն, առանց քողարկելու խոստովանել, այլև ավելիով պախարակել [սեփական] անձը. նախ մեղքերը խոստովանելով՝ դրանք փսխել ինչպես մաղձը և թարախը, ու թեթևանալով հանգստանալ խղճմտանքի ցավերից, և երկրորդ, խոստովանությամբ ցույց է տալիս, թե ստույգ երես է թեքել սատանայից, որովհետև անինաս չարախոսում է իր մեղքերը, և սրանով երևում է, թե ճշմարիտ խոստովանողը ճշմարտությամբ է դիմում Աստծուն: Իսկ [մեղքերը] թաքցնողը ցույց է տալիս, թե համակամությամբ չի դիմել Աստծուն, այլ տակավին սեր ու համակամություն ունի մեղքի և սատանայի նկատմամբ, որովհետև դեռ կա նրանց մեջ, հանդուրժում է նրանց: Այս պատճառով սատանայական խորհուրդները չհայտնելը նման է Հուդայի [արածին], որ համախորհուրդ է Քրիստոսի թշնամիներին. թեկուզ Հուդայի նման հաղորդվի, [միևնույն է]. ինչպես Հուդային, նրան էլ պատուհասելու է խեղդամահ լինելը:

Արդ, այսուհետև անպարտ եմ, որովհետև խոսքովս փոքրիչատե զգուշացրի. եթե մեկը հոժար մտքով խոստովանությունը թաքցնի և հանդգնի մոտենալ սրբազան խորհրդին՝ ինքն է տալու պատասխան ահեղ դատաստանին: Իսկ ճշմարտությամբ խոստովանողներն ու ըստ կարողության ապաշխարողները վստահությամբ ու երկյուղով թող հաղորդվեն կենարար խորհրդին իրենց փրկության համար և ի փառս Աստծո, Որին փա՛ռք հավիտյան:



ԺԲ

ՆՎԱՍՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐՁՆԿԱՑՈՒ ԽՐԱՏԸ ԲՈԼՈՐ ՔՐԻՍՏՈՆՅԱՆՅԱՆԵՐԻՆ (ՅԱՏԿԱԾՍԵՐ)

Քրիստոնյաները չպետք է ընկնեն շնության ախտի մեջ և շներ ու պոռնիկներ կոչվեն: Արդ, ի՞նչ է շնությունը կամ որտեղի՞ց սկսվեց, քանի՞ տեսակի է բաժանվում և ի՞նչ է շնացողի պատուհասը: Շնությունն այն է, երբ պատանու-թյունից սկսած մինչև պսակի ժամը չի մնացել անարատ կուսությամբ և սրբությամբ, շուն է կոչվում, կորցնում օրհնության պսակը, և քահանայական աղոթքի օրհնությունը չի հանգչում նրա վրա: Նույնպես և օրհնության պսակից հետո եթե տղամարդը կամ կինը օտար մեղքի մեջ շաղախվեցին և անարգեցին օրհնության պսակը, շուն են կոչվում և պոռնիկ անվանվում: Պոռնկությունը երեք տեսակ է. նա, ով խառնակվում է այրի կնոջ կամ իր տան աղախինին կամ էլ բող կանանց հետ: Նա է պոռնիկ կոչվում, ով տարբեր տեղերում խառնակվում է կամ կանանց կամ էլ տղամարդկանց հետ: Եվ շուն է նա, ով մեղանշում է այլ մարդու կնոջ հետ կամ եթե կին է այլ կնոջ տղամարդու հետ կամ էլ պսակի օրհնությունից առաջ անարատ չեն պահում կուսությունը կամ էլ եթե մեկը կուսություն է խոստացել, բայց իրեն չի պահել սրբությամբ:

Արդ, սրանք պոռնիկներ և շներ են կոչվում: Բայց որտեղի՞ց սկսվեց այս մեղքն ու չարիքը. Սեթի որդիներից և Կայենի դուստրերից սկսվեց: Որովհետև Սեթն ու Կայենը Ադամի որդիներն էին: Աստված անիծեց Կայենին իր չարության պատճառով և օրհնեց Սեթին և Աստված ուխտ դրեց Սեթի, և նրա ծնունդների միջև՝ խնամությամբ չխառնվել Կայենի ազգի հետ: Իսկ շատ ժամանակներ անց, սատանայի չար հնարքներով Կայենի թոռները՝ տղամարդիկ գտան գուսանության արվեստը, և կանայք՝ շպարն ու ծարույրը և պճնողական այլ հնարքները, ու խաբեցին Սեթի սուրբ հետնորդներին, և միմյանց հետ խառնվեցին խնամությամբ: Եվ այնպես հաճախակի դարձավ ու բազմացավ շնությունն ու պոռնկությունը երկրի վրա: Այս պատճառով Աստված բարկացավ ու ջրհեղեղ արեց, ջնջեց, կորստյան մատնեց բովանդակ երկիրը, մարդուն և անասունին, բացի Նոյից և իր որդիներից, որ մնացին սրբության պատճառով, որովհետև Նոյը հարյուր տարի կույս մնաց և հետո ամուսնացավ և որդիներ ունեցավ, որի հետևանքով դարձյալ սկզբնավորվեց մարդկությունը, և փրկվեց իր որդիների հետ միասին:

Արդ, ովքեր շաղախված են այնպիսի մեղքի մեջ շուն և պոռնիկ են կոչվում: Այն պատճառով են շուն կոչվում, որովհետև շների գործն այնպիսիներին է, որ իրենց [հավատարիմ] զուգընկեր չունեն, այլ ուր հանդիպում՝ խառնվում են:

Եվ պոռնիկ են կոչվում, որովհետև սրբությամբ օրինավոր ամուսնություն չունեն, այլ անօրեն խառնակությամբ են կենցաղավարում:

Արդ, այսպիսի մեղքերի պատճառով են երկրի վրա գալիս բազում պատուհասներ՝ սով ու սրածովթյուն, գերություն և սպանություն, երկրաշարժ ու հրձգություն և այլ անթիվ պատուհասներ: Ու եթե այսպիսի չարություններից դարձի չգան՝ այնպիսիները դառնում են աշխարհի կործանման, ավերման պատճառ ու արյան տեր: Եվ սուրբերի կանոններն ու հրամանները այսպիսիների ապաշխարության համար՝ օտար մեղքի հետ խառնակման պարագային՝ 15 տարի պահք և ապաշխարություն [են սահմանում]⁴: Այսպիսիներին եկեղեցի չեն թողնում և հաղորդություն չեն տալիս: Եվ քահանան, որ հաղորդություն է տալիս այնպիսիներին, մատնիչ է ու պարտական Տիրոջ մարմնին և արյանը, և սրբությունը շներին է տալիս, որի պատճառով էլ պարտական է Աստծո դատաստանին: Եվ հիրավի, շնացողները զրկվելու են հաղորդությունից, իսկ այն կյանքում՝ արքայությունից: Ինչպես և գրում է Պողոս [առաքյալը]. «Շնացողները չեն ժառանգում Աստծո արքայությունը» (Հմմտ. Ա Կորնթ. 2 9): Միայն սուրբերը չեն, որ գրել, խրատել ու քարոզել են՝ հեռանալ այսպիսի մեղքերից, այլև Ինքը՝ անտեսանելի Աստված, որ երևաց Մովսեսին և նրա հետ խոսեց անմարմին շուրթերով և լուսափայլ հրեղեն մատներով երկու քարեղեն տախտակների վրա գրեց օրենքի տասն խոսքերը: Եվ հինգ խոսքերը, որ մեկ տախտակի վրա էին, սրանք էին, որ խոսեց ու գրեց. «Մի՛ սպանիր, մի՛ շնացիր, մի՛ գողացիր, սուտ մի՛ երդվիր, մի՛ ցանկացիր»:

Թե որքան մեծ մեղք է շնությունը, գրեցինք:

ԱՅԺՄ ԳՐԵՆՔ ԳՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որովհետև գողը հակառակ է Աստծուն, սուրբերին՝ անհնազանդ, թշնամի՝ բոլոր մարդկանց: Աստծուն հակառակ է նրանով, որ Աստված Ադամին ասաց. «Քո երեսի քրտինքով ուտես քո հացը» (Ծնունդ Գ 19): Արդ, ով այլոց քրտինքն ու աշխատանքի պտուղը գողանում է՝ հակառակ է Աստծո հրամանին և սուրբերին՝ անհնազանդ: Որովհետև Դավիթ մարգարեն ասում է. «Քո ձեռքի վաստակն ես ուտելու, երանի է քեզ և բարի կլինի քեզ» (Սղմ. ձիէ 2): Եվ Պողոս առաքյալը գրում է. «Ով գողանում էր, թող այլևս չգողանա, այլ թող իր ձեռքերով վաստակի և տա ում որ անհրաժեշտ է» (Եփես. Դ 28): Եվ գողը բոլոր մարդկանց թշնամի է, որովհետև նրա կամքն այն է, որ եթե հնար լիներ բոլոր մարդկանցից գողանար, բայց սա այն պատճառով է խափանվում, որովհետև չի կարողանում:

Գողությունը երեք տեսակ է. այն, որ բռնավորներ են, նստում են լեռների և ճանապարհների վրա, սպանում, կողոպտում և հափշտակում են կատաղած գազանների պես, նաև նրանք, որ տկար են, մկան պես պատն են փորում և գաղտնորեն շորթում և գողանում են: Կան, որ առանց խորշելու ընկերների այգիներից, ծառերից, արտերից և անդաստաններից են գողանում: Կան, որ վաճառքի գնի և ծախելու մեջ են խաբում և ավելին առնում ու պակաս տալիս, ինչը չափազանց դառն ու աններելի է:

Արդ, ամեն տեսակ գողություն չար է և Քրիստոսին հա-

կառակ, որ սովորեցրեց քրիստոնյաներին. «Եթե մեկը հանի քո շորերը, նրան տուր նաև մյուսը»: Ապա դատաստանի օրը ի՞նչ պատասխան պետք է տան նրանք, ովքեր նաև ուրիշներին են գողանում:

Արդ, իմացիր, եթե գողը, զրկողը և հափշտակողը մի սպիտակ ոչխար իսկ մատաղ անի՝ թողուլթյուն չունի, այլ այն ժամանակ է թողուլթյուն լինում, որ տիրոջը վերադարձնի [գողացածը] և ինքը դարձի դա մեղքերից ու ապաշխարի: Եվ եթե չզղջա այնպիսի բաներից՝ կզրկվի արքայությունից և դժոխքի կմատնվի, ու դատաստանի օրը, եթե իր գողացածը [նյութական] բարիք է՝ կվերցնեն և տան տիրոջը կհանձնեն, իսկ նա սատանայի հետ անողորմաբար կտանջվի: Նաև այն է գողությունը, երբ մեկը գտնում է կորած իրը և լսելով տիրոջ ձայնը չի ասում և չի տալիս տիրոջը, նա նույն պատիժն է կրում:

ԵՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

...Քրիստոնյաներին հարկավոր չէ սուտ կամ իրավ երգվել: Թեպետ Աստված Մովսեսի օրենքով այն ժամանակվա տխմար ու տգետ մարդկանց սովորեցրեց, թե՛ «Քո Տեր Աստծո անունը սնոտի բաների համար մի՛ արտասանիր» (Ելք Ի 7, Օրենք է 11), այսինքն՝ քո Տիրոջ, որ քո թագավորը, դատավորը և քննողն է, նաև քո Արարչի անունը սուտ կուռքերի համար մի՛ արտասանիր և սուտ մի՛ երգվիր, այլ [միայն] ճշմարտապես քո Տեր Աստծո վրա պետք է երգվես: Եվ սա

[միայն] այն պատճառով ասաց, որպեսզի նրանց խակ և հիմար միտքը հեռացներ կուռքերից, որպեսզի ճշմարիտ Աստծուն ճանաչեին:

Մինչդեռ մեր հույսը՝ Քրիստոս առհասարակ վերացրեց երգումը և ասաց. «Մի՛ երգվիր երկնքի վրա, որովհետև Աստծո ամբողջ է, ոչ էլ երկրի վրա, որովհետև նրա ոտքի պատվանդանն է ոչ էլ Երուսաղեմի վրա, որովհետև մեծ Արքայի քաղաքն է, ոչ էլ քո գլխով, որովհետև չես կարող մի մազ իսկ սպիտակ կամ սև դարձնել» (Մատթեոս. Ե 34-36): Բայց այժմ տեսնում ենք, որ աշխարհը լցված է երգումով, և ամեն տեսակ չնչին բաների համար Աստծո անունը ու սոսկալի անունն են արտասանում:

Երգումը երեք տեսակ է. կա, որ վկայական է կոչվում, երբ ասում են. «Աստված վկա», և այս շատ սոսկալի է: Կա, որ երկնքի և երկրի Արարչի անունը ունայն բաների համար է վկայակոչվում, և եթե նա թագավորի կամ իշխանի անունը հիշեր՝ մահապարտ կլիներ: Երկրորդը ուրացական երգումն է, երբ ասում են. «Աստծուն ուրանամ, թե այսպես չէ», ինչը եթե նույնիսկ ճշմարիտ բաների համար ասվեր՝ մեծ անօրինություն կլիներ, որովհետև իր բերանով ուրանում է Աստծուն: Որովհետև մեր Տեր Հիսուս Քրիստոս ասում է. «Ով մարդկանց առաջ ուրանա ինձ, ես էլ նրան կուրանամ Իմ Հոր առջև, որ երկնքում է» (Մատթեոս. Ժ 33): Այս մասին սուրբ Բարսեղն իր կանոններում ասում է. «Եթե մեկը ուրանալով է երգվում, տասնհինգ տարի ունկնդիրների մեջ պետք է մնա, մեկ տարի [եկեղեցու] դռան մոտ և հետո [միայն]

հաղորդվի» [Տիրոջ մարմնին և արյանը]⁵:

Եվ երրորդը խոստովանողական երգումն է, երբ ասում են. «Աստծո փառքով [եմ երգվում], որ այսպես է» կամ ասում են «Այս խաչի և Ավետարանի փառքով եմ երգվում»:

Արդ, երբ քրիստոնյային անհրաժեշտ է և երգումը եկեղեցում է լինում ու քահանայի միջնորդությունով և խոսքն էլ ճիշտ է և հոգու, արյան փրկության համար օգտաշահ այնժամ թույլ են տալիս այս վկայական երգումը, բայց սա լինում է ոչ առանց ապաշխարության:

Սակայն նրանք, որ փողոցներում և հրապարակներում սովորաբար ստույգամբ և ճշմարտությամբ են Աստծո զարհուրելի անունը վայրիվերո ձևով հիշում, եթե այդպիսիները չդառնան իրենց չար սովորությունից, մեծ, սաստիկ և դառն պատուհաս են կրելու Աստծո արդար դատաստանին:

ՍՈՒՏ ՎԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պրենք նրանց մասին, ովքեր անաստվածաբար սուտ վկայություն են տալիս, որի մասին Աստված խոսեց Մովսեսին և գրեց Օրենքում, թե՛ «Մի՛ սուտ վկայիր» (Ելք, Ի 13), ինչը մեծ անօրինություն է:

Նախ սա՛ ճշմարտությունը ահեղ ու սոսկալի բան է, քանզի Աստծո անունն է, բոլոր իրերի զարդն ու աշխարհի շինությունն է: Մինչդեռ սուտ վկան ավերիչ ու կործանիչ է ճշմարտության, որ չի տեսել և որին չգիտե, բայց վկայում է:

Երկրորդ՝ որովհետև ուրիշների մեղքերի ընկերն է դառ-

նում և նրանց հաստատում մեղքերի ու չարությունների մեջ, որ գործեցին և ինքը դառնում է սատանայի բնակարան: Ինչպես Տերն ասաց. «Ով սուտ է խոսում ինքն իրենից է խոսում» (Հովհ. Ը 44): Եվ «իրենից»-ն այն է, ինչպես Աստված կասեր. «Սուտը իմը չէ, այլ սատանայինն է, և սատանան՝ նրա հայրը, որ ծնեց ստին, և բոլոր սուտ վկաները սատանայի գործընկերն են»: Նույնպես բոլոր ստախոսները, եթե դարձի չգան և չապաշխարեն, սատանայի հետ տանջանքի և կորստյան են մատնվելու, ըստ այն խոսքի, թե՛ «Տերը կործանում է բոլոր ստախոսներին» (Սղմ. Ե 7), որովհետև ճշմարտախոս բերանը Սուրբ Հոգու դուռն է, իսկ ստախոս բերանը դժոխքի դուռն ու դեերի մուտքը: Այդ պատճառով ձեր բերանը սովորեցրեք ճշմարտությանը, որպեսզի ձեր մեջ բնակվի Սուրբ Հոգին:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պրենք կանոնական խոսք այն մասին, թե վայել չէ, որ քրիստոնյաները ատեն մեկմեկու: Որովհետև ինչ որ Աստված Օրենքով ասաց Մովսեսին, թե՛ «Մի՛ սպանիր» (Ելք Ի 12), Հովհաննես Ավետարանչին ասում է. «Ով ատում է իր եղբորը՝ մարդասպան է» (Ա Հովհ. Գ 15), որովհետև սպանության սկիզբը ատելությունն է, քանզի առաջ ատում է, իսկ հետո մտածում սպանել:

Արդ, ցույց տանք, թե որտեղի՞ց սկսվեց մարդասպանությունը, քանի՞ տեսակ է սպանությունը և ի՞նչ է մար-

դասպանների պատիժը:

Մարդասպանությունը սկսվեց Կայենից, որ սպանեց իր եղբայր Աբելին: Եվ ինչո՞ւ սպանեց [քանզի] իր գործերը չար էին, իսկ Աբելի գործերը՝ բարի, որի պատճառով Աբելը սիրված էր Աստուծոց և ծնողներից, որովհետև սրանք Ադամի որդիներն էին: Արդ, այն պատճառով ատեց եղբորը, որովհետև բոլոր մեղքերի սկիզբն ու պատճառը ատելությունն է, և ատելությունից ու նախանձից, որ ունեն, քեն և ոխ ծնվեց: Ոխակալությունից ծնվեց նենգությունը, խաբեությունն ու ստախոսությունը: Որովհետև խաբեց եղբորը, թե՛ դաշտ գնանք խաղալու և զբոսնելու, ու սպանեց եղբորը անխիղճ և անողորմ սրտով և գազանային կատաղած բարքով: Եվ քանի որ յոթ մեղք գործեց, Աստված յոթ մեծ պատուհաս և պատիժ դրեց նրա վրա: Եվ այս են Կայենի մեղքերը, առաջին՝ որովհետև Աստուծուն նվիրեց պտուղներից և արտերից ամենավատը, անպետքը և խորշակահարը, որին չհոժարեց Աստված, և երկրորդ մեղքն այն է, որ նախանձեց եղբորը և ատեց նրան, որովհետև նա գառներից ընտիրն ու գեղեցիկն էր Աստուծուն պատարագ մատուցում, երրորդ՝ եղբորը նենգությամբ խաբելը, չորրորդ՝ սպանելը, հինգերորդ՝ որովհետև առաջին մարդասպանը եղավ՝ չար օրինակ ցույց տալով աշխարհին, վեցերորդ՝ որովհետև իր եղբորը սպանեց, յոթերորդ, որովհետև երբ Աստված հարցրեց, թե՛ «Ո՞ւր է Աբելը՝ քո եղբայրը», նա ստեց և ասաց. «Չգիտեմ»: Եվ Աստված այն նպատակով հարցրեց, որպեսզի գղջար և «մեղա» ասեր, իսկ նա լրբությունով ասում է. «Մի՞թե իմ եղբոր պահապանն եմ»: Եվ

Աստված ասում է. «Պահապանը չես, բայց ինչո՞ւ սպանողը եղար»: Եվ Աստված յոթ պատիժ դրեց նրա վրա. առաջին, որ ասաց. «Անիծյալ եղիր», երկրորդ՝ «Երկրի վրա, որ եղբորդ արյունը հեղեցիր», երրորդ՝ «Պետք է հողը մշակես ծանր աշխատանքով», չորրորդ՝ «Եվ հողը քեզ չի տալու իր զորությունը, պտուղն ու բերքը, քանզի անմեղի արյամբ ներկեցիր այն, հինգերորդ՝ «Ծառի նման ես երևալու, որ անդադար շարժվում է քամուց», վեցերորդ՝ «Տատանվելու ես ծովի նման, որ ծփում է ալիքներից», յոթերորդ՝ նշան դրեց նրա վրա, որպեսզի ամեն ոք իմանա, թե եղբայրասպան և անիծյալ է (տե՛ս Ծննդ. Դ): Եվ բորոտի նշան դրվեց նրա վրա, ու մարմինը դողդոջունով էր շարժվում, [այնպես] որ չէր կարողանում կերակուրն ու ըմպելիքը բերանը տանել:

Արդ, այն պատճառով գրեցի Կայենի՝ առաջին մարդասպանի և եղբայրատյացի գործերն ու պատուհասը, որ իմանաք թե յուրաքանչյուր ոք, ով ատում է իր եղբորը, այսինքն՝ իր ընկերոջը՝ Կայենի պես մարդասպան է, և բոլոր մարդիկ, համաձայն արարչության, եղբայրներ են առավել ևս քրիստոնյաներն են եղբայրներ, որովհետև նույն ավագանի ծնունդն են ու երկնավոր Հոր որդիները, և ամեն օր ասում են՝ «Հայր մեր, որ յերկինս...»:

Եվ արդ, իմացեք նաև այս, որ շատ են սպանություն տեսակները. կա, որ սրով և այլ գործիքներով են սպանում, կա, որ թուլյնով և այլ բազում հնարքներով: Կան, որ մահվան և սպանության են մատնում և պատճառ են դառնում սպանություն: Եվ այս բոլորի սկիզբը ատելությունն ու բարկու-

թյունն է: Այս պատճառով մեծն Հովհաննես Ավետարանիչը ասում է թե՛ «Ամեն ոք, ով ասում է իր եղբորը», այսինքն՝ ընկերոջը և հավատակից քրիստոնյային, Կայենի պես եղբայրասպան է, և նրա անեծքն ու պատուհասը նրա վրա է (Հմմտ. Ա Հովհ. Գ 15): Եվ Ավետարանում Քրիստոս հրամայում է. «Ով զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա՝ ենթակա է գեհենի կրակին» (Մատթեոս Ե 2):

Արդ, ողորմացեք և խնայեցեք ձեզ և մի՛ ատեք իրար: Մի՛ ապստամբեք, մի՛ նախանձեք, ոխ մի՛ պահեք, մի՛ մատնեք, մի՛ զրկեք, մի՛ չարախոսեք, մի՛ անարգեք, խռով մի՛ մնացեք, մի՛ ծեծեք, մի՛ եղեք անողորմ, չնչին, աննշան պատճառով վեճի, կռվի և հակառակույթյան մեջ մի՛ մնացեք, որովհետև ամեն տեսակ դատարկ, զուր և անիրավ բանի համար հաշիվ եք տալու դատաստանի օրը:

Արդ, այս կանոնական խրատը և պատվիրանը, որ գրեցինք աստվածային գրքերի հրամաններից, հրաժարական է, ինչը պետք է քրիստոնյային կատարել կամ գործել: Այժմ գրենք այն, ինչ անհրաժեշտ է կատարել քրիստոնյային, հարկը պարտավորեցնում է և Աստծո Օրենքը՝ հրամայում:

ՄԻՐՈ ՄԱՍԻՆ

Առաջին պատվիրանը սերն է [...], որ Մովսեսի հին Օրենքում և Նորի՝ Քրիստոսի Ավետարանում բոլոր պատվիրաններից մեծ և առաջինը համարվեց, որովհետև Օրենքի մեջ գրված է. «Քո Տեր Աստծուն պիտի սիրես քո ամբողջ

հոգով, քո ամբողջ զորությամբ և քո ամբողջ մտքով» (Բ Օրենք 2 5): Եվ քո ընկերոջը [սիրես] քո անձի նման որովհետև ինչպես քո անձին չար չես կամենա, նույնպես և քո ընկերոջը չես կամենա, և ինչպես քո անձին ես խնամք տանում և բարին կամենում, նույնպես քո ընկերոջն ես կամենում, որովհետև ընկերոջ [հանդեպ] սերը հավասար է Աստծո [հանդեպ] սիրուն: Ինչպես Հովհաննես Ավետարանիչն է ասում. «Եթե եղբորդ, որ տեսնում ես, չես սիրում, ապա Աստծուն, որին չես տեսնում, ինչպե՞ս կարող ես սիրել» (Ա Հովհ. Դ 20): Եվ ամեն ոք, որ ասում է, թե սիրում եմ Աստծուն, բայց ասում է ընկերոջը, սուտ է, որովհետև ով մարդասեր չէ՞ նա աստվածասեր էլ չէ: Եվ Քրիստոս ասում է, թե՛ «Եթե սիրեք մեկմեկու, այնժամ ցույց կտաք, թե իմ աշակերտներն եք և քրիստոնյաներ: Եվ ինչպես ես ձեզ սիրեցի, պարտավոր եք և դուք մեկմեկու սիրել» (Հմմտ. Հովհ. ԺԳ 34-35): Եվ Քրիստոս ինքը այնպես սիրեց մեզ, որ իր անձը մահվան մատնեց մեր համար: Նույնպես յուրաքանչյուր քրիստոնյայի հարկ է, որ իր անձը մահվան մատնի հանուն իր եղբոր, ընկերոջ և հավատակցի: Ապա ի՞նչ պատասխան պետք է տան նրանք, ովքեր սիրո փոխարեն ատում, չարախոսում, մատնում ու զրկում են:

Բազում են սիրո տեսակները, բայց մենք [գրանցից] սակավը հիշենք: Առաջինն ու մեծը՝ ծնողներին սիրելն է: Ինչպես գրված է Օրենքում. «Պատվիր քո հորն ու մորը» (Բ Օրենք Ե 16), որովհետև Աստծուց հետո ծնողներն են իրենց ծնունդների պատճառն ու միջոցը, և կարծեք իրենց զավակ-

ների մարմնավոր աստվածներն են, որովհետև ծնեցին, սնուցեցին ու նրանց կյանքի պատճառը եղան: Եվ ինչ բարիք էլ որ ծնողներին անեն, երախտիք չէ, այլ նրանց մեծ բարիքի հատուցումը, ու եթե մնացյալ ամենայն ինչ հատուցեն, ապա ինչպե՞ս կարող են հատուցել այն, որ ծնունդն է: Որովհետև ծնունդները չեն կարող նրանց (ծնողներին- Հ. Ք.) ծնել, և դրանով պարտք են լինում նրանց: Եվ Աստծո Օրենքում գրված է, թե՛ «Ով անարգի հորն ու մորը՝ մահվամբ պետք է մեռնի» (Բ Օրենք ԻԷ 16): Եվ ով ծնողին անարգի Աստծուն է անարգում, որի մասին նաև սուրբ Բարսեղն է գրում կանոնների հարյուրերկուերորդ գլխում. «Այն որդիները, ովքեր չեն պատվում իրեց ծնողներին, թող նզովյալ լինեն»⁶:

Ոչ միայն Գիրքն ու օրենքներն են խրատում սիրել ծնողներին, այլև՝ անասուններն ու թռչունները, որոնք ի բնե օժտված են իրենց ծնողների հանդեպ սիրով: Ասում են, թե երբ ծնողները ծերանում են արագիլների ձագերը մտնում են նրանց թևերի տակ, օգնում, պտտեցնում և կերակրում են: Եվ երբ չի կարողանում այլևս ոտքի վրա մնալ, նստեցնում են բնի մեջ, ուտելիք բերում, կերակրում, ինչպես որ նրանք իրենց ձագերին կերակրեցին:

Արդ, մեծ ամոթ է, երբ մարդիկ թռչուններից վատն են լինում և մոռանում ծնողների սնունդն ու բարիքը: Նույնպես հարկավոր է քահանաներին սիրել, որովհետև հոգևոր ծնողներ են, և մկրտությունը, պսակը, խոստովանությունը, հաղորդությունը, մահն ու կյանքը քահանաների ձեռքով է: Գիշերուզօր նրանք ձեզ համար սաղմոսերգություն, աղոթքի

մեջ են, միջնորդ ու բարեխոս են Աստծո և մարդկանց միջև: Այս պատճառով հարկ է սիրել նրանց և պտղից ու վաստակից բաժին հանել: Եվ եկեղեցու նվերը սիրով ու հոժարությամբ տալ, որի մասին նաև սուրբ Բարսեղը կանոնների հարյուրիններորդ գլխում գրում է. «Եթե աշխարհականը բամբասի կամ ապտակի քահանային՝ խաչ հանողների հետ դասվի, և եթե երկու կամ երեք վկաներով հաստատվի, ապա իրավասու է դարձել»⁷:

Անհրաժեշտ է սիրել և պատվել թագավորներին, իշխաններին, դատավորներին, ծերերին, գիտուններին, սուրբերին, իմաստուններին, առաքիլներին, աղքատներին, օտարականներին և բոլոր հավատացյալներին, որպեսզի Աստված էլ մեզ սիրի և գթությամբ, քաղցրությամբ մեզ նայի:

ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

Քրիստոնյային անհրաժեշտ է օրը երեք անգամ աղոթք անել. առավոտյան, երբ արթնանում է քնից, ճաշին և երեկոյան՝ քնի ժամին: Տղամարդը և պատանին յուրաքանչյուր աղոթքի ժամին տասներկու անգամ պետք է ծունկի գա, որ օրվա մեջ անում է երեսունվեց ծունկ, իսկ կանայք և աղջիկները ամեն աղոթքի ժամին՝ քսան ծունկ, որ օրվա մեջ անում է վաթսուն ծունկ: Երբ մարդ արթնանում է քնից, պարտավոր է աղոթել, գոհանալ Աստծուց, որ խավարից լույսի հանեց: Եվ ճաշի ժամին պարտ է գոհանալ Աստծուց, որ կերակուր է տվել, ու հարկավոր չէ անասունի պես տգիտություն


վայելել Աստծո բարիքը: Եվ երեկոյան [նմանապես] հարկավոր է աղոթել, որպեսզի Աստված անփորձ պահի խավար և մոլթ գիշերը, և գոհանալ, որ օրը խաղաղությամբ ավարտվեց: Եվ մի՛ թողեք, որ ձեր երեխաները առանց աղոթքի հաց ուտեն կամ առանց աղոթքի քնեն: Եվ այս երեք աղոթքները անխափան կերպով կատարեք ամենուրեք. ճանապարհին, արտում, այգում, ամեն գործ կատարելիս: Քանզի սուրբ Փրկիչս առաքյալը կանոն է սահմանել. «Եթե բոլոր տղամարդիկ կամ կանայք կամ երեխաները պարապ մնալով խափանում են առավոտյան և երեկոյան աղոթքները՝ չգնալով եկեղեցի և ունկնդիր չլինելով սահմանված կարգերին՝ նզովյալ լինեն»⁸:

Շաբաթ և կիրակի օրերը հավասարապես եկեղեցի և ժամ գնացեք, որովհետև շաբաթ օրը տոն է սուրբ նահատակների, ովքեր հանուն Աստծո սիրո իրենց անձերը մահվան մատնեցին և անտանելի չարչարանքով նահատակվեցին, և դուք ժամ գնալով ու լսելով նրանց չարչարանքները՝ մասնակից եք լինում սրբերի [սխրանքին]: Եվ կիրակին Քրիստոսի հարուստյան տոնն է, և մեր բոլորի հարուստունը կիրակի օրն է լինելու, երբ Ադամից սկսած բոլոր մեռյալները հարուստուն են առնելու: Եվ Աստծո դատաստանը կիրակի օրն է լինելու, երբ արդարներն ու մեղավորներն ըստ իրենց գործերի հատուցում են ստանալու Աստծո արդար դատաստանին: Սուրբ առաքյալների և հայրապետների կողմից սահմանված է, որ կիրակին մարմնական բաներից զերծ մնան, եկեղեցու դուռը գնան, Ավետարանի ձայնը լսեն, պատարագը տեսնեն, շա-

բաթվա հանցանքները խոստովանեն, որովհետև սուրբ հայրապետները անեծք և նզովք են դրել նրա վրա, ով կիրակի օրը չի լսում Ավետարանի ձայնը: Սուրբ առաքյալներն ու յուզաբեր կանայք Տիրոջը կիրակի օրը տեսան: Եվ բոլոր արդարները կիրակի օրը պետք է տեսնեն Քրիստոսին:

Արդ, ով սովորի և կիրակի օրը եկեղեցի գնա և պատարագը տեսնի և Ավետարանի ձայնը լսի և խոստովանությամբ սրբվի մեղքերից, նա արժանի կլինի Քրիստոսի տեսությանն ու երանավետ ձայնին, որ ասում է. «Եկեք, Իմ Հոր օրհնվածներ, ժառանգեցեք արքայությունը»: Եվ ինչպես կիրակին հարության օր է, նույնպես յուրաքանչյուր ոք, ով իր հոգին մեղքով է մեռցնում շաբաթվա վեց օրը, ամեն կիրակի խոստովանում է իր մեղքերը, հարություն է առնում մեռելներից և նորոգվում ապաշխարությամբ: Եվ քանի որ կիրակին կոչվում է Տերունի օր, որ Աստծո բաժինն է ու մեր հոգու փրկության օր, հրաման չկա, որ այլևայլ մարմնական գործեր ու բաներ կատարվեն, և անեծքի ու դատապարտության մեջ ընկնեն: Ոմանք կան, որ կիրակին մարմնական գործերով են զբաղվում, և հարեցողությամբ ու ծաղրով մեղք են գործում, ինչը՝ աշխատելուց շատ ավելի մեծ չարիք է և աններելի մեղք:





ԺԳ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐՁՆԿԱՑՈՒՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԵԿԵՂՅԱՑ ԳԱՎԱՌԻ ԻՇԽԱՆՆԵՐԻՆ

(ՐԱՏՎԱԾ)

Մտոված մարդուն արարեց հոգով և մարմնով, ու գարդարեց իր պատկերի նմանությունը, և միտքը դարձրեց հոգու աչքը, և աչքը՝ մարմնի ճրագ: Մարմնի աչքով [աղամորդին] տեսնում է տեսանելի երկրիս գեղեցկությունը, իսկ հոգու աչքով՝ Աստծո հրամանները, որոնք լույս են և լուսավորում են հոգին:

Երկրիս վրա մարդու վայելած բարությունները հինգն են. կամ հաճելի գույնը, որ տեսնում է աչքը, կամ անուշ ճայնը, որ լսում է ականջը, կամ անուշ հոտը, որ քթով է իմացվում, կամ քաղցր համը, որ [մարդ] բերանով է ճաշակում, և ձեռքով էլ իմանում է պինդն ու փափուկը, ծանրն ու թեթևը:

Այս հինգ բաներից բացի այլ բան չկա:

Մարդու մարմինը նման է պարսպավոր քաղաքի, որ ունի հինգ դուռ. մի դուռը աչքերն են, մեկը՝ ականջները, մեկը՝ քիթը, մեկը՝ բերանը, մեկը՝ ձեռքն ու ոտքը, որ շոշափելիքն են: Ամեն տեսակ չարն ու բարին այս հինգ դռներից են ելումուտանում: Հոգին այս քաղաքի բնակիչն է: Մարդու բարի գործերը այս քաղաքի գանձը, ակնեղենն ու գոհարն են: Միտքը թագավորն է և այս գանձերի պահպանը: Սատանան և դեերը չար կամքն են, որ գրավում են քաղաքը, և գողանում գանձը, որ հոգու բարիքն է: Եվ դու միտքդ վեր պահիր ու մեղքի խրատին ականջ մի՛ կախիր: Եթե մեր առաջին մարդը՝ Եվան օձի խրատին ականջ չդներ՝ չէր խաբվի: Ինչ օտար բան, որ տեսնես՝ աչքերովդ մի՛ ցանկացիր: Եթե աչքով չտեսներ պտուղը և չցանկանար նրա գեղեցկությունը՝ չէր ուտի: Ձեռքովդ մի՛ խաբվիր մեղքին: Եթե ձեռքերով պտուղը չչոշափեր, չէր ցանկանա և չէր ուտի: Բերանդ ավելորդ կերուխուսի և լեզուդ ունայն խոսքերի մի՛ տուր: Եթե առաջին մարդը բերանը պահեր՝ փառքից չէր զրկվի ու չէր արտաքսվի դրախտից և դատապարտություն ու անեծքի տակ ընկնի:

Հարկավոր է իմանալ, որ սատանան օձն է, որ խաբեց Եվային և այժմ էլ ջանում է բոլոր մարդկանց խաբել այս հինգ դռների միջով: Իմաստուն է այն մարդը, ով իր ականջները փակում է [Սուրբ] Գրքի խրատով, աչքը՝ չար հայացքից, լեզուն՝ չար խոսքից, ձեռքը՝ զրկելուց, ոտքը՝ պիղծ ճանապարհ գնալուց, այլև [հանձն է առնում] լեզվով բարին խոսել, ձեռքով ողորմություն անել և աղոթքի մեջ ժրջան

լինել: Այսպես է պահվում մեր քաղաքը և գանձն էլ անվնաս մնում թշնամուց:

Չորս բան կա, որ մարդուն գերծ է պահում մեղքերից և գլուխն է ամեն տեսակ բարիքի: Թող մարդ իր մեղքերը բուլորովին չմոռանա և այլոց մեղքերի համար ամենևին չհոգա, և ինչ էլ որ անի, թող իր մոտ Աստծուն տեսնի, և մահվան օրն իր մտքում պահի: Ով իր մեղքերը չի մոռանում, խոնարհ է մնում և այլոց մեղքերը չի քննում, Աստված չի հիշում նրա մեղքերը: Ով Աստծուն տեսնում է իր մոտ, ամենևին մեղք չի գործում: Ով մահվան մասին է մտածում, նա այս կյանքի համար շատ հոգ չի անում:

Հարկավոր է չորս բաներից վախենալ և մեղք չգործել. մեկ այն օրից, երբ հոգեվարք է լինում, երբ Աստծո առջև են տանում և գործերի պատասխանն են պահանջում, մեկ էլ այն, ովքեր մեզանից առաջ են մեռել ու գնացել և տրտմում են մեր մեղքերի համար:

Չորս բան կա դժվար, որ առանց մեր կամքի է լինում. հիվանդությունը, ծերությունը, մահվան օրը և Աստծո դատաստանին գնալը: Այս չորս բաները՝ կամենանք թե ոչ, լինելու են: Այնպես պետք է ջանալ, որ քանի դեռ մեր կամքի մեջ ենք, բարին գործենք:

Իմաստության խրատ եմ գրում քեզ. տես մարդու ստեղծումը, թե ի՞նչ իմաստությամբ է Աստված արարել. մարմնի թանձր մսով արյունն է պահում, արյամբ պահում է շունչը, և շնչով հոգին է պահում և հոգով՝ միտքը: Սրանցով նրանք շարահարված ու միավորված են՝ միտքը դեպ վեր՝ Աստված և

մարմինը դեպ վար՝ երկիր: Երբ միտքը Աստծուն է նայում և Աստծո հրամանների ետևից է գնում, հոգին, շունչը, արյունն ու մարմինը իր հետ է տանում և երկնային դարձնում, թեպես մարմնով երկրում է, բայց մտքով և հոգով երկնքում է: Իսկ եթե մարմնով երկրի ետևից գնա, նա մարմինը, արյունը, շունչը, հոգին և միտքը դեպ երկիր կքաշի և անասունի պես երկրավոր կդառնա: Ինչպես օրինակ հայելին երկու երես ունի, որի մեկ երեսը վեր է և մեկն էլ՝ վար, այդպես էլ մարդն իր հոգով նման է հոգեղեններին և մարմնով՝ հողեղեններին. ում կողմը որ հակվում է՝ նրան է նմանվում:

Եթե մարդ իմաստուն է՝ այս անցավոր կյանքի պատճառով չի ընկնի երկնքից երկիր և նմանվի անասուններին:

Աստված մարդուն արարել է իբրև հոգի և մարմին. մարդու գանձն ու հարստությունն իր մարմնի ծառան է, մարմինը հոգու ծառան է և միտքը բոլորի թագավորն է: [Եթե միտքը] չափից ավելի է հոգում մարմնի պետքերի մասին՝ հոգին չի հաղթում և [ինքն] իրեն ծառա է դարձնում: Եթե մարմինը ուժեղացնես շատ ուտելով և խմելով ու շքեղ հանդերձանքներով զարդարվես և [մարմինդ] հանգչեցնես փափուկ անկողնու մեջ, ուրեմն հոգիդ ծառա տվեցիր մարմնիդ:

Մարդու հոգին երեք մաս ունի. մեկը բանականությունն է, մեկը՝ զայրույթը, մեկը՝ ցանկությունը: Ինչ որ սիրի բանակա-նությունը, զայրույթը և ցանկությունը պետք է արդար հավասարակշռել: Եթե միտքը, որ իմաստություն է, առավել խորն է լինում, նենգավոր է, եթե պակաս է լինում, նա անմիտ և տխմար է, եթե հավասար է՝ արդար և իմաստուն է: Նույն-

պես և զայրույթը՝ եթե առավել ու խիստ է, ապա հանդուգն ու լիրբ է, եթե պակաս է՝ վախկոտ ու թույլ, եթե միջակ է՝ արի, ժիր և քաջասիրտ: Այդպես էլ ցանկությունն է, եթե մարմնավոր բաների շատ ցանկանա՝ երկրասեր ու մեղսասեր է, եթե բոլոր ցանկությունները հոգևորին ուղղի՝ մարմինը սպանող է, իսկ եթե հավասարակշռությամբ միջինը պահպանի, ապա մարմինն իր չափի մեջ կմնա և հոգին՝ իր փառքի մեջ, ուրեմն նա շատ բարի է:

Այս երեք բաները անհրաժեշտ են մարդու հոգուն. արդարությունը, ազատությունը, մեծահոգությունը: Արդարությունն այն է, երբ Աստծո օրենքը պահանջվում է իր տեղում և մարդկայնության սահմանն՝ իր, հոգին պահում է սրբությամբ և մարմինը՝ չափավոր, մեծարում է բոլորի արժանիքը, իր խոսքը ճշմարիտ է լինում և ինչ խոստանում է՝ կատարում ի բարին: Ազատ մարդը նա է, ով հարկ եղած դեպքում և ի շահ հոգու իր ինչքերից հոժարությամբ է տալիս, և օգնական է լինում զրկվածներին, և չի վերցնում այն տեղերից, որ պատեհ է: Եվ նրա երկրավոր ընթացքն է ազատ ասվում, ում հանդերձանքը պայծառ է և տունը՝ գեղեցիկ շինություն և տան սպասքեղենը՝ պատվական և բոլոր առարկաներն իր հալալ աշխատանքի արդյունքն են:

Նույնպես անհրաժեշտ է հոգու պայծառություն, գեղեցկություն և պատվականություն: Եվ մեծահոգի մարդը նա է, ով համբերում է թե՛ հաջողության հանդիպելիս, թե՛ անհաջողության, թե՛ իշխանության տակ գտնվելիս և թե՛ այն դեպքում, երբ հաղթելով թշնամիներին՝ չի հպարտանում և

չի գմայլվում իր բանականությամբ, և ոչ էլ աղքատանալիս, տկարանալիս կամ պարտվելիս ավելի է տրտմում: Ով այս ճանապարհը պահի՝ մեծահոգի է:

Չորս բան կա այս աշխարհում, որ մարդուն պատիվ է բերում. պատկերի գեղեցկությունը, անձի զորությունը, որ ուժ է, ունեցվածքի հպարտությունը և խելքի իմաստությունը: Այս չորսից երեքը փոփոխական են. մի պահ լավ և մի պահ՝ վատ, մինչդեռ խելքի իմաստությունը լավ է, քանզի այն երեքը անցավոր են և իմաստությունն՝ անմահ: Եվ ով իմաստուն է՝ բարեգործ ու աստվածապաշտ է: Այն երեք բաները գեղեցկությունը, զորությունը, հարստությունը մարդու ձեռքին թուր են. թե կամենա իրեն կսպանի, թե կամենա՝ իր չար կամքը: Ով գեղեցկությունը շողախի մեղքով և զորությունը ի չարս գործադրի և հարստությամբ անիրավություն անի՝ նա իր սրով իրեն է սպանում: Իսկ եթե գեղեցկությունն Աստծուն է տալիս և անշողախ պահում, զորությունն ի բարին գործադրում և հարստությունը արդարությամբ է վայելում և Աստծուն ու կարոտյալներին է ընծայում արժանին՝ նա սպանում է իր չար կամքը՝ սատանային, որ հակառակ է բարուն: Աստված մարդուն հարստություն և պարոնություն է տալիս չորս բանի պատճառով. մեկ՝ եթե բարի մարդ է Աստված ընտրում է նրան և նրա ձեռքը հարստություն է տալիս, որպեսզի կարոտյալներին, սուրբերին, այրիներին և անտերներին հոր նման լինի, և այս երկրի շինությանը պիտանի դարձնի և այս կյանքով այն կյանքը շահի: Ինչպես օրինակ թագավորներն ընտրում են լավ մարդուն և արժանիորեն նրան

[Հարստութիւնն են տալիս]: Եվ Աստված չար մարդուն այն պատճառով է Հարստութիւնն տալիս, որպեսզի դատաստանի օրը պատասխան չունենա տալու թե՛ իմ ձեռքս ի՞նչ էիր տվել, որ ես կարողանայի բարիք գործել: Աստված նաև այն պատճառով է վատ մարդուն Հարստութիւնն տալիս, որպեսզի նա իրապես Աստծուն դառնա և ասի, թե՛ [Աստված] ինձ այս Հարստութիւնը տվեց, ես նրա պատվիրանը կպահեմ, որպեսզի է՛լ ավելի տա այս կյանքում, իսկ այնտեղ՝ Հավիտենական կյանք, ինչպես մեկը, որ տխմար երեսային իրեն վարժեցնելու և սովորեցնելու համար [նրան հրապուրում է] խնձորով և այլ հաճելի բաներով: Եվ մյուսն այն է, երբ մարդու բոլոր գործերը չար են, բայց Հնարավորութիւն է ունենում մի բարի գործ կատարել: Աստված նրան Հարստութիւնն է տալիս այս կյանքում, որպեսզի բարիքը հատուցի և այն կյանքում էլ բարիքի ակնկալութիւնն չունենա, ինչպես Ավետարանում է գրված Հարուստի և Ղազարոսի մասին:

Եվ աղքատութիւնը չորս բանի պատճառով է լինում. մեկն այն է, որ Աստված [մարդկանց] կեսին աղքատ է ստեղծել, որպեսզի արքայութիւնը հարուստներին վաճառեն, որովհետև ով աղքատին ողորմի՝ Աստված այն իրեն փոխ տված կհամարի և ինքը կհատուցի, որ ողորմած է: Եվ մեկն այն է, որ ինչպես ոսկին են կրակով փորձում՝ լավ է, թե՞ վատ, այդպես էլ Աստված աղքատութեամբ է փորձում մարդուն՝ լավ է, թե՞ վատ: Եթե համբերող է Աստված նրան այն կյանքում իր երկնային փառքն է տալիս, իսկ այս կյանքում էլ մարդկանց բարի օրինակ է լինում: Մեկն այն է, երբ Աստված

աղքատացնում է Հարստութիւնն ունեցող լավ մարդուն, և դրանով փորձում է՝ Հարստութեան համար է Աստծուն սիրում, թե՞ աղքատութեան մեջ ևս նա նույնն է. Աստված ցույց է տալիս այդպիսի մարդու բարեգործութիւնը, ինչպես Հոբելնը: Եվ մյուսն այն է, երբ մեկն աղքատ է ու նրա բոլոր գործերը բարի են, բայց մի մեղք է գործել, նա այն մի մեղքի պատճառով չարչարում է [աղքատին], որպեսզի այն մի մեղքը քափվի ու երբ տեղափոխվի այն կյանք՝ նա սուրբ և արդար լինի և ժառանգի երկնային արքայութիւն:

Աստված Աղամի որդիներին երկու բան ավելի է տվել, որ ո՛չ հրեշտակները երկնքում ունեն և ո՛չ էլ երկրի այլ արարածները, այլ՝ միայն մարդը, որ ինչ մեղք գործի, երբ դարձի գա և ապաշխարի, թողութիւն կգտնի: Եվ մյուսն այն է, որ երբ մեռնում է, հարութիւնն է առնում մեկ այլ վայրում: Եթե հրեշտակները մեղք գործեն, այլևս թողութիւն չկա նրանց համար, ինչպես սատանային, որին թողութիւն չեղավ: Այն պատճառով թողութիւնն չկա նրանց, որ մարմին չունեն, որպեսզի ապաշխարեն: Եվ այս աշխարհում (բացի մարդուց) ինչ կենդանի որ կա՝ մահից հետո հարութիւնն չունի: Բայց մարդը մեղքերից թողութիւնն է գտնում մարմնի տկարութեան և մեռելութիւնից հարութիւնն է առնում հոգու անմահութեան պատճառով:

Երբ Աստված Աղամին ստեղծեց և դրախտում դրեց, քանի դեռ Աստծո հրամանները պահում էր, ո՛չ մարմնում հիվանդութիւնն ուներ և ո՛չ էլ հոգում՝ մեղք: Ու երբ Աստծո հրամանները զանց առավ, մեղքը տեղ գտավ նրա հոգում: Եվ երբ դրախտից դուրս եկավ, նրա մարմնում տեղ գտավ հի-

վանդուկթյունը, իսկ հետո՝ մահը: Բայց ողորմածն Աստված հոգու և մարմնի համար դեղ սահմանեց: Ինչ ծաղիկ որ կա, Աստված յուրաքանչյուրին մի գորուկթյուն է տվել, որը ցավի մի դեղ է, եթե մարմնի համար այդ բոլորը անհրաժեշտ դեղ և բաժակ է, որովհետև ով բժշկին ասում է իր ցավը, նա գըտնում է դեղը, ապա հոգու համար, որ Աստծո պատկերն է, ինչպե՞ս կարող է դեղ կամ բժիշկ չլինել: Մեղավոր մարդը հիվանդի նման է, և գիտուն քահանան լավ բժիշկ է, մեղավորը խոստովանում է մեղքը, իսկ քահանան ասում է դեղը: Երբ քահանայի խրատն ընդունեն, Աստված կների մեղքը: Եվ քեզ մի օրինակ ասեմ. եթե բժիշկն ինքը հիվանդ է, բայց գիտուն, նա շատ հիվանդների է ճար անում, նույնպես քահանան, եթե մեղավոր է, բայց՝ գիտուն, դեղը, որ խոսում է, շատերին օգտակար է: Ով բժշկին իր բոլոր ցավերը չասի, ճար չի գտնի, ինչպես ամեն ոք եթե չխոստովանի իր մեղքերը թողուկթյուն չի գտնի: Ով բժշկին չլսի և պահքի մեջ չմնա՝ ցավը կշատանա, ով խոստովանահորը չլսի և մեղքերից չկտրվի՝ մեղքերը կշատանան:

Եթե մարդու բովանդակ պատկերը գեղեցիկ լինի, բայց միայն մեկ պակասուկթյուն ունենա. կամ աչքը կամ ականջը, կամ ձեռքը կամ էլ այլ անդամը՝ նրան կկանչեն այդ [թերի] անդամի անունով՝ կամ կույր կանվանեն, կամ՝ խուլ, կամ կաղ, թեկուզ [մնացյալ] բոլոր անդամները գեղեցիկ լինեն: Ճիշտ այդպես էլ հոգին է. եթե ամեն տեսակ մեղքերից գերծ լինի, բայց մի մեղքից իրեն [հեռու] չպահի՝ նրան այդ մեղքի անունով կկոչեն՝ կամ գող, կամ գրկող, կամ շնացող կամ ինչ

որ է. այդ միակ մեղքը նրա բարի անունն է սևացնում, ինչպես մի փոքր օշինդրը շատ մեղրի համն է ավերում և մի փոքր քացախը ամբողջ կարասն է քացախ դարձնում:

Մարդ ինչ թագավորի աշխարհում, որ ապրի այդ թագավորի հրամանների տակ է, բայց եթե ցանկանա թագավորի երեսը տեսնել՝ նրա պալատը կգնա: Նույնպես մարդ բովանդակ աշխարհում որտեղ էլ որ լինի կամ աղոթք անի՝ Աստծո իշխանուկթյան տակ է: Բայց եթե ցանկանա Աստծո երեսը տեսնել՝ նրա պալատը կգնա՝ Աստծո տունը, որ եկեղեցին է:

Մարդ, որ անարգում է իր պարոնին կամ իր թագավորին՝ մահապատժի է ենթարկվում: Եվ ով անարգում է Աստծուն, ստուգապես մեռնում է, կամ այս կյանքում է պատուհասի ենթարկվում կամ էլ՝ այն: Ո՞վ է Աստծուն անարգում, եթե ոչ հայհոյողը:

Մեկ այգում տեսակ-տեսակ ծառեր են աճում, որոնք նույն հողի վրա են տնկված և նույն ջրով են սնվում, բայց այգու տերը յուրաքանչյուր ծառից նրա պտուղն է ուզում: Այդպիսի այգի է նաև Աստծո եկեղեցին, և բոլոր քրիստոնյաները ծառեր են, որոնք ավագանի մեջ միևնույն հոգին են ստացել, բայց Աստված զանազան պտուղ է ականկալում նրանցից. այլ պտուղ՝ քահանայից, այլ՝ թագավորից, այլ՝ իշխանից, այլ՝ դատավորից: Իշխանի և դատավորի պտուղն այս է՝ դատաստանն անկաշառ անել և հարուստին աշառու չլինել, այլ ճշմարտուկթյունը ճշմարտուկթյամբ կատարել:

Սուրբ մարդկանց աղոթքն ու ճշմարիտ դատաստանը շեն են պահում երկիրը: Երբ երկուսը բացակայում են, երկիրը

կործանվում է:

Եթե ցանկանաք քաղաքի դատավոր ընտրել, այնպիսի մարդու ընտրեք, որի խելքը նրա իշխանն է, ով իր կյանքը ճիշտ է վարում ու գարգարում իր բարքը: Այնպիսի մարդը կարող է մի ամբողջ տան շահ բերել: Եվ ով կարող է մի տուն կարգուկանոնի մեջ պահել, [կառավարել] կնոջը, որդիներին, մշակներին, ծառաներին, այն մարդը մի քաղաք էլ կարող է կարգուկանոնի մեջ պահել:

Սելացիները լավ մարդուն երեք բանով են ճանաչում՝ երեսի կերպարանքով, լեզվի խոսքով և գործով: Սկզբից երեսին են նայում, որովհետև երեսը սրտի հայելին է: Դրանից հետո խոսքն են ճանաչում, որ սրտից է գալիս և ապա գործերի մասին խորհում՝ թե ինչ մարդկանց հետ որ նա շրջում է նրանց գործն է սովորում: Սրանով է ճանաչվում վատն ու լավը:

Չորս բանով է մարդու տունը շեն մնում: Երբ հավատարիմ է իր օրինական կնոջ հանդեպ, սեր ունի որդիների նկատմամբ և [նրանց] սնուցում է Աստծո երկյուղով, իր հրամանները պահպանում է ճորտերի ու ծառաների հանդեպ և իր տան երնուժուտը չափավոր է: Եվ ելն ու մուտը պետք է համապատասխանեն իրար: Եթե մուտքը շատ է և ելքը՝ քիչ, ուրեմն խոզ ու տմարդ է, եթե մուտքը քիչ է, իսկ ելքը՝ շատ, ուրեմն անառակ է ու վայրիվերո մսխող: Մինչդեռ երնուժուտը հավասար պահելը խելացի մարդու գործ է [...]:



ՀԱՎԵԼՎԱԾ

Ս. ՀՈՎՀԱՆՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

ԵՍԱՅՈՒ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ

«Ի՞մ դատաստանը հեթանոսների լույսն է» (ԾԱ 4): Սա իսկ լուսավորեց նրանց. իմանալ դատաստանը և ի մտի ունենալ իրավունքը: Տեսնո՞ւմ ես դատաստանի շահը, քանզի խավարը փախավ, երկյուղը մերժվեց, ցանկության կարիքը փախստական եղավ: Ինչպես. երբ դատավոր է երևան գալիս, գողերին, ավազակներին, գերեզմանակրկիտներին և ամեն տեսակ չարագործների հալածում է, այնպես էլ մտքի ընտրությունը. երբ կրկին վերստանում է իր զորությունը և, բարձրանալով, նստում ատյանի աթոռին, ամեն վնասակար (բաները) հալածում է, և ամենայն օգտակարը՝ համբուլյրով ընտանի դարձնում: Կամ թե. չի՞ տեսնվել մի քաղաք, ուր դատավորը նստած է ատյանում. ինչ ահի մեջ կլինի քաղաքը, (ահի մեջ կլինեն) ոչ միայն վնասարարները, այլև նրանք, որոնք խղճի մտոք չեն (առաջնորդվում): Նույնպես և միտքը. երբ առողջ է, ինչպես դատավոր, բարձրանում ու նստում է

ատյանի աթոռին, ապա, այնուհետ, ահն ու երկյուզը, որ մինչ այդ անգործութեան էին մատնված, շտապում են իրենց գործին: Եվ ոչ միայն չար խորհուրդներն են հանդիմանվում, այլև մտքի բարքը, որ վնասակար չէ, դողում և սարսում է: Ինչպես, օրինակ, երբ Աստված է դատում, աստղերն անգամ մաքուր չեն նրա առջև: Նույնպես և միտքը, երբ ինքն իրեն դատավոր է լինում և, պատշաճ ամբաստանություններ, հանցանքի հատուցումն է պահանջում, չկա մի բան, որ կարողանա նրան արդարացնել:

Եվ հիրավի այդպես է կամենում, որպեսզի մեր անձերը դատապարտենք: Սակայն չհամարձակվես և չհոժարես մտքի խիղճը վրդովել, և քննել քո բովանդակ կյանքը, որ, բազում մեղքեր գտնելով, հալածվես: Եվ գիտես, որ շատերն իսկ ախտանում են այսպիսի ախտով, նույնիսկ իմ (օրինակով) գիտես նաև այլոց. քանզի ես իսկ բազում անգամ կամեցա մտածել իմ կենաց վարքի մասին և անաչառություններ քննել այն, բայց չհամարձակվեցի, որպեսզի բազում տրտմությունների մեջ չընկղմվի միտքս: Քանզի, եթե կարողանանք հարց ու փորձով վանել մեղքերը, և նույնիսկ ամբողջովին ջնջել մեղքերի հիշատակը, հիրավի (չատերը) կձգտեն դրան: Իսկ եթե մերթ խոշտանգենք մեր միտքը և մերթ ծուլանանք՝ ի՞նչ կչահենք գրվածներին:

Եվ ինչ օգուտ ունի, ասում են, մտածել, բայց առավել տրտմություն չահել, քանզի այստեղ մեր միտքն ենք ուտում և այնտեղ՝ պատիժ կրում: Սակայն ասում եմ, որ օգուտ կա տրտմությունից ևս, քանզի, եթե մտածելով տատամսես,

անվճռական կլինես մյուս անգամ այդպիսի բաներ մտաբերել: Եվ ոչ այնչափ միայն. այլև Աստծո ևս կաղաչես հավանություն տալ ըստ այն (խոսքի), թե՛ «Խոստովանիւր դու նախ քո անօրինութիւննը, որպեսզի արդարանաս» (ԽԳ 26): Քանզի եթե ասելը (խոստովանելը) արդարացնում է, որչափ ավելի՞ տատամսելը: Ոչ մի բան այնքան չի օգնում հանցավորին, որքան, երբ նա մշտապես աչքի առջև և մտքում իր մեղքն ունի և հաճախ դողում ու անձն է խոշտանգում. ոչ մի բան մեզ Աստծո հետ այնպես շուտ չի հաշտեցնում. ոչ պահքը, ոչ գետնատարած անկողինը, ոչ հսկումը, և ոչ էլ նման բաները. սրա ապացույցը (Ս.) Գիրքն է: «Ասացի, ասում է, կատամեմ մեղքերս և դու կթողնես իմ բոլոր մեղքերի ամբարշտություննը»: «Ասացի» ասում է. տեսնո՞ւմ ես ինչ զորություն կա նրանում. թե՛ «Ասա դու նախ քո անօրինութիւննը, որպեսզի արդարանաս» (ԽԳ 26): Մի՞թե, երբ դու ինքդ չես կամենում հիշեցնել (մեղքերիդ մասին)՝ Աստված չգիտի՞, մի՞թե (նա) չունի ամենագետ գիտություն, որով (մեր) բոլոր գործերը գրված ունի իբրև մի գիրք:

Այլ ասում են, գեթ այս աշխարհի թշնամանքը չչահենք, որպեսզի ծաղր ու ծանակ չլինենք: Բայց այսպես խորհելով ոչ այստեղի թշնամանքը կարող ես խափանել և ոչ էլ այնտեղի շահից օգտվել:

Վա՛յ ոչ միայն նրան, որ ամբաստանում է իր Արարչին, այլև՝ նրան, ով հոխորտում և իրավունք է վերապահում իրեն (Տիրոջից) կատարվելիք բաների մասին պահանջել: Ես քեզ ստեղծեցի, և դու ինձանից իրավո՞ւնք ես պահանջում. քան-

գի, եթե չկամենայի, նույնիսկ չէիր էլ լինի: Մի՞թե կարող է կավը բրուտին ասել. ի՞նչ ես անում, ինչու չես գործում, և գործն էլ, թե՛ ձեռքեր չունե՞ս դու: Սա ասում է նրանց, որ բամբասում են Աստծո երկայնամտությունը, թե՛ Աստծուն պետք էր այս անել կամ այս ինչը պետք չէր: Առավել ամբարշտագույն բան չկա, քան օրենքի (տակ) դնել դատավորին և ամենագործ բնությունը մարդկային (սահմանափակ) մտքով բամբասել: Թեպետև չկա այդպիսի օրինակ, քանի որ բրուտը ոչ թե կավի նյութի ստեղծողն է, այլ, (իր) կարողության չափ, միայն ստեղծվածի (կերպավորողը): Իսկ Աստված ոչ միայն քո պատկերի Արարիչն է, այլև՝ այն նյութի, որից ստեղծվել ես: Կավը ոչ թե իր գոյությունը, այլ բրուտից իր կերպարանքն է միայն ստանում, և ամենևին չի հակառակում ու չի ընդդիմակայում (նրան). իսկ դու, որ ամբողջապես Աստծով կաս, նստած հաշիվ ես պահանջում նրանից: Կավը դիմադարձ չի լինում, քանզի անբարբառ է, իսկ դու դիմադարձ ես լինում ինչի՞ շնորհիվ. այն բանի, որ խոսունա՞կ ես. պարզևսուրբ պարզևատուր դեմ ես կռվում: Ինչո՞ւ խորամուխ չես պատճառի մեջ, որպեսզի զերծ մնաս ընդդիմակայումից. քեզ արարել է որպես խոսուն, իմաստուն ոչ թե (այն բանի համար, որպեսզի) առավելությամբ դիմադարձ լինես Տիրոջը, այլ՝ որպեսզի նրան փառավորես և նրանից օրհնվես, ոչ թե քննես և հարց ու փորձ անես: Լեզու ես առել փառատրության համար, միտք ես առել գոհության և հավատքի համար: Կավն անխոս է. քանզի եթե ճանաչեիր Արարչին, թերևս կիմանայիր, որ կավից ավելի անարգա-

գույն և անձայնական ես:

Եվ տես, թե ինչ պատե՞հ ժամանակի է ասում, երբ արձակվելու էր (գերությունից), որպեսզի չկարծի, թե գործը չի կարող ավարտի հասցնել, և այս պատճառով այնպիսի խոսքեր է մեջբերում: Եվ կարծում է, թե վշտերի մեջ է թողնված, և (Աստված) վշտերից չկարողացավ փրկել (իրեն). այդպիսի խորհուրդներով է խաբվում: Իսկ նա, ահավասիկ, փրկության ժամին լուեցնում է (նրանց), որպեսզի իմանան, որ (դեպքերի) վայրիվերո ընթացքը (Աստծո) անքնին և անճառ իմաստության գործն էր, և պետք չէ բամբասել ու մեղադիր լինել և կամ հետագոտել և քննության առնել:

Եվ միայն այսչափ չէ ինչպես կավի և բրուտի միջև, Աստծո և քո միջև եղած տարբերությունը: Քանզի բրուտը կավի ստեղծողը չէ, այլ՝ միայն (նրա) կերպարանքի: Եվ նրանք խիստ մոտ են իրար, քանզի կավը և բրուտն արարած են, իսկ քո Արարիչը անարար է և դու՝ արարած:

* * *

«Ամբարիշտները խաղաղություն (ուրախություն) չունեն» (ԽԼ 21): Եվ հանրահայտ է, որ չունեն անվախճան, անթառամ և ճշմարիտ ուրախություն, քանզի ինչպես Աստված անվախճան է, այնպես էլ՝ Նրա (տված) ուրախությունը, որ անեղծ է, միշտ բխում է, միշտ ծաղկում և փթթում: Այնպիսի ուրախությունից անմասն են ամբարիշտները. չասաց թե՛ «ուրախ չեն», այլ թե՛ չունեն իսկական ուրախություն: Ինչպես օրինակ, երբ աղքատներից ոմանք ասում են, թե նրանք

չեն կարող հարստանալ, քանզի չկա հնար: Քանի որ մարդիկ, որ մշտապես մեղքի մեջ են և, խղճի չարչրկումով, միշտ ահ ու սարսափի մեջ, հարատևորեն մահվան մահով են մեռնում, և մանավանդ պետք է այն նույնիսկ մահ անվանել, քանզի առավել դժնդակ է, քան մահը: Մահը չարիքի լուծումն է, որ, կապված լինելով մեզ, հոգին ձերբազատում է մարմնի շղթաներից, որովհետև, երբ արձակում է նրան, նաև հոգսերն է դրանով փարատում: Անօրեն վարքը ևս աղետների պատճառ է, քանզի երկարեցնում և առավել սաստկորեն բորբոքում է ցավերը, յուրաքանչյուր ոք իր կապանքների մեջ է թակարդվում, քանզի թակարդումը չար ընթացքից է լինում:

Կան և այլ, առանց մեղքի իսկ, վշտագին կյանքեր, կերակրվելու հոգսեր, հիվանդութայն տրտմություններ, վնասներ, անկումներ, զրպարտություններ, նենգություններ, ժամանակին և անժամանակ տխրություններ և այսպիսի այլևայլ (հոգսեր), իսկ երբ մեղքը ևս, իբրև դժնդակ և անհամբույր գազան, կանգնում է սրանց կողքին, այլևս չի լինում մխիթարություն: Տե՛ս, թե ինչպես էր շրջում Կայենը՝ տատանվելով և երերալով: Եվ արդ, անհանձարների՞ն է հարկ ճառել, անհույսների՞ն, որ թեպետ մարդիկ են, սակայն քարերից ավելի անզգա են, որ միտք ունեն, բայց չեն վայելում միտքը: Քանզի չարիքի խորխորատն են միշտ մղում և գցում իրենք իրենց անձերը, և, մոլորության մեջ գլորված ընկած, նրանց թվում է, թե կանգուն են: Այդպիսիների մասին ասվում է. «Ուրախություն չունեն ամբարիշտները»:

Եվ արդարև չունեն, քանզի ցավով և տառապանքով է նրանց կյանքը՝ թե՛ մեկուսի լինելիս և թե՛ ուրիշների պատժելը տեսնելիս. այլոց պատժի մեջ իրենց անձերին սպառնացող աղետն են տեսնում: Ինչպես, օրինակ, առաքինությունը հետամուտ եղողները, երբ ինչ որ բարի (լուր) են լսում, ուրախանում են, իսկ նրանք Ս. Գիրքը չեն կարող ունկնդրել, քանզի անկար են իրենց պատուհասի մասին լսել. թեպետ Ս. Գիրքը հայտնապես չի պատժում չարը, սակայն, երբ նա սպառնում է հանցավորներին, և նրանք լսում են այս մասին, իրենց միտքն ու մարմինն են ուտում. և թեպետ հականե հանվանե չի պատժում, բայց և, ընդհանուրին սպառնալով, ձաղում է նրանց: Իսկ հանցավորը երբ լսում է սրա մասին, ի մտի առնելով վերքը, գնում է: Քանզի խոցված միտք (կորցնում է իր հանցավոր) վճռականությունը և դա տևում է մի որոշ ժամանակ, ու խիղճը հանցանքի հաշիվն է պահանջում, երբ անաչառությամբ է խորհում: Իսկ երբ մեղավորին եկեղեցի և թատրոն, հարսանիք և կամ զվարճավայր տանենք, և չմխիթարվի, ինչպե՞ս վարվենք: Ինչպես, օրինակ, չարախտավոր հիվանդներին տհաճ է, երբ նրանց տանում ենք աղբյուրների, գետերի կամ ճահիճների մոտ, (որով) առավել ուժգին է այրվում որովայնը, քանզի այդ ախտը իրենց որովայնում է: Իսկ եթե մահվան մասին նրանց ասես, թե երբ են մեռնելու, այդ ևս առավել մեծ աղետների և մեծ չարիքի (տեղիք կտա): Երբ հարսանիքից դուրս գան, տանջանքի պիտի մատնվեն և պատժելու հրաման պիտի (տրվի նրանց): Իսկ արդ. այնտեղ չե՞ն լինելու արդյոք առավել մեծ

ցավեր, սահմուկելի արհավիրքներ և սարսափներ:

«Ամբարիչտներն ուրախությունն չունեն» ասում է Տերը: Երբ Աստված է ասում, այլևս թերահավատ մի եղիր. վճռեց, թե «չունենն ուրախությունն». սրա մեջ, եղածից ավելի, ուրիշ բան մի տես: Երբ տեսնես ջերմով բռնված ոմանց, որոնց առջև դրված են պես-պես ըմպելիքներով կամ զովացուցիչ օշարակով լի գավաթներ և բաժակներ, պես-պես կերակուրներով և համադամ խորտիկներով ծանրաբեռն սեղաններ, մի՞թե լավ կհամարես ախտացյալ (հիվանդի) վիճակը: Թեպետև ճաշակեն խորտիկներ, այնժամ է՛լ ավելի կտանջվեն, քանզի կերակուրը սաստկացնում է ջերմության տապը: Նույնպես և դու, երբ կտեսնես մի մեղավորի, որ մեծարվում է հացկատակների կողմից, փառաբանվում իրեն հաճոյացող և շողոքորթող սպասավորներից: Երբեք երանի մի տուր բազմախորտիկ սեղաններ վայելողներին, տեսակ-տեսակ յուզերով օծվածներին, պես-պես զարդերով պաճուճվածներին, այլ սգա, լաց և հոգոց հանիր, քանզի դրանք ոչ այլ ինչ են, բայց եթե մեղքերով բորբոքված հրո կերակուր: Քանզի այն է՛լ ավելի է մեծացնում ցավը և հոգիներին պատճառում ծանրությունն ու տաղտուկ, քանի որ հենց դրանով է հարստությունը դառնում խայծ: Եվ, եթե կամենում ես, սրա կողքով հարևանցի չանցնենք: Երբ տեսնես քաղաքների գլխավորներին՝ գեղեցկամարմին, հաղթանդամ, խոր ծերության մեջ՝ զվարճացող, որդիներով, թոռներով՝ բերկրող, ուրախալից խրախճանքի մեջ, առանց տրտմության՝ անհոգ, երջանկության մեջ՝ երանելի, այնժամ նրանց է՛լ ավելի լալու և արտասուքի արժանի համարիր. որովհետև (նրանց)

հոգիները ներքին մեղքերի հրով են բորբոքվում: Քանզի մեղքերը սովոր են (անհոգ) բարեկեցության մեջ աճել և ցավերով ու վշտերով՝ նվազել: Իսկ երբ մեղավոր է և անհոգ ու հեշտական կյանքի մեջ՝ այն հավելում է (մեղքի) ցավերը: Եվ շատերին գիտեմ, որ անխոս անասունների նման այսպիսի կյանքի են ձգտում և ասում, թե՛ «կամենում եմ նույն այդ կյանքով ապրել և նույն ախտով ախտանալ»: Եվ այս առավել տաժանելի է, որովհետև իրենց ցավերն իսկ չեն զգում:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այս թուղթ-խրատը հրատարակվել է Ս. Հովհան Մանդակունի կաթողիկոսի (480-499 թթ) անվամբ հայտնի ճառերի շարքում՝ «Յաղագս մխիթարութեան աղքատաց» խորագրով (ճառ Ը), Վենետիկ, Ա տպ. 1836, Բ տպ. 1860:

2 «Երանի անասնոց եւ թռչնոց, որ մնան յարութեան եւ ոչ ակն վախճանին»։ «Հարցաքննութիւնն եզրի մարգարէին ընդ հրեշտակն Տեառն վասն հոգւոց մարդկան», տե՛ս «Անկանոն գիրք Հին Կտակարանաց» Վենետիկ, 1896, էջ 300:

3 «Տեսիլ ենովքայ արդարոյն» տես Անկանոն գիրք Հին Կտակարանաց», Վենետիկ, 1896:

4 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Ա, աշխատ. Վ. Հակոբյանի, Եր., 1964, էջ 182:

5 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ, աշխատ. Վ. Հակոբյանի, Եր., 1971, էջ 102 (ՁԽ):

6 Կանոնագիրք Հայոց, Բ, էջ 126:

7 Կանոնագիրք Հայոց, Բ, էջ 127:

8 Կանոնագիրք Հայոց, Բ, էջ 45:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 4

Ա. ՆԵՐՍԵՍԻ ԵՂՔՈՐՆ ԵՆՈՒՅՆ ԳՐԻԳՈՐԻՍ ՎԿԱՅԱՍԵՐԻ(ԽՐԱՏԸ).....10

Բ. ԵՆՈՒՅՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՍՍԾ ԽՐԱՏԻ ԽՈՍՔԸ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ20

Գ. ԹՈՒՂԹ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ՝ ՄԽԻԹԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 25

Դ. ԽՐԱՏՆԵՐ ՎԱՐՔԻ ԵՎ ԿՅԱՆՔԻ, ՊԱՏԳԱՄՆԵՐ ԵՎ ՔԱՐՈՉ ՀԱՅՀՈՅԱՆՔԻ, ԿԻՐԱԿԻՆ ՀԱՐԳԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԸ՝ ԱՍՎԱԾ ԳՐԻԳՈՐԻՍԻՑ, ՈՐ ՆՐԱՆ ՀԱՅՏՆՎԵԼ ԷՐ ԱՍՏՈՆ ԵՎ ԲՈԼՈՐ ՍՐԲԵՐԻ ԿՈՂՄԻՑ..... 35

Ե. ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑՈՒ ՇԱՀԱՎԵՏ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ48

Զ. ՍՈՒՐԲ ՀԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑՈՒ ԽՐԱՏԸ ՈՒՂՂՎԱԾ ԿՐՈՆԱՎՈՐՆԵՐԻՆ 56

Է. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԸ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՎԱՏԻ ՄԱՍԻՆ 66

Ը. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏԸ՝ ԱՍՏՎԱԾՍԵՆՈՒՆՉ ԳՐՔԵՐԻՑ 75

Թ. ՊԱՄՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔ ԴՃՈՒՔԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ՍՏՈՒՅԳ ԿԱ ԴՃՈՒՔԸ՝ ԱՍՏՈՆ ԵՎ ԲՈԼՈՐ ՍՈՒՐԲԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅԱՄԲ, ԵՎ ԼՈԿ ՍՈՒՏ ՍՊԱՌՆԱԼԻՔ ԶԷ, ԻՆՉՊԵՍ ԿԱՐԾՈՒՄ ԵՆ ՏԳԵՏՆԵՐՆ ՈՒ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ, ԱՍՏՂԱԲԱՇԽՆԵՐԸ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ, ՈՎՔԵՐ ՆԵՌԻ ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏՆԵՐՆ ԵՆ, ՈՐԻ ՄԱՍԻՆ ԵՍ՝ ՄԵՂԱՎՈՐ ՎԱՐԴԱՆՍ ԳՐՈՒՄ ԵՄ ՍՈՒՐԲ ԳՐՔԻՑ, ԵՎ ՀԱՅՏՆՈՒՄ ԶԵՉ82

Ժ. ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԽՐԱՏԸ՝ ԱՍՎԱԾ ԱՌՅՈՒԾ [ԱՆՈՒՆՈՎ] ՊԱՏԱՆՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ93

ԺԱ. ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԱՍՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՀԱՆԱՅԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ 99

ԺԲ. ՆՎԱՍՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐՁՆԿԱՅՈՒ ԽՐԱՏԸ ԲՈԼՈՐ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՆ105

ԺԳ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐՁՆԿԱՅՈՒ ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԵԿԵՂԵՍՑ ԳԱՎԱՌԻ ԻՇԽԱՆՆԵՐԻՆ..... 121

Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ. ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ ԵՍԱՅՈՒ ՄԱՐԳԱՐԵՆՈՒԹՅԱՆ 132

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....141

ՄՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԸ ԽՐԱՏՈՒՄ ԵՆ



Գրիգոր Ավագ Վկայատեր
Հովհաննես Գառնեցի
Գևորգ Սկևռացի
Վարդան Այգեկցի
Հովհաննես Երզնկացի -Պլուզ
Հովհան Ոսկերեբան

Կազմեց, աշխարհաբարի վերածեց
Հակոբ Քյոսեյանը

ԵՐԵՎԱՆ 2003



ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Է ՊԱՏՐԱՍՏՎԵԼ
ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՅ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ



ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝
ՄԵՀՐՈՒԺԱՆ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ԷՂԻԿ ՎԵՐԴՅԱՆԻ



ՄԵԶ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՎ՝
ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՅ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ
375010, ԵՐԵՎԱՆ-10 Փ/Ա 51



« □ □ □ »

ՏՊԱԳՐՎԱԾ Է «ՍՏԱՄՊԱ» ՍՊԸ ՏՊԱԳՐԱՏԱՆԸ ԵՐԵՎԱՆ Հ/Ա. Բ-1, ԲԱՖՅՈՒ 99